



ՄԻՍԵՈՆ ԲԱԲԻՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵԼԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1899 – 1924





PA
24454


ՍԻՄ. ԲԱԲԻՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1899—1924

A
II
24252

ՍԻՄ. ՀԱՄԱԼԹԱՆԻ ԽՄԻԱԳՐՈՒԹՅԱՄԻ ՈՒՆԵՐԱԾԱԿԱՆՈՎ



1894-1895

1894-1895

1894-1895

1894-1895

1894-1895

ՍԻՄ. ՀԱՄԱԼՅԱՆ

«ԾԱՆՈԹ ԱՆԾԱՆՈԹԸ»

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿՏ

ԽՈՐՀԱՆՈՐԴԱՆԻ ԳՐԱՆԻՇԱՆ

ԳՐԱՆԻՇԱՆԻ ԶԱՊԱՆԱՆ



(ՀԱՄԱՌՈՑ ԱԿՆԱՐԿ)

Չնայած իր քսանհինգամյա բավականին բեղմնավոր ու արդյունավետ գրական գործունեությունը, Սիմ. Բաբելյանը գրեթե անծանոթ անուն է մեր ընթերցող հասարակության լայն շրջանների համար. ավելին կասեմ՝ նույնիսկ մեր գրականագետների յեվ գրականություն պատմագիրների համար նա յեղել է մինչև ռուսամենայով դեպքում վոչ ավելի, քան մի «ծանոթ անծանոթ»։ Այդ, առաջին հայացքից միանգամայն անհասկանալի ու առնվազն տարորինակ յերեվույթը ունի իր բնական պատճառները։ Ամենից առաջ դա բացատրվում է նրանով, Վոր Սիմ. Բաբելյանը գաղութահայ բանաստեղծ է, ծնված, ապրած յեվ իր գրական գործունեության ամբողջ ժամանակաշրջանը անցկացրած գաղութում յեվ այն ել մի այնպիսի հետամնաց, ոտարացած, այլասեռված, հայկական կուլտուրական, գրական-հասարակական ու գեղարվեստական կյանքից ու միջավայրից միանգամայն խզված, կտրված գաղութում, Վորպիսին է Ղրիմը։ Իր 25-ամյա գրական գործունեության ընթացքում Սիմ. Բաբելյանը հնարավորություն չի ունեցել յերեվան գալու ընթերցող հասարակության ու գրականագետների դատարանի առաջ իր ստեղծագործության ամփոփ պատկերով. նրա բանաստեղծությունները ցրված են միքանի տասնյակ պարբերականների մեջ, սկսած Տիգրան Նազարյանի «Տարազ»-ից, ուր մեր բանաստեղծը տպագրվել է առաջին անգամ 1899 թվին, յեվ վերջացրած Սիմֆերոպոլի «Կոմունայի Ձանգ»-ով, Վորի ժրջան աշխատակիցն էր նա 1921—22 թվերին։ Ճիշտ է, մեր բանաստեղծին հաջողվել է հրատարակել իր յերկերի մի փոքրիկ մասը յերկու լզար գրքույկներով («Բանաստեղծություններ», Ս. Պետերբուրգ 1904 թ. յեվ «ակկորդներ», Ալեք-պոլ, 1911 թ.), Վորոնց մասին յեղել են մեր պարբերական մամուլի մեջ արտահայտվողներ, սակայն այդ բրոշյուրները անգոր են յեղել, անշուշտ, տալու բանաստեղծի գրական ամփոփ ու լրիվ դիմագիծը յեվ մոռացվել են շուտով։

Սրանք են, ընդհանուր առմամբ, Սիմ. Բաբելյանի «ծանոթ անծանոթ» մնալու այսպես ասած արտաքին, ակնբախ ու բնական պատճառները: Սակայն գլխավորը, հիմնականը, եականը դրանում չի կայանում: Հիմնականը այն է, վոր Սիմ. Բաբելյանը վոչ միայն իր կյանքի ու գործունեություն արտաքին, որյեկտիվ պայմաններով խզված է յեղել հայկական կուլտուրայից, կյանքից, այլևս, վոր անհամեմատ ավելի նշանակալից է, իր ստեղծագործության ամբողջ եյությունը, բնությունը, նյությունը յեվ նույնիսկ արտաքին - ֆորմալ կոդով գրեթե վոչ մի առնչություն չունի իր ժամանակակից հայկական գրականության, նրա ընդհանուր վոգու, նրա ապրումների, նրա տրադիցիաների հետ: Համարձակություն եմ ստանձնում պնդելու, վոր Սիմ. Բաբելյանը իր ամբողջ ստեղծագործության եյությամբ ազգային բանաստեղծ չէ, իր ստեղծագործության յեվ վոչ մի կոդով չի հարում մեր ազգային բանաստեղծության վորյեվե ճյուղին, չի պատկանում մեր ազգային գրականության վոչ մի ուղղության, վոչ մի շկոտին: Սիմ. Բաբելյանը հայ բանաստեղծ է իր ստեղծագործության լեզվով միայն, յեվ անշուշտ, այն ապրումներով, զգացումներով, հույզերով, վոր լինելով համարադեպին, հատուկ են, անշուշտ, յեվ հային ու արտահայտված նրա լեզվով: Մեր մինչ—հոկտեմբերյան գրականությանը հատուկ խտացրած-ազգային (չասենք ազգայնական) բնությունը միանգամայն խորթ է Սիմ. Բաբելյանին—նրա ստեղծագործությանը: Այդ հանգամանքը բացատրվում է, անշուշտ, վոչ թե մեր բանաստեղծի անհատական հատկություններով ու ապրումներով (գուցե այդ տեսակետից նա վոչ պակաս ազգային է, քան մեր ազգային բանաստեղծներից ազգայնագույնը), այլ լոկ այն որյեկտիվ սոցիալ-տնտեսական ու քաղաքական-հասարակական պայմաններով, վորոնց մեջ անընդհատ ապրել ու գործել է մեր բանաստեղծը: Կարելի չեր մի քանի ցայտուն որինակներով ապացուցել, վոր հակառակ պայմաններում ապրած ու սնված բանաստեղծները, չնայած, վոր ոչ մի ձեվական, արտաքին (իմա լեզվական) առնչություն չունեն հայկական գրականության հետ, անհամեմատ ավելի հայկական, ազգային են իրենց ստեղծագործության եյությամբ

(Մարիետտա Շահինյան), այն ինչ մաքուր ու գեղեցիկ հայերենով գրող յեվ ամբողջ վոգով դեպի հայկականը ձգտող բանաստեղծները, շրջապատի անհաղթելի ու հրամայողական պահանջների որենքով՝ դառնում են վոչ ազգային (Վոնոփրիոս Անոփյան)։ Չեմ խորասուզվում այս չափազանց հետաքրքրական յեվ ուշագրավ հարցի մեջ-դա դուրս և իմ նպատակից. շեշտում եմ այդ միանգամայն ուշագրավ յերեվույթը, լոկ այնչափ, վորչափ դա անհրաժեշտ և Սիմ. Բաբիյանի ըստեղծագործության ընդհանուր բնութագրի տեսակետից, այլ յեվ նրա անծանոթ մնալու բացատրության համար։

Սիմ. Բաբիյանը իր ստեղծագործության ամենահական կողմերով ամենից առաջ բնության տաղանդավոր յերգիչ և, այդ տեսակետից նա միանգամայն ուրույն ու պատվավոր տեղ ունի գրավելու հայկական գրականության մեջ, վոր, ի դեպ ասած, այնքան աղքատ և բնության յերգերով։ Մեր գրականությունը, սկսած Աբովյանից մինչև ներկա դարի առաջին տասնամյակը, յեղել և գլխավորապես քաղաքացիական յեվ այն ել, աննշան բացառությամբ, ազգայնական-քաղաքացիական գրականություն յեվ, իբրեւ այդպիսին, գրեթե բոլորովին չի զբաղվել բնությամբ, նրա ներկերով ու հովերով, նրա հնչյուններով ու բուրմունքով. բացառություններ կան, անշուշտ, յեվ գուցե խոշոր ու արժեքավոր բացառություններ (հիշենք Թեկուզ Միրաքյանի «Լալվարի վորսը», Թումանյանի «Անուշը» յեվ այլն). սակայն խոսքս ընդհանուր, բնորոշ գծերի մասին և յեվ վոչ բացառությունների։ Վերջին տասնամյակներում (խոսքս մինչ — հոկտեմբերյան հեղափոխության մասին և) այդ համայնապարփակ ազգային-քաղաքացիական ընթացքին միանում և անհատական ու անհատապաշտական հոսանքը, վոր, դրսեվորելով հայ մտավորականության ներքին հույզերի ու ապրումների աշխարհը, հրապարակ և բերում յերկու խոշորագույն քնարերգական իսահակյան ու Տերյան։ Սիմ. Բաբիյանը, միանգամայն ազատ մնալով, ինչպես արդեն ասացի, մեր գրականության առաջին, ամենահիմնական ու հական ազգային-քաղաքացիական ու ազգայնական տարրից, արձագանքել և, յեվ այն ել զգալի չափերով, նրա յերկրորդ բնորոշ տարրին, վորը, սակայն, բնորոշ

ե անհասարակ այդ շրջանի մտավորականութեան համար։
Ուզում եմ ասել, վոր այստեղ չի կարելի յենթադրել ան-
պայման հայկ. գրականութեան ազդեցութիւնը, թեյեմ
պետք ե համաձայնեմ, վոր Սիմ. Բաբիջանի քնարերգու-
թեան վրայերբեմն զգալի յե իսահակյանի ազդեցութիւնը։

Սակայն, դառնանք Սիմ. Բաբիջանի քնարի ամե-
նաութեղ, ամենահնչուն ու ամենաբնորոշ լարերին—
բնութեան յերգերին։ Դեռեւս 1904 թվին լույս տեսած
բանաստեղծութիւնների փոքրիկ հավաքածուն կազմ-
ված եր կիսովին բնութեան յերգերից յեմ միանգա-
մայն իրավացի եյին քննադատները, շեշտելով հենց
այդ հատվածների արժեքն ու արժանիքները։ Արդեն
իսկ այդ գրքույկից, այսինքն սրանից ուղիղ յերկու
տասնամյակ առաջ, պարզ եր, վոր Սիմ. Բաբիջանի
հարազատ տարերքը բնութիւնն ե իր գունեղ պատ-
կերների անսպառ հարստութեամբ, իր քաղցրաշունչ
մեղեդիների անվերջ յերաժշտութեամբ։ Այդ ճշմար-
տութիւնը յես առիթ ունեցա շեշտելու 1911 թվին
լույս տեսած «Ակկորդներ» գրքույկի առթիւ, ուր հե-
ղինակը, դժբախտաբար, շատ սահմանափակ տեղ եր
հատկացրել բնութեան բուրավետ ծոցից կորչող հյու-
թիչ ու տպավորիչ կտավներին։ Նույնը կրկնում եմ
ու շեշտում այսօր, յերբ ինձ վիճակվում ե ներկայաց-
նել հայ ընթերցող հասարակութեան լայն շրջաններին
մեր «ծանոթ անծանոթ» վաստակավոր հորեւյարին։ Այո,
Սիմ. Բաբիջանը ամենից առաջ ու ամենից ավելի բը-
նութեան յերգիչ ե, զգայուն, տաղանդավոր ու ինքնա-
տիպ թարգման բնութեան յերգերի ու նվագների. դրա-
նումն ե նրա ուրույն տեղը հայ բանաստեղծութեան մեջ,
դրանումն ե ամենից առաջ նրա արժեքը հայ գրականու-
թեան համար։ Եիշտ ե, Սիմ. Բաբիջանը գլխա-
վորապես Ղրիմի բնութեան յերգիչ ե, այն չըք-
նաղ ու հոգեթով բնութեան, վոր յերգել են ժամա-
նակին Պուշկին ու Միցկևիչ, վոր անմահացրել ե իր
կտավների վրա Այվազովսկիյ, վոր այնչափ նշույթ ե
մատակարարել Ե. Մահտեսյանին ու Կ. Բոգայեմսկուն.
սակայն այդ հանգամանքը ամենեւին չի նվաստացնում
Սիմ. Բաբիջանի ստեղծագործութեան արժեքը. նախ՝
Ղրիմի բնութիւնը ըստինքյան այնչափ հարուստ ե ու
բազմակողմանի, վոր վերացնում ե միանգամայն միո-
րինակութեան ու միապաղաղութեան փտանդը յեմ տպա՝
բնութիւնը Բաբիջանի բանաստեղծութիւնների մեջ

չի կրում շեշտված տեղական, լոկալ բնութ, թե-
յեւ վերցված է Ղրիմի բնության գանձարանից:
Արժենքավորելով ու գնահատելով մեր բանաստեղ-
ծին նախ յեւ առաջ իբրեւ բնության յերգչի,
մենք այս հորելյանական ժողովածվի խոշոր մա-
սը նվիրել ենք նրա ստեղծագործության հենց այդ
հիմնական ճյուղին (տես. «Բնության գրքից» շարքը,
«Ճամբիս» շարքի մեծագույն մասը, «Ղրիմի ուրվագը-
ծեր» շարքը յեւ նորավարտ «Անիծված կղզին» պոեմի
հատվածները):

Բնության ծոցից քաղած յերգերի մեծագույն մասը,
ինչպես տեսնում ե ընթերցողը, նվիրված են ծովին: Սիմ.
Բաբիյանը ծովի սիրահար է, նա, կարելի չէ ասել, բա-
նաստեղծ-մարինիստ է յեւ իբրեւ այդպիսին չունի իր
մրցակիցը մեր գրականության մեջ: Ծովը նրա համար
ապրում է իր ուրույն, յեռացող ու բազմակողմանի
կյանքով: Այդ տեսակետից չափազանց բնորոշ են «Փո-
թորկից առաջ» (5), «Ծովի վիշտը» (22), «Ալիքի յեր-
գը», (31), «Ալիքի մահը» (32) յեւ մի շարք այլ հատ-
վածներ, վոր կազմում են ի մի հավաքած, մի սքանչելի
ծովային սիմֆոնիա-պակասում են նկարչի ներկակալը
ու յերաժշտի հնչյունները:

Սակայն վոչ պակաս զորեղ ու ազդեցիկ լարեր
ունի մեր բանաստեղծի քնարը բնության յեւ մյուս
բազմազան ու բազմայերանգ տարրերի համար՝ Պե-
րեկոպի լայնածավալ դաշտերի, Ղրիմի «սեզ ու հպարտ»
լեռների, աշնանային տաղտուկ անձրեւի, մայիսյան
խաղաղ գիշերի յեւ այլն:

Սիմ. Բաբիյանի, իբրեւ բնության յերգչի համար,
առանձնապես բնորոշ է «Բնության հետ» (19) բանաս-
տեղծությունը, վոր կարելի է ընդունել իբրեւ եպիգը-
րաֆ նրա ամբողջ ստեղծագործությանը. —

Ինձ գարնան հըզոր յերգն է արթնացնում,

Վրանիս ճեղքից նայում է արփին.

Յես ի՞մ ույժերով վոտքի յեւ կանգնում,

Յես ըզգում եմ ինձ նոր կյանքի ճամբին:

Այսպես է յերգում հիասքանչ՝ բնության հետ
արթնացող ու կազդուրվող բանաստեղծը, վոր դեռ նոր
«հիվանդ, զորալույծ» պառկած էր վրանում:

*
* *

Սակայն վոչ միայն բնության յերգիչ է Սիմ. Բա-
բիյանը: Իր բազմազար քնարի ամենահնչուն լարերը

իր բանաստեղծական հարուստ ներկակալի ամենագու-
 նեղ ներկերը բնությանը նվիրելով հանդերձ, նա գի-
 տե լողալ յեւ այլ ծովերում, բարձրանալ ուրիշ գա-
 գաթներ, դրսեւորել բազմազան ապրումներ ու հույզեր։
 Ճիշտ է, այստեղ արդեն մենք հազիվ թե կարողանանք
 գտնել նույն ինքնուրույնությունը, նույն թափը, նույն
 հարստությունը։ Իր քնարչերգական հատվածների մեջ
 նա զգալիորեն ազդված է ժամանակակից խոշոր հայ
 յեւ ուս բանաստեղծներից, մանավանդ այս վերջին-
 ներից. ժամանակակից մտավորականի բնորոշ ապրում-
 ներին, հույզերին ու անուրջներին, հաճախ նայել նրա
 մելամաղձոտ հոգեմեծությանը իր տուրքն է տվել յեւ
 մեր բանաստեղծը։ Այս շարքի բանաստեղծություննե-
 րից առանձնապես արժանի յեն ուշադրության «Սիմ-
 վոնների գրքից», «Վիշտ, ցնորք, յերազ» յեւ մասամբ
 «Առանձին եջեր» ընդհանուր խորագիրը կրող քերթ-
 վածները։ Առաջին շարքը, վոր կրում է իր վրա XX
 դարի ուսական բանաստեղծության մեջ այնչափ բար-
 գավաճած սիմբոլիստական ուղղության վորոշ կնիքը,
 զերծ է ի միեւնույն ժամանակ ինքնուրույն գծերից յեւ իր
 պատկերավորությամբ ու խորությամբ արժանի յեւ վո-
 րոշ տեղ գրավելու մեր նորագույն բանաստեղծության
 վոչ էլ այնքան հարուստ եջերում։ Առանձնապես հա-
 ջող են այդ շարքից «Աշնան թախիժի տաճարը մը-
 տա» յեւ մանավանդ՝ «Պալատը, վորտեղ», ուր չափա-
 զանց ցայտունորեն դրսեւորում են այն ժամանակա-
 շրջանի մտավորականության տարտամ վիճակն ու
 հոգի ապրումները։ Նույն այդ տեսակետից շատ բնո-
 րոշ է նայել հետեւյալ «Վիշտ, ցնորք, յերազ» շարքը,
 վոր լիովին համակերպվելով այն պահու քնարերգու-
 թյան, ուս թե հայ ընդհանուր վոգուհ, ունի, սա-
 կայն, յեւ իր ուրույն գծերը, թափն ու արտահայտու-
 թյունը։ Յես առիթ ունեցա արդեն շեշտելու այն ազ-
 դեցությունները, վոր անխուսափելիորեն պետք է կը-
 րեր յեւ անկասկած կրել է Սիմ. Բաբիյանը իր ժա-
 մանակակից ուս յեւ հայ խոշոր բանաստեղծներից։
 Այստեղ անհրաժեշտ եմ համարում ավելացնել դրան
 միայն այնքանը, վոր մեր նորագույն բանաստեղծու-
 թյան ամենախոշոր աստղը—Վ. Տերյանը, վորի ազդե-
 ցությունից զերծ է մեր վերջին 15 տարվա բանաս-
 տեղծներից կատարելապես վոչ մեկը (եւ չխոսած նրա
 արձագանք Արմ. Տիգրանյանի, Լեյլիի, Մազմանյանի,
 Խանլարյանի, սկզբնական Չարենցի ու առաջի շրջա-

նի Վշտունու մասին), համարյա աննկատելի յե անցել մեր բանաստեղծի համար, գուցե այն պարզ պատճառով, վոր Տերյանի գրական ասպարեզ դուրս գալուց— Բարիյանը արդեն կազմակերպված, իր ուրույն դեմքը բնորոշած բանաստեղծ էր։ Ահա ինչու ըստ նյութի, բովանդակության, ապրումների, հույզերի միանգամայն «տերյանական» բանաստեղծությունների այն ընթարձակ շարքում մենք հազիվ թե հանդիպենք մի հատված, վոր իր վրա կրեր Տերյանի ազդեցությունը. Բարիյանը, այստեղ միանգամայն ինքնուրույն է իր արտահայտություններով, իր պատկերներով, վոճով ու թափով։

Անչափ հաջող է «Մենակությունը», վոր այդ նյութին նվիրված բազմաթիվ բանաստեղծությունների մեջ (բոլոր լեզուներով) ունի իր արժանի տեղը։

Այն քնարերգական շարքերի բնորոշ նյութը, ինչպես արդեն ասացի, տարտամ հոռետեսությունն է, մեկությունը, վիշտն ու ցավը, վորոնց անողոք ճիրանների մեջ դեգերում է պոետը։ Այդ հուսահատական ապրումները իրենց զազաթնակետին են հասնում „Doloroso“ յեվ «Գնահ, նիստ ավին» հատվածների մեջ, վոր անչափ հմայիչ են իրենց բանաստեղծական արժանիքներով, սակայն չափազանց ծանր են իրենց անհուն հոռետեսական վոգով։

*
* *

Բնության ու նրա գունեղ բարիքների տաղանդավոր յերգիչը, իր ժամանակի մտավորականության հուզական աշխարհի, նրա ապրումների, ցնորքների ու մանավանդ վշտի ու մեկություն վարպետ թարգմանը վոչ պակաս հմուտ է յեվ այն յերգերում, վոր հնչեցնում է նրա քնարի սիրո լարը։ Անհատի ներքին, հուզական աշխարհի ամենազորեղ հույզերից մեկը — սերը պատվավոր տեղ է գրավում Սիմ. Բարիյանի ստեղծագործության մեջ։ Վերին աստիճանի դյուլթիչ ու բնորոշ է այդ տեսակետից սույն ժողովածվի հենց առաջին բանաստեղծությունը, վոր թիյեվ գետեղված է «Բնության գրքից» շարքի մեջ, սակայն կարող է բնորոշել այն խոշոր տեղն ու դերը, վոր բռնում է բանաստեղծի ներքին աշխարհում ու նրա ստեղծագործության մեջ սերը։ Սակայն այդ սերը բազմաթիվ մեծ ու փոքր բանաստեղծների ու «վոտնավորչիների» անընդհատ, դարերի ընթացքում հղումված ու խոնարհած մանր

անհատական, գծուծ յեւ չաճախ կրքին հոմանիշ «սերը»
չէ, այլ այն հուժկու, տիյեղերական ուժը, վորով հա-
մակված է համայն բնությունը, վոր ինչպէս ասում է
բանաստեղծը, «ընդգրկել է յեւ ցամաք, յեւ ծով»,
վոր բանաստեղծին ասում է «Տիյեղերքն ամբողջ յերգ
է քեզ համար»: Վորքա՞ն հեռու յէ այդ սերը թէ համ-
սունյան «աստծու պատժից» յեւ թէ մեր նորագույն մի
քանի «պրուետ» բանաստեղծների «կոնք»-ային կուլ-
տից...

Ճիշտ է, այն 18 բանաստեղծությունների մեջ,
վոր պարփակված են «Սիրո պարը» շարքում, յերբեմն
հնչում են կրքոտ յելլելիքներ, սակայն նրանք անգոր-
 են նսեմացնելու ընդհանուր տպավորությունը յեւ ա-
ռաջ բերելու հակա-գեղարվեստական զգացում, վոր այն-
քան հաճախ է տեղի ունենում մեր մի քանի բանաս-
տեղծների «սիրային» եջերը թերթելիս:

* * *

Աշխատավորական մոտիվները շատ համեստ տեղ
են գրավում Սիմ. Բաբիյանի ստեղծագործության մեջ:
Յեւ զա միանգամայն հասկանալի յէ ու բնական ար-
դեն այն ընդհանուր բնութագրից, վոր յես աշխատե-
ցի տալ մեր բանաստեղծին, նրա ներքին խառնված-
քից, վոր իր հորթին, արգասիք է վորոշ սոցյալ-տնտե-
սական ու քաղաքական հասարակական պայմանների,
վորոնց մեջ ապրել ու մնալ, դաստիարակվել է բա-
նաստեղծը: Ավելին կասեմ, վոչ միայն աշխատավորա-
կան մոտիվները, այլ յեւ ավելի լայն—քաղաքացիական
մոտիվները գրեթէ յերբեք չեն հաջողվել Սիմ. Բաբի-
յանին, թէյեւ այդպիսիները արտահայտելու, նրանց
արձագանքելու փորձեր նա շատ է արել. մեծ մասամբ
այդորինակ հատվածները յեղել են բռնադրոսիկ, ար-
հեստական, գեղարվեստորեն թույլ ու անարժեք: Փո-
ղովածուի մեջ տեղ-տեղ պատահող այդորինակ հատ-
վածները, վոր ընտրված են հաջողների թվից, կարող
են համոզել ընթերցողին մեր գնահատության ճշտու-
թյան մեջ:

Բոլորովին այլ գնահատման են արժանի այն յեո-
թը հատվածը, վոր զետեղված են «Աշխատանքի յեր-
գեր» շարքում յեւ վոր մենք վերցրել ենք բանաստեղ-
ծի 1922 թվին «Կոմմունայի Զանդ» պարբերականի մեջ
տպված նույնանուն շարքից: Այստեղ մենք արդեն չենք
պատահում մատնանշած արհեստականությունը, մտա-

ծածնութիւնը. այստեղ պատկերները թարմ են, զգացումները՝ անկեղծ ու բնական, արտահայտութիւնը՝ գեղարվեստական: Հաջող են մանավանդ «Նարբնի յերգը» յեզ «Ներձակունին», այլև «Աշխատանքը», ուր բնության ու սիրոյ յերգիչը «արդարացնում է կյանքը» աշխատանքով, նրանից դուրս զուր է համարում «վայելքի պալատ գտնելը», որհնում է աշխատանքը—

Նըրանով միայն մարդն է յերջանիկ:

* *

Յերկու խոսք ել Սիմ. Բաբիյանի բանաստեղծութիւնների լեզվի ու նրանց տեխնիկայի, արտաքին-ձեվական կողմի մասին: Կարելի չէ պնդել առանց վարանումների, վոր այդ տեսակետներից Սիմ. Բաբիյանը մեր բանաստեղծների շարքում միանգամայն իրավունք ունի գրավելու առաջնակարգ տեղերից մեկը: Պետք է ասել, վոր մեր հին, նոր ու նորագույն բանաստեղծները, ամենաչնչին բացառութեամբ չափազանց անուշադիր են դեպի իրենց աշխատութիւնների լեզուն, այլևս բանաստեղծական ստեղծագործութեան արտաքին ձեվական պահանջներն ու որենքները: Նույնիսկ մեր խոշոր, առաջնակարգ բանաստեղծներից շատերը գերծչեն այդ խոշոր պակասութիւններից, ել չխոսած յերկար շարք յերկրորդ կարգի բանաստեղծների մասին, վոր իրենց գրական գործունեութեան ամբողջ ընթացքում զբաղվել են մեր գեղեցիկ, հարուստ ու հնչյուն լեզվի աղավաղումով յեզ միջնադարի ժամանակ միանգամայն անտես են արել բանաստեղծական ստեղծագործութեան ամենահիմնական ֆորմալ պահանջները: Այդ բացասական ու միանգամայն անհանգուրժելի սովորութիւնը ժառանգել են, դժբախտաբար, յեզ մեր այսորվա յերիտաւարդ, պրոլետ-բանաստեղծները, վոր, չնչին բացառութեամբ, աղավաղում են լեզուն անիմաստ ու անպետք ոտարարանութիւններով ու անտանելիորեն շինծու բառակազմութեամբ (որինակ, Ալադանի «Հրաշխապոեզիա»-ն), այլևս ամեն կերպ չարչարում են բանաստեղծական տեխնիկան, հաճախ իսպառ զրկելով այն յերաժշտականութեան ու ռիթմի ամենահիմնական պահանջներից: Ահա ինչու մենք անհրաժեշտ ենք համարում շեշտել Սիմ. Բաբիյանի խոշոր առավելութիւններն ու արժանիքներն այդ տեսակետից. նրա մաքուր, հարուստ, գեղեցիկ ու միջնադարի ժամանակ պարզ լեզուն, նրա բանաստեղծութիւնների

կոկիկ կառուցվածքը, հանգերի հարստութիւնը ու համաչափութեան յերաժշտականութիւնը, նրա մտապատկերների գունեղութիւնն ու անբռնադրոսկութիւնը միանգամայն Պարժանի յեն գնահատման. ուստի այնոր բանաստեղծներից միայն Վահան Տերյանը իր մի յերկու տաղանդավոր հետեւորդներով, ապա Վոնոփրիոս Անուփյանը կարող են մրցել Բաբիյանի հետ. իսկ արեւմտահայ բանաստեղծներից նա դրականորեն տարբերվում է իր լեզվի պարզութեամբ ու վոլորածո դարձվածքների յեւ շինծու բառերի բացակայութեամբ: Անսրլսալական չե, անշուշտ, մեր բանաստեղծը ու ընթերցողը յերեւի կպատահի յերբեմնի պատահական սայթաքումների ու տեղ—տեղ անախորժ պրոզայիզմների, սակայն ընդհանուր առմամբ լեզվի ու տեխնիկայի տեսակետից Սիմ. Բաբիյանը միանգամայն արժեքավոր ու որինակելի յե մեր բանաստեղծութեան մեջ:

* * *

Սիմ. Բաբիյանի ընտիր յերկերի սույն հորեյանական ժողովածուն մենք անհրաժեշտ ենք համարել լեցնել միմիայն նրա ինքնուրույն բանաստեղծութիւններով, վոր բնորոշ են իրա ստեղծագործութեան համար: Սակայն անհրաժեշտ ենք համարում շեշտել, վոր նրա 25-ամյա գրական գործունեյութեան ակտիվի մեջ վոչ պակաս արժեքավոր տեղ են գրավում նրա բազմաքանակ ու անչափ հաջող թարգմանութիւնների յերկար շարք ոտարագգի հեղինակներից: Սիմ. Բաբիյանը թարգմանել է—Մ. Գորկիյ («Մակար Չուդրա» առանձին գրքույկով), Լ. Անդրեյեւ («Անդունդը»), Պուշկին, Հայնե, Լերմոնտով («Հաջի-Աբրեկ» պոեման ու բազմաթիւ բանաստեղծութիւններ), Մետերլինկ («Տենտաժիլի մահը»), Բլոկ («Չունե դիմակ»), Բրյուսով, Բալմոնտ, Բալտրուշայտիս, Բունին, Ակուրատեր, Նեժդանով յեւ այլն: Այդ բոլոր աշխատութիւնների մեջ մեր բանաստեղծը յերեւման է գալիս իբրեւ հմուտ թարգմանիչ, վոր քաջ ծանոթ է գրականութեան, բազմակողմանիորեն ուսումնասիրել է այն ու կարողանում է տալ ընթերցողին թարգմանված հեղինակի ամբողջ վոգին, նրա զեղումների հարադատ արտահայտութիւնը, նրա ստեղծագործութեան ուրույն թափը: Առանձնապես հաջող են Սիմ. Բաբիյանի թարգմանութիւնները մի շարք նորագույն ուսա բանաստեղծներից (Բլոկ,

Բրյուսով, Բալտրուշայտիս, Ել'սներ): Արժեք, անշուշտ,
հրատարակել մեր հորեկարի թարգմանութիւնների
ստվար ժողովածուն:

Ահա ընդհանուր առմամբ, Սիմ. Բաբիյանի գրա-
կան 25-ամյա գործունեւութեան ընութագիրը, վորչափ
վոր դա մեզ հաջողվեց:

Պետք է հուսալ, վոր այս համեստ ժողովածուն
հնարավոր կդարձնի մեր ընթերցող հասարակութեան
լայն շրջանների ծանոթութիւնը այդ մինչեւ որս գրե-
թե միանգամայն անծանոթ մնացած բանաստեղծի հետ,
վոր ունի, անշուշտ, իր ուրույն տեղը մեր գրականու-
թեան մեջ:

Սիմֆերոպոլ (Ղրիմ)

15 ապրիլի 1924 թ.

Քի սրտին և մեղմում գտնաւ զայնքս
Յիսուս իմ յորդանանի ափին

ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԲԻՑ

Մեր և յնդգիւն յի քամոյն յի քան
Հասնի պահաքն ից պարթիւն բոցով

Սեպ նրբնում և միշտ նրբն սեպն սնանայ
«Տիկեզն» բն տմբոյն յիսն և յիսն նմանայ

*
* * *

Թե սյուլքն ե թնցնում դաշտի դալարով,—
Յես լսում եմ յերգ՝ տոգորված սիրով:

Թե ալլակն տալին խոսք ե փափառում,—
Յե՛ս վսեմ սիրո գաղտնիքն եմ լսում:

Սե՛րն ե ընդգրկել յե՛վ ցամաք, յե՛վ ծով,
Վառել պոետին իր դյուլթիչ բոցով:

Յեվ կրրկնում ե միշտ նրան սերն անմար.
«Տիյեզե՛րքն ամբողջ յերգ ե քեզ համար»...

ՄԱՅԻՍՅԱՆ ԳԻՇԵՐԻՆ

Հորիզոնից յերկինք սահեց

Պարզ լուսին.

Թեքվեց թմրած առվի վրա

Ուռենին:

Շուրջըս խաղաղ, շուրջըս անդորր

Ու լռիկ,

Միայն յերբեմն թնց եր կենում

Մեղմ հովիկ:

Մնջիկ նստած անուշաբույր

Պարտիզում

Մինչ ուշ գիշեր ականջ դրի

Անկշտում

Վոնց բընությունն երկնքի հետ

Ներդաշնակ

Յերգեց սիրո խորհրդավոր

Մի նըվազ...

ԾՈՎԻ ՎՐԱ ԳԻՇԵՐՈՎ

Յես ուշ գիշերին զարթեցի նավում...

Լուռ ե խցի մեջ.

Լոկ պտուտակի խուլ զարկն ե լսվում

Անդուլ ու անվերջ:

Գլուխս վերցրի յեվ պատուհանից

Նայում եմ ծովին,

Յեվ չեմ կշտանում վեհ տեսարանից

Յես ամենեվին. —

Մութ նավի կողքին ալիքներն այնտեղ

Գալիս են գրնում,

Իսկ նավից հեռի ծովը փառահեղ

Հանգիստ ե առնում:

Կապույտ բարձունքում Հրատը վռակեշուք

Ու հեզ լուսընկան

Գիշերն են հսկում յերկու անշշուկ

Պահակի նման:

Իսկ աստղերն, իրենց վռակին թափելով,

Լուռ՝ սեր են շնչում,

Յեվ այս գերագույն շուքը դիտելով

Քունըս ե փախչում...

ԾՈՎՆ ԱՇՈՒՆՔԻՆ

Արագընթաց,
Նոթեր կիտած
Ամպեր յելան կամարում.
Քամի՛ն արագ,
Շընչաց վայրա՛գ,
Քըշեց նըրանց անդադրում:

Իսկ ծովն՝ անդուլ՝
Ցասկոտ ու խուլ
Կռիվն ե մըղում դարավոր,—
Կոծում յեզերք,
Յերգում որհներգ,
Միշտ «իգապանժ, փառավոր...

ՓՈԹՈՐԿԻՑ ԱՌԱՋ

Ուժգնո՛ւմ ե գոռոզ շառաշը ծովի.
Կիտվում են ամպեր, արագ թանձրանում.
Կարմիր ու կանաչ լույսերը նավի
Մերթ ցած են գալիս ու մերթ բարձրանում:

Թնդում ե հըպարտ յերգը կոծանքի
Ալիքահատի բաց, ազատ կողմում:
Մի ինչ վոր ձայներ զարթած ցասմունքի
Լավում են համառ, թա՛փ առնող հողմում:

Յեվ հետըզհետե ընբո՛ստ, ե՛լ ըմբոստ
Փրփուր են ժայթքում ալիքներն ափին:
Փոթորիկն՝ ահե՛ղ ու վորոտընդոստ՝
Ազատ յելք կըտա շուտով իր թափին...

ՀԱՆԳԱԾ ԳՅՈՒՂԸ

Այս գալա՛ր հովտում, այս հա՛ղթ լեռան տակ
Գյուղը՝ կենսալի՛ մի՛ որում մնջեց.
Հափլեզ հուրն անխնա մե՛ն ինչ ջնջեց,
Յեւ գյուղը դարձավ տխուր փլատակ:

Հիմա այս վայրում՝ ամայի՛, անտե՛ր,
Մի սրտածմի՛կ անդորր ե տիրում:
Հողը ծաղիկներ ե՛լ չի արտադրում—
Բսցնում ե տատասկ ու վտիտ խոտեր:

Յեւ աղբյուր, առու, ուր երանավետ
Յերգե՛ր են հնչել հայ աղջիկների,—
Ուր ո՛ւխտն ե կապվել սիրահարների,—
Աչքաթող յեղած՝ լռել են հավետ:

Հալիս ե, կիզվում իմ լքված վոգին.
Վռչի՛նչ կենդանի... Մողե՛սն ե միայն
Քարերի տակից դուրս սողում անձայն,
Անհագ քնքշանում կեսորվա շոգին:

Գիշերն ել՝ անհույս՝ սեւ բուն ե կանչում,
Նայում ավերին ապուշ հայացքով.
Մերթ՝ խորհրդավոր ու շեշտ թռիչքով՝
Զիղջն ե անշշուղ մութի մեջ կորչում...

ԱՆՁՐԵՎԸ

Սահեց շղթան արծաթափայլ ամպերի,
Տեսավ վայրեր ապառաժուտ, անբերրի.
Վոլորվելով նայեց նրանց դարդասուգ
Յեւ լա՛ց յեղավ, թափեց առատ արտասուք:

Յերբ ծածկուլթից ազատվեցին բարձունքներ,
Շողշողացին բյուրեղի պես արցունքներ.
Վայրը նայեց խոր բերկրանքից լիացած,
Արծիմն անցավ, վայրին նայեց հիացած:

Մեղմ ցոլքերով հրաժեշտ տալով ժայռերին,
Արփին՝ շիկնած՝ հըպեց յերկրի ծայրերին.
Ամբողջ գիշեր ապշած դիտեց լուսնկան՝
Ինչպես շիթերն առկայծելով վայր ընկան...

Որը վառվեց... Ջրկա մի հե՛տք ամպերի:
Լուռ են վայրերն՝ արեւակեզ, անբերրի.
Խոժոռվելով, վեր են նայում դարդասուգ,
Թե յե՛րբ կըգա կենդանաձիր արտասուք...

ԳԻՇԵՐԻ ՇԵՄՔԻՆ

Վերջալույսի մահվան ժամին Արուսյակն արդեն
Արցունքի պես հատակ ցուքով փայլում է անթարթ.
Կանչում է մութ ըստվերներին, վոր շուտով զարթեն—
Մըտնեն ձորեր, ուր մեծ գիշերն իջնում է հրպարտ:

Մութն իր նրբին ու գորշ քողով յերկիրն է թագցում,
Յեւ խուսափող հորիզոնի նըսեմ գծից վեր
Վառ աստղերի հըրով նախշած գմբեթն է կանգնում...
Շուտով, շուտով կը տարածե թմբիրն իր թեւեր...

Դեռ չեն լռել շրջապատի աղմուկն ու խրոփ.
Առաջվա պես յեռ է գալիս կյանքի մեծ կաթսան,
Սակայն միշտ թույլ, ավելի թույլ խլիպոցներով,—
Մինչեւ նըրանց անեյացնե Գիշերն անսասան...

Իսկ կամարի անծայրածիր խորության ծոցում,
Ուր ծիր կաթին շրդարշի պես թրթռում է թեթեւ,
Մանրիկ աստղերն ե՛լ նկարեն զարգեր են գործում,
Միշտ նո՛ր զարդեր՝ փոփոխական ու անհարատեւ...

Յեւ խոր Գիշերն ըսքանչելի՛ խաղաղ ընթացքով,
Վըսեմորեն հառաջանում, տիրում է յերկրին,
Ուր լրությունն՝ արդեն բազմած իր ամբողջ փառքով
Ուշ է դընում տիեզերքի անհաս յերգերին...

* * *

Լեռան գլխից վոսկի թափեց

Կույս արփին.

Ծառ ու ծաղիկ զվարթացան

Լճափին.

Լի թարմությամբ խայտաց անուշ

Զեփյուռիկ.

Լիճը զարթեց, շարժվեց անծուփ

Ու լըռիկ:

Միայն ամի ժայռը մնաց

Մտահույզ.

Հեռվի լեռան նայեց տխուր

Ու անհույս.

Դարձյալ հիշեց՝ սրտի խորին

Հառաչով,

Ինչպես մի որ գահավիժեց

Շառաչով,

Ինչպես զրկվեց վսեմ սիրո

Հրապույրից—

Գազաթների արշալույսի

Համբույրից...

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԱԿԿՈՐ ԴՆԵՐ

Տերեվաթափ անտառ, պարտեզ ու այգի
Հովիտներ թարշամ
Լացին, վողբացին իրենց հրմայքի
Մահը վաղաժամ:

Մըշուշներ իջան ձորերը խորունկ
Ու վոլորվեցին,
Յեւ մաքողջ գիշեր արագիլ, կըռուկ
Շար-շար չվեցին:

Յեւ հորդ անձրեւներն իրենց թանձրաշերտ
Ծածկույթի յետեւ
Թագցրին անցյալի փառքը հրաշակերտ
Ու շողուն արեւ:

Սողացին յերկա՛ր, սե՛ւ գիշերների
Շարքերն անհամբույր,
Ցած, ավելի ցած իջավ թխպերի
Հույլը սեւաթույր:

Պաղ ընդարմացման մռայլ տաճարում
Հանգել են աստղեր,
Ու հողմն ե միայն լալիս ու գոռում
Սրտամաշ տաղեր:

Յեւ յես չեմ փնդրում մթում խոլական
Անցյալի մի շող.
Հաստատ քայլերով իջնում ե ներկան
Անդունդը քարշող...

ԳԱՂԹԱԾ ԳՅՈՒՂՈՒՄ

Հեվաց, մարեց մահահամբույր
վերջալույս.

Մութը սողաց, բազմեց գիշեր
Խռովահույզ.

Բայց լուռ մթում չ'առկայծեցի՛ն
կրակներ,

Զը հնչեցի՛ն մեղամաղձիկ
նըվագներ...

Գոցված դռներ... փլած պատեր
Ու յերդիկ...

Ահ, ո՛ւր եք դուք, ինչո՛ւ փախաք,
Խեղճ մարդիկ.

Ինչո՛ւ հավետ հրաժեշտ տվիք
Մայր-հողին

Յեվ խնդացրիք արյունածուծ
Վաստիսին...

ԱՄՐԱՆԸ

Փայլը կեսորին սաստի՛կ ե պայծառ,
Վռլորվող ամպերն անշա՛փ են սպիտակ.
Հրկիզող տապից՝ ճընճղուկ ու ծիծառ
Պահվել են կտրի, զով թփերի տակ:

Շենքերն՝ այրված բոցոտ շողերից,
Ծանրը հեվալով նայում են իրար.
Արեվահայաց նըրանց կողերից
Խորշա՛կ ե շնչում—չո՛ր ու քնարար:

Հույսի հորդառատ հեղեղում սուզված՝
Հապիտակ պատերն աչք են շլլացնում:
Անվերջ շարքերով՝ խաղաղ և հուզված,
Մարդիկ ասֆալ՛տի հորովն են անցնում...

Եյության յերակն իր անդուլ զարկով
Որե՛նքն ե պահում՝ հավերժ, անխախտ
Յեր կյանքն, այս շոգին, անհողդողդ կարգով,
Անցնում Անհունի քարքարոտ ճամբան...

ԱՄԱՅԻ ԱՓ

Ովկյանոսից վեր են կենում
Ժայռեր անեղ, վիթխարի...
Նրանք հավետ լուռ են մընում,
Ինչպես ընթացքն աշխարհի:

Նրանք շարքով ափ են կազմել՝
Անմատչելի, վեհապանծ.
Այնտեղ կորճեր շատ են բազմել,
Խաղաղ լափել վորսն իրանց:

Շուրջը վոչ վոք ձայն չի տալիս.
Միայն նրանց ստորոտում
Տարրն է հըպարտ գընում—գալիս
Յեվ մոլեգին վորոտում...

* * *

Գոռ ալիքներին խաղալիք դարձած՝
Մակույկս ծովում չը գտավ անդորր,
Մինչեւ վոր հորձանքն՝ տհեղ լեռնացած՝
Նրան մոլեգին ասի նետեց մի որ։

Վե՛րջ իմ տանջալի թափառումներին.
Դե՛հ, հանգստացի՛ր, վորոնող վոգի...
Յեզերքը—խաղաղ, յեզերքը—լռին.—
Քեզ չի խանգարում ձայնը վոչ վոքի։


Բայց ինչո՞ւ այդպես խորին անձկությամբ
Հաղթ կոհակներին նայում ես նորից.
Ուզում ես դարձյա՛լ թռչել, ինչպես ամպ,
Փախչել ասիերի մեռյալ անդորրից...

* * *

Սեւ դարանակալ գիշերն ե կախված...
Աջ կողմըս՝ լեռներ սեպ ու բարձրունակ,
Ջախից՝ անդունդի յերախն ե բացված, —
Յեւ գնում եմ յես առաջ, միշտ մենակ:

Յես պետք ե գրնամ ու գրնամ անշեղ
Յեւ բեռս տանեմ մինչ՝ վերջին կատար.
Վռչի՞նչ, յեթե մութն ըսպառնա անեղ,
Գո՛ւ մըրբիկ շընչե ուժգին, անդադա՛ր:

Յեւ իսկի փույթ չե՛, թե առավոտյան
Յես մահ ըստանամ լեռան կատարին,
Միայն տեսնեյի արփին հաղթության
Պայծառ շողալիս տանջված աշխարհին...



ԸՆԿԵՐԻՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(յերազ)

Առաջվա նման՝ այնպես փառահեղ,
Հընչեցնում եր ծովն աշնային յերգեր,
Յեւ թըվում եր ինձ, թե մենք դեռ այնտեղ՝
Ափի՛ն յենք ապրում, իմ անգի՛ն ընկեր:

Լուռ եր սարալանջն՝ ինչպես գերեզման,
Լուռ եր—և անմարդ ու խուլ ամրոցում.
Լոկ արթուն ծրփանքն, առաջվա նման,
Համաշափ զարկով յեգերքն եր կոծում...

Այնտեղ մե՛ն—մենակ, թախծապատ սրտով,
Լուռ թափառեցի մինչեւ արշալույս.
Իզուր փնդրեցի դեմքդ անվրդով,
Իզուր կանչեցի հոգիդ խռովահույզ:

Շուրջս ամեն ինչ վե՛հ եր, թովհալի՛,
Ամեն ինչ—դարձյալ առաջվա նման.—
Յե՛ս եյի միայն դժբա՛խտ, խղճալի՛.
Ա՛հ, քեզ չը գտա՛, ընկե՛ր սիրական...

ԱՇՈՒՆԸ

Պանդուխտ ամպեր անա նորից
Ճամբա ընկան լուռ ու մուջ.
Զյունապըսակ գագաթներից
Ցուրտը հեվաց դառնաշունչ:

Յեվ չքացավ մառախուղում
Ցընորալի հորիզոն.
Շուրջս՝ կյանքի անեղ թաղում,
Սուգի յերգեր մոնոտոն:

Ամբողջ գիշեր թոնն է ծեծում
Լուսամուտիս ապակին,
Հողմն է լալիս ու հեծեծում
Անհուսորե՛ն, ցավագի՛ն:

Ու ժանտ վոգին սեվ որհասի՝
Մահասարսո՛ւռ խավարում՝
Փառքն է յերգում մահ—յերագի,
Ծափ է տալիս ու պարում...

ԱՇՆԱՆԸ ԾՈՎԱՓԻՆ

Ափսո՛ս, անցա՛ն, գընացի՛ն,
Ցուքեր, փայլեր յերկնածին.
Հողմը խիզախ թափերով
Անցավ խոժոռ ափերով:

Կոհակն՝ ահեղ ցասկոտած՝
Ափին զարկեց—վորոտաց.
Ճայր ճչաց սարսափից,—
Թըռավ, փախավ քարափից:

Մըշուշն իջավ ինչպես գող,
Մարեց լույսի ամեն շող
Յեվ մոխրագուշն ծածկոցով
Վարագուրեց ափն ու ծով:

Ամրան ալիք ու յեզերք,
Ծուփի անուշ, թուլիչ յերգ
Մընաս բարեւ ասացին,
Խոր սուգ մտան ու լացին...

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հալվում են, հալվում և ձյուն, և սառույց,
Հրդոր թափերով թավալվում գետեր:
Վրանում պառկած՝ հիվանդ, զորալուծ,
Յես աչք եմ ուղղել դեպի լուրթ յեթեր:

Դալուկ աչքերիս իջնում ե թմբիր,
Յեվ լրսում եմ յես՝ կես-քուն, կես-արթուն,
Գարունն ե գալիս շողքով լուսասփիռ,
Յերգով կենսառաք, յերգով զըվարթուն:

Ինձ յերազիս մեջ ժրպտում են արտեր,
Թավշյա կանաչով ժրպտում ծառ ու տունկ,
Յեվ անուշահոտ ու փարթամ վարդեր
Խոսուն հավքերին խնկում են բուրմունք:

Ինձ գարնան հրդոր յերգն ե արթնացնում,
Վրրանիս ճեղքից նայում ե արփին:
Յես ի՛մ ույթերով վոտքի յեմ կանգնում,
Յես ըզգում եմ ինձ նո՛ր կյանքի ճամբին...

Բ Ք Ա Տ Ա Ր

Ինչպես վերմակ՝
Զյունը ճերմակ
Պատեց դաշտեր, սար ու ձոր,
Ափսո՛ս, կորա՛ն,
Թովքերն ամրան,—
Սիրտս լացեց արնածոր:

Բուքն ահարկու
Յելավ հուժկու,
Մոլի ֆշաց ինչպես ոձ,
Վռոնաց տաղեր,
Մարեց աստղեր՝
Արծաթ, զմրուխտ, վոսկեզոծ:

Մթին ու գեջ
Իմ ոթի մեջ
Ցուրտը մտավ անշշուկ,
Պաղ հայացքով
Նստեց իմ քով,
Հոգուս ձգեց մռայլ շուք...

Քո դռան առաջ առվակն ե հոսում
Սարերի այգի անդորրի միջին
Յեվ նրա դյութիչ հեքյաթն ե լսում
Յեզերքի մենակ, վայելուչ փիճին:

Հանկարծ խրճիթիդ դուռն ե ճռճում,
Դու դուրս ես գալիս, գընում դեպ առվակ,
Զովացնում յերեսդ անապակ ջրում
Յեվ յերգում այգի յերկնային նվագ:

Քեզ ո՞վ ե տվել, ո՞, հիասքանչ կույս,
Բախտը՝ սարերի աղջիկ լինելու:
Յերնեկ քո կյանքին՝ ազատ ու անհո՛ւյզ.
Յերնեկ քե՛զ՝ միայն սրտի՛դ ես հլու:

Իսկ յես՝ քաղաքի մտահոգ վորդիս,
Պրկված եմ հազար անտես ողակով. —
Անզո՛ր, թեվազո՛ւրկ՝ յես կյանք թակարդիս
Մե՛ջն եմ թփրտում զուսպ աղաղակով...

Ծ Ո Վ Ի Վ Ի Շ Տ Ը

Կանգնած եյի յես անմարդ ծովափին...
Աշնան ամպերի քարվանն եր չըվում
Յեւ խոր, սանձապուրծ հողմը իր թափին
Նոր ույծ եր տալիս, ցասմունքից հեւում:

Փրփուրով դիզված, հըսկա, կորովի՝
Կոհակն եր գալիս վայրի բացերից,
Պատմում իր ափին ցավերը ծովի,
Արցունք եր շաղում և փախչում նորից:

Մթնո՛ւմ եր արագ... հապճեպ և լռին
Սող եյին տալիս խառն ուրու և շուք
Յեւ ահեղագոչ, հուզված ջրերին
Իզուր փրսփրաում, վոր զըսպեն աղմուկ:

Բայց չը կա՛ր անդորր տարերքի համար.
Միշտ հուզվում եր նա թանձրացող մըթում,
Ափերի վըրա գրոհում եր համառ
Յեւ՛ արտասովաթոր՝ դա՛ռն հեծկկում...

*
*
*

Կախված է ծածկույթն անասող յեթերի,
Ծովը աշնային սաղմոս է յերգում:
Մեկն՝ անտես ձեռքով՝ կամարը վերի
Ե՛լ ավելի մութ սեվով է ներկում:

Գոցվա՛ծ է ծովի հեռուն անթափանց,
Վաղո՛ւց չի շողում լույսը փարոսի:
Գիշե՛րն է իմ դեմ բազմել սնապանծ,
Նըման մի խոժո՛ռ, ժա՛նդ բարբարոսի:

Յեվ անհուսուլթյան վոգին ատելի
Հոծ խավարի մեջ ճանկերն է սրում.
Յեվ կարելի չե՛ տոկալ ավելի.—
Կիզվո՛ւմ է հոգիս շվարման հրում:

Հողմը տակավին չե՛ ուզում զարթել,
Շարտել դես-դեն ծածկույթը վերի.
Բայց նա՛կոչ կ'անե աստղերին. — «Թարթե՛լ».—
Յեվ յես չե՛մ մնա խավարին գերի...

* * *

Ծովի բացերից ալիքն ե գալիս,
Համըր ժայռերի կուրծքը հարվածում:
Սիրտըս խաղաղվեց. ել նա չե լալիս.—
Ինձ արիացրի՛ն ծրփանքն ու կոծում...

Վորքա՛ն ե սիրուն ծովն անհունաբաց:
Ծիծաղածավալ իր սրբախի խորից
Նա գերբընապես յերեսիս ժրպտաց—
Յեվ հոգումս ույժերն արթնացան նորից:

Խաղա՛ղ ե հիմա իմ նորոգ սրբառում:
Ծրփանքը խոսում, յերգում ե զըվարթ
Յեվ բա՛րձր ե ճերմակ փրփուր շրպըրտում,
Բաղխվելով ափին—խոժո՛ռ և հրպա՛րտ:

Յես՝ ափին պառկած՝ նայում եմ վերեվ,
Ուր արծիվն՝ անվերջ՝ շրջան ե գըծում,
Ուր կըրակի պես վառվում ե արեւ.—
Յեվ հոգիս շուրջի կորովն ե ծըծում...

* * *

Զարթո՛ւմ ե քամին. բանա՛նք առագաստ,
Դիմենք անվեհեր դեպ ծովի հեռուն.
Ուղղած դեպի նա հայացք սեվեռուն՝
Դիմենք, իմ ընկեր, աշալո՛ւրջ, ըզգա՛ստ...

Ե՛լ մենք պետք չ՝ ունենք ասի աշտորրին,
Յերբ չըկա՛ արդեն խոնջը մեր վոգու,
Յերբ յելած ծովի հույզի՛ն ահարկու
Մեր սիրտն ե ձգտում փափագով խորի՛ն:

Հորիզոնն այսոր ունի բյո՛ւր ժանիք,—
Լայնաբաց ծովի կոհակներն են այն,
Վոր յելնում են մերթ խո՛ւ, ահեղաձա՛յն
Յեվ մերթ տապալվում, ինչպես հին տանիք:

Ո՛ր, այսոր այնտեղ — դիվային պարեր,
Լի՛ արկածներով ուժակո՛ւռ պայքար.
Բայց մեզ հաղթելու անգո՛ր են, անկա՛ր
Ըմբոստ ամբարձած ջրային սարեր...

Ուժգնո՛ւմ ե քամին. դե՛հ, բա՛ց առագաստ,
Դիմենք անվեհեր դեպ ծովի հեռուն.
Ուղղած դեպի նա հայացք սեվեռուն՝
Դիմենք, իմ ընկեր, աշալո՛ւրջ, ըզգա՛ստ...

Քաղցրանուշ զըրուցեց արթնացած առուն,
Ցողեցին վաղորդյան մարգարայա շիթեր,
Ժըպտացին դալարով վայրեր զարդարուն
Յեւ թըռավ առաջին նախշունիկ թիթեռ...

Ինձ դյուլթեց վառ գարնան հըմայքն անպատում,
Արբեցրեց դրախտային բույրը ալ վարդի.
Ե՛լ մըշուշ—թախիժներ սիրտըս չեն պատում,
Ե՛լ շուտով իմ հոգում աշուն չի զարթի...

ՄԱՅԻՍՅԱՆ ՈՐ

Ա՛հ, որն այսօր՝ ասես զըվարթ
Յերա՛գ լինի վարդ-կուսի.
Թըփեր, ծառեր կանաչագարդ
Գովքն են ասում մայիսի...

Ինձ արթնացրեց լուսածագին
Հավքերի ձայնն անուշակ.
Յելա պարտեզ, և ցընծագին
Ինձ վողջունեց մանուշակ:

Գահույքն անհաս-հասա՛կ—կապույտ.
Ծովն ինձ գաղտնիք է ասում.
Առուն՝ վճիտ, վոլորապտույտ՝
Զըրուցելով ծո՛վ վազում...

Դո՛ւ ել, իմ սի՛րտ, դե՛հ վողջունի
Փառքը նորոգ բնության.
Կյանքի հոգսերն՝ ունա՛յն, նանի՛ր՝
Թո՛ղ մոռացվեն մի վայրկյան...

* * *

Յեզերքից հեռու՝ ծովի հատակին՝
Մամռոտ քարն արդեն վաղո՛ւց եր տենչում
Մի որ հագուրդ տալ իր ջերմ փափագին, —
Տեսնել՝ ծովն ինչպե՛ս հուզվում ե, շաշում:

Ուզում եր լսել, թե ալյակն ափին
Ինչպե՛ս ե հեքյաթ և գաղտնիք պատմում,
Ինչպե՛ս են շողում լուսնյակն ու արփին,
Ծովից դուրս գալով՝ ծո՛վն ել ընկրդմո՛ւմ...

Յեվ մի որ հանկարծ խուլ մըրրիկ փըրթեց.
Ծովը բարձրացավ, գոռաց զայրագին,
Հըսկա կոհակներ յեզերք շրպըրտեց,
Քարին ել հասցրե՛ց իր նըպատակին:

Հիմա նա ափից՝ թռվված, անբարբառ՝
Իր շո՛ւրջ ե նայում՝ պայծառ աշխարհի՛ն,
Վորտեղ ամեն ինչ վեհ ե, հրաշափառ,
Վողջը — հիյացմունք՝ անսահմա՛ն խորին...

ԱՄՊՐՈՊԱՅԻՆ ԳԻՇ ԵՐ

Ինչպես յերգեհոն՝ ծովն ե սաղմոսում,
Մարած են ջահերն ամբարձ խորանի.
Հեռու բացերից թուխպն ե զուսպ խոսում,
Յեվ ամպրոպի հեվք մթնոլորտն ունի:

Փայլակներն անդուլ թարթում են միմյանց
Յեվ գմբեթն առ պահ պայծառ լուսոծում.
Բայց գրո՛հ ե տալիս խավարն անթափանց
Ու սեղմ ողակով ամեն ինչ գոցում:

Յեվ հուզմունքի մեջ ամեն ինչ՝ լարված՝
Սպասում ե, թե յե՛րբ՝ ցնցի՛չ ճայթոցով՝
Կայծակը կըտա վճռակա՛ն հարված—
Յեվ լա՛յն կը շնչեն թե ցամաք, թե ծով...

ՍԻՐԱԾ ՎԱՅՐՈՒՄ

Գարնան յերեկո՝ անդո՛րը, լուսընկա՛ւ.
Պարտեզից նայող ճերմակ ամառոց.
Հյուսիսում—սարեր՝ վիթխա՛ր ու հըսկա՛
Յեւ մեկի լանջին—մի խարխո՛ւլ ամրոց...

Այս անհույզ վայրում յեղած չեմ վաղո՛ւց,
Վաղո՛ւց չեն յեկել ամրոցին այցի:
Ինձ հեռո՛ւ նետեց կյանքը ծանրալուծ
Այս փարթամ վայրից, ուր յես սիրեցի:

Այստեց եմ նորից... Իմ գլխի վերեւ
Ամբարձ խորանի ջահերն են վառված:
Խաղա՛ղ ե, խաղա՛ղ. չե՛ շարժվում տիրեւ,
Զեփյուռը՝ գարնան ցնորքով ե տարված:

Ամբողջ ողն այստեղ՝ վառ ծաղիկների
Անուշ, դրախտային բուրմուռնքն ե կըրում...
Գրկված՝ թեւերով հիշատակների,
Յես ման եմ գալիս, յերկա՛ր թափառում:

Յեւ նորից անցյալն աչքերիս առնջ
Հառնում ե, հառնում՝ ինչպես կենդանի.
Սակայն իմ կրծքից չի թըռչում հառաչ.—
Զե՛ վողջն աշխարհում անցնո՛ղ կյանք ունի...

ԱԼԻՔԻ ՅԵՐԳԸ

Յեա ծնունդ առի
Ափերից հեռի,
Ծով-մորս գրկում մե'ծացա ազատ.
Ինձ ըմբոստ քամին
Խոլ ցասկի ժամին
Վազցրեց դեպ ափեր խո'րթ, անհարազտ.

Մի կա'րճ ժամանակ
Յեա չեյի մենակ,—
Ձկնկո'ւլն եր ինձ բարձրից ուղեկցում.
Բայց նա՛ ափ տեսած՝
Մնառ բարեվ ասաց
Յեվ կորավ ծովի անսահման բացում...

Արդեն մո'տ են, մո'տ
Ափերը ժայռոտ,
Ուր դժվար վազքիս վախճան պիտ համնի,
Ուր նինջն ըղձավետ
Ինձ ել առ հավետ
Պիտ հանձնե խաղաղ գիրկը անհունի...

ԱԼԻՔԻ ՄԱՀԸ

Աննըշմար եր դեռ հեվքը մըրկի,
Յերբ ազատ ծովում նայելով ըմբոստ
Յեվ՝ վողջ անձնատուր մի շշմիշ կրքի՝
Փրփու՛ւր շաղ տվեց խո՛ւ, վորոտընդո՛ւստ...

Պայթեց գոռ մըրիկն, ու նա՛ գայրացկոտ՝
Հողմի թափի տակ, գլորվեց առաջ
Յեվ սեպ ժայռերի կուռ շարքերի մոտ
Ամբարձավ գոռո՛գ, ահեղաշառա՛չ:

Ուռցրեց գերապես իր կուրծքն ըսպիտակ
Ինչպես տազնապող գազան մոնչե՛ց
Յեվ՝ վորոտների սո՛ւր ճշերի տակ՝
Ջա՛րդ ու փշո՛ւր յեղավ, հավիտյան մնջեց

ՍՈՆԵՏ

Ծանր անդորրի մեջ յերկիրն ե ննջում.
Գիշներն՝ անառիման վշտով ե տարված:
Անտես մի վոգի՝ խոլ տենչով վառված՝
Յերկնային գրքի գրերն ե ջնջում:

Յեվ թանձր մութի թեվերով փառված՝
Համր շրջապատն ահ ե ներշնչում,
Ու շվար հոգիս աղոթք ե մնչում,
Սեվ անհուսության ցավից գալա՛րված:

Շուրջս՝ լռություն—խո՛ր ու անհատա՛կ.
Շշո՛ւկ չե՛ ծնվում պաղ մութի միջին
Հորիզոնի մոտ՝ կախված ամպի տակ՝

Աննկատ մարեց աստղիկը վերջին:
Յեվ յես, խորանի՛ստ, ճնշի՛չ խավարում,
Մեն-մենակ՝ կորցրած ճամբա՛ս եմ փնտռո՛ւմ..

ՇՏՈՐՄԸ

Ծածան կրծքի տակ ցասմո՛ւնքը յեռաց,
Խո՛ւ, արշավասույր հողմը շառաչե՛ց.
Յելան ընդծովյա ույժե՛րը լռած, —
Յեւ հուղված պոնտոսն անե՛ղ կառաչեց:

Խեռ կոհակների վայրենի՛ խրախում
Արբա՛ծ պարեցին մոլորված նավեր:
Գաղտնիք շա՛տ պահեց խուլքն իր յերախում
Յերբ թափահարեց մահն իր պա՛ղ թեւեր:

Յեւ յերբ տարերքի մեծ ընդվզումի
Վերջին թափն արդեն մարում եր դանդաղ,
Ամայի ափին ծուփը՝ մի առ մի
Հանում եր շտորմի զոհերին անթաղ...

* * *

Խաղաղ յեղերքին՝ վեհ լռության մեջ՝
Մեղմ աղոթելով, ալյակն եր պառկում.
Կարավաններով՝ աստղիկներն անշեջ
Հանգիստ գիշերի փառքն եյին յերգում:

Խաղաղ յեղերքին ժայռերը ցից-ցից
Մի անեղերազ քուն եյին մըտել.—
Անծայրածավալ ծովի խուլ բացից
Ծովահույզ վոսոխ—մըրրիկն եր փըրթել:

Խաղաղ յեղերքին մի անճա՛ռ—խորին
Անդորր եր տիրել իմ ամբո՛ղջ հոգուն.
Բայց յեղբա՛յր եյի յես այն ժայռերին.—
Մըրրիկ շա՛տ ունեւ կյանքիս մութ հեռուն...

* * *

Գեղեցիկ՝ կապած ծիրանի գոտի՝
Ամպերն ուղղվեցին դեպի ազատ ծով:
Հուր արեւի տակ լեռները մոտի
Թովեցին թավշյա, կանաչ հանդերձով:

Բայց դեռ նո՛ր միայն վայրենի մի պար,
Խուլակա՛ն խրախճան տարրերքն եր սարքել
Յեւ ողն եր ցնցում շանթն անհղաբար,
Պատռելով յերկինքն՝ ազա՛տ, անարգե՛լ:

Յեւ շուրջն ամեն ինչ ճնշվա՛ծ եր, մռա՛յլ,
Սեղմ ոկակի մեջ պրկված եր անհույս,
Յերբ հանկարծ՝ ինչպե՛ս մանկան ժպտի փայլ՝
Մռթը փարատեց զվարթալի մի լույս:

Յեւ սուգից յելնող լոռները մոտի
Շուտով դյուլթեցին թավշյա՛ հանդերձով,
Յեւ՛ հպարտ, կապած ծիրանի գոտի,
Ամպերն ուղղվեցին դեպի ազատ ծո՛ւլ...

* * *

Ուշ յերեկոն մարում ե լուռ.
Ծովեզերքին գեղազարդ՝
Մշուշապատ սար ու բլուր
Խոկում են մեղմ ու հանդարտ...

Ուշ եմ դնում կայտառ հովի
Սարից բերած հեքյաթին
Յեւ վորոշում թմրած ծովի
Նախանինջի մեղեդին...

Նուրբ ձայների, խաղաղության
Վեհ, հիասքանչ հյուսվածքում՝
Ըզգում եմ յես, վոնց եյության
Թուփն ե հոգիս ջերմ գրկում...

ԻՄ ՅԵՂՐԵՎԱՆԻՆ

Բակում, իմ տան մոտ, պատուհանիս դեմ,
Իմ յեղրեվանին աճում եր, աճում
Յեվ ամեն մայիս ինձ՝ զըվարթադեմ՝
Իր անուշաբույր զարդերն իր ճոճում:

Հիշում եմ՝ ինչ բո՛ւռն, անպարտիա՛կ սիրով
Սիրում եյի յես ծաղկի տեսքն ու հոտ:
Մեր խեղճ դաշտերում՝ իր բուրյան ձիրով
Իմ ծառը գարնան զա՛րդն եր ծիծաղկոտ...

Բայց կյանքն ինձ նետեց հեռավո՛ր վայրեր,
Կտրեց առյերկար անդորր դաշտերից.
Յեվ սիրեցի յես ծո՛ւլ, սա՛ր ու ժայռե՛ր,—
Իսկ սիրտըս՝ տան հետ կապ մընաց նորից...

Յեվ յեղամ՝ գարնան մի մեղմ իրիկուն
Յերեր սայլակով մեր շենը մըտա...
Խե՛ղճ եյին դարձել դատարկ բակն ու տուն...
Լոկ յեղրեվանիս դարձյալ պե՛րճ գըտա:

Զով յերեկոյի առույգ հովի տակ՝
Ճոճում եր կամաց ծաղիկներ բուրյան,—
Կարծես վողջունում խնդությամբ հատակ
Իր ակնկալած ժա՛մն իմ գալստյան:

Յեւ շա՛տ առավոտ նույն պատուհանից
Շնչում եյի յես նրա բուրն անուշ...
Յերբ կարոտս առի հայրենի տանից,
Կորցրել եր իմ ծառն իր զարդը քնքո՛ւշ...

Հիմա յես դա՛րձյալ և արդեն վաղո՛ւց,
Ոտար վայրերում ապրում եմ տարտամ.
Յեւ ճընշում ե ինձ կյանքը ծանրալուծ.
Յեւ խորհում եմ միշտ՝ լավ ե տո՛ւն դառնամ.-


Խարխո՛ւլ ե՛ գուցե՛ տունըս հայրենի,
Բայց գիտե՛ հոգիս՝ առաջվա նրման
Ծաղկում ես դու պե՛րճ, իմ յեղբեւանի՛,
Պայծառ հիշատա՛կ, իմ սե՛ր անսահման...

* * *

Լալկան յերեկոն՝ մոռթ, անձրեվային,
Հողեվարքի մեջ մեռնում եր դանդաղ,
Յեվ յես՝ անձնատուր մուայլ ներկային՝
Յերգում եյի մեղմ թախծալի մի տաղ:

Յեվ լուսամուտից մթնո՛ղ սենյակիս
Դիտում եյի յես ամպերը վազող,
Ու լացող քամին ճնշո՛ւմ եր հոգիս,
Սուգով եր պատում սիրտս նվազող:

Ձրկա՛ր լույս վառող... Գիշերը ծանրակ
Բազմում եր, սփռում տխրություն ու մոռթ.
Իսկ դուրսը՝ անդո՛ւլ անձրեվը բարակ
Գալիս եր, հողմով ծեծում լուսամուտ...



Զանգը՝ համակերպ՝ անդորր յերեկոն
Լցնում ե՝ առատ թափվող հրնչունով.
Հանգչում ե քամին անդորր նրնջումով.
Մութն արեվելքում քողեց հորիզոն:

Մոտ ե վախճանին փառքը ցերեկի՝
Ում գրկում լույսի թըրթիռն անմեկին
Փըթթում եր, խրախի կանչում ամենքին,
Զըվարթ պարեցնում մարմին ու հոգի:

Յեվ ամեն մարվող մի նոր շողի հետ
Որվա հանդեսից լռում ե մի ձայն,
Յեվ դեպի գիշերն՝ ամայի ու լայն՝
Քիչ-քիչ վորոշվում աղոտ արահետ...

*
*
*

Ինչպես յերեխա, գիլ, աղեկըտուր՝
Պատուհանիս տակ՝ քամին եր կոծում,
Ուժգին թափերով շարժում տան կըտո՛ւր
Յեւ չար մահերգով սիրտս խո՛ր խոցում:

Յեւ յերկինք, յերկիր խառնած իրարու՝
Բո՛ւքն եր պար գալիս դիվային պարով,
Մու՛թն եր ցերեկին վաղ քշում հեռու
Յեւ պրկում աշխարհն ահեղ խավարով:

Յեւ ամբողջ գիշեր, և անքո՛ւն գիշեր՝
Զո՛ւր փափագելով պայծառ հանգրրվան,
Սպառելով՝ լարված՝ իր վերջին ույժեր՝
Ապրում եր հոգիս խրախճանը մահվան...

* * *

Սալորենիս ծաղկեց կրկի՛ն,
Զարդերն՝ ամբի՛ծ — ըսպիտակ,
Արեւավառ գարնան գրկին
Որը հեւաց մեղմ ու տաք:

Ամեն մի ծիլ, թռչուն, հոգի
Հանդես յեկավ զվարթագուն,
Ըզգաց թրթիռ նորոգ կյանքի,
Ուղղեց գարնան ջերմ վողջուն:

Յեւ վողջունի բյուր ձայներով
Քոնը, իմ սիրտ, հնչեց ջո՛կ.
Բայց քեզ գարունն ի՞նչ է բերում,
Ասելու չե քեզ վոչ վո՛ք...

* * *

Այն պայծա՛ռ գարնան լո՛ւրթ յերկրնքի տակ
Արփեցնո՛ւմ եր ինձ լույսը հարաճուն,
Յեւ ծո՛փս եր ծավի, և ջո՛ւրն եր հըստակ,
Յեւ ալյակն ափին խըփում եր հընչո՛ւն:

Ինչ քա՛ղցր եր պատմում աղջիկն անծանոթ՝
Ափին՝ ինձ ոտար իր յերկրի մասին,
Խափշիկը՝ ձեռքին զարդարուն անոթ՝
Խըմիչք եր ածում ժըպիտն երեսին:

Յեւ թըվում եր ինձ—վո՛ղջ որն եր յերգում,
Գարնան հեքյաթով վողջ կյանքն եր ոծված,
Յեւ անփուլթ ժամիս իմ հնչած յերգում
Ձե՛ր ել նըշմարվում իմ սիրտը խոցված...

Ա՛հ, ինչպես սաստի՛կ՝ այն յերկրնքի տակ
Արբեցնում եր ինձ լույսը հարաճուն,
Յեւ ծո՛փս եր ծավի, և ջո՛ւրն եր հըստակ
Յեւ ալյակն ափին խըփում եր հընչո՛ւն...

* * *

Կա՛ց. լույսն ե թըրթռում, թեվերը փրռում,
Յեղնում անհունից պատկերը յերկրի.
Թե ծով, թե ցամաք, ըզգում են համակ
Կենարար հեվքերն ընծայվող որի:

Թունդ գինու նրման՝ լույսը անսահման
Հեղվում ե բացված սկիհն աշխարհի.
Յեվ հոգնած ույժեր՝ հանգչած վողջ գիշեր՝
Զարթնում են մեկ-մեկ թարմացած, արի:

Յեվ վեհ թափ առած՝ ափեն արարած
Հաղորդ ե փրթթման պայծառ ցելեկի,
Կյանքի հըրաշքին հավիտյա՛ն-կրկին
Բերում ե ընծա ամե՛ն արժեքի...

* * *

Քընքո՛ւյշ յերեկո... Հեռվում՝ կապո՛ւյտ ծով...
Սիրտըս չե՛՝ ճնշված նախկին թախիծով:
Դիտո՛ւմ եմ, ըզգո՛ւմ հոգուս մեջ—հանգի՛ստ,
Յեվ շուրջըս—անդո՛րը՝ վե՛հ ու խորանի՛ստ:

Խաղաղության մեջ դողո՛ւմ ե հանկարծ
Հեռավոր զանգի ձայնը թովարժարծ
Յեվ յերեկոյի հանդարտ ովկյանում՝
Մարող ուշքիս պես՝ լուռ անհետանում:

Յեվ նորի՛ց՝ անհո՛ւն՝ տիրում ե անդորր...
Մըխում ե ծըխանն ուղի՛ղ, անխոտո՛ր...
Հո՛վս ել ե մընջել՝... Վոչ ձայն, վոչ շշո՛ւկ...
Լոկ խաղաղություն՝ խոր ու վեհաշո՛ւք...

Կ Ղ Ջ Ի Ն

Կա խոժոռատես ժայռոտ մի կղզի
Հեռու ովկյանում՝ ջրից գո՛ւ յելած.
Լե՛րկ ե նա. վրրան չըկա հե՛տք բույսի,
Զե՛ն հընչում այնտեղ վո՛չ ծիծաղ, վո՛չ լաց...

Ուր ջուրն ե մըտել նա բոլորակի՝
Պատել են նըրան ժայռեր սեպածել:
Տարերքը մերթ հե՛զ, մերթ թափով ցառկի՝
Գըրկո՛ւմ ե նըրանց, զարկո՛ւմ հեվ ի հեվ:

Յեվ կըղզին դարե՛ր կանգնել ե լըռին,
Անկենդանության սե՛վ անեծքի տակ,
Անսալով անհույզ հետտ կոհակներին,
Յերբե՛ք չը գտած իր մեջ նըպատա՛կ:

Յեվ հավերժական լըռությունն այնտեղ
Ընդհատվում ե մերթ կանչով վայրենի,
Յերբ վորս գիշելով՝ պաակուճներն ահեղ
Ժայռերն են ներկում գույնով արյունի...

* * *

Զըսպվեց աղմուկն իրիկվա դեմ
Յեւ նըվազե՛ց հեւքն ուրի.—
Յեա մի չքնաղ հեքյաթ գիտեմ,
Հեքյաթ վըսեմ անդորրի...

Ամեն մի շունչ վոտք ե կոխում
Շեմքը հաշտող իրիկվա.—
Ո՞ւմ, իմ հեքյաթ, վերջին շողում
Դու հըմայիչ չեա թըվա...

Տեղ են փընդըում հավ ու թռչուն
Այս—այն կըտրի, քըվի տակ.—
Իմ հեքյաթի ձայնն ե հընչուն,
Միտքը՝ պայծառ ու հըստակ...

Մըտած արփին վառեց հըրդեհ.
Ձա՛յն ե հնչում որորի.—
Կա՛ց և լըսի՛ր, հոգնած նըժդեհ,
Հեքյաթն որհնյա՛լ անդորրի...

* * *

Գազաթներով սեգ ու հրպարտ
վեր են կացել սարերն այնտեղ.
Նըրանց ներքեմ՝ անհուն, լազվարթ
Ծո՛փն ե ծըփում վեհ, փառահեղ:

Հո՛ղ են տալիս, պա՛ր են բըռնում
Մանրիկ ամպեր գազաթներին,
Հանջին՝ տըներն իրար խըռնում,
Մինչեմ յեզերք իջնում լռին:

Իսկ յեզերքին ծո՛փն ե յերգում,
Այսօր յերգում խաղա՛ղ մի յերգ.
Վազում դեպ ափ, ըզգույշ գրկում
Ծովի յըղկած քարերը լերկ:

Յեմ ջերմ սիրով՝ վողջի վըրա
Արփին զըվարթ շողքն ե ցանում,
Յեմ նըրա տակ վողջն աշկաբա
Կյանքի փառքով լուռ հիանում...

ԳԻՇԵՐ ԴԱՇՏՈՒՄ

Անսահման դաշտում վառեցի խարույկ
Յեվ պատրաստվեցի անհուն վայելքի.
Մարմինս արագ դառնում եր առո՛ւյգ
Յեվ դյուլթո՛ւմ եր ինձ յերգն արտերայքի:

Դաշտի պես ազա՛տ՝ բացվում եր հոգիս
Յեվ հաղո՛րդ լինում նրա անդորրին,
Յեվ պա՛րզ եր այնքան խաղաղված մտքիս
Նրա ձայների գաղտնիքը խորին:

Յեվ քունը վրրաս իջնում եր խաղաղ
Յեվ ամբողջ գիշեր հո՛փս եր ինձ յերգում,
Որորում հանգի՛ստ ու միապաղա՛ղ՝
Թավշյա կանաչի հոգեթով գրկում...

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Խաղա՛ղ, նրման գոհարների
Աստղերն են շողում,
Հըսկում հանգիստ քո՛ւնը յերկրի.
Քամին չի դողում:

Ձը կա մի ձախ, չըկա շշուկ, —
Կուտակա՛ն հանգիստ.
Անդորրություն խո՛ր, վեհաշո՛ւք, —
Գիշեր խորանի՛ստ...

Ճ Ա Յ Ը

Ճըչում ե մի ճայ ձըմեռվա ծովում
Ճոճվելով յերեր ջրերի վրա.
Արդյոք տարերքից ըզգում ե թովում,
Թե՞ չե՛ կամենում, վառ ծովը յեռա:

Ըմբոստ փոթորիկն աւժգնում ե, աճում.
Սառնւյց ե պատել ժայռերին ամսյա...
Վո՛չ. ճայի համար ծովը չե՛ շահում,—
Վոչի՛նչ են բնության ցույցերը դրժնա:

Նըրա վերելում խաժն ե յեթերի,
Ներքեւ՛ անդունդի փա՛ռքը աննըման.
Նա գե՛ղն ե սիրում հավե՛րժ անթերի
Յեր այդ սիրո մեջ չը գիտե՛ սահման...

Յուդիթ Բրայն Կոնստանց
Կոնստանց Բրայն Կոնստանց
Կոնստանց Բրայն Կոնստանց
Կոնստանց Բրայն Կոնստանց

Մարի Կոնստանց Կոնստանց
Բուկ Կոնստանց Կոնստանց
Ջեյն Կոնստանց Կոնստանց
Կոնստանց Բրայն Կոնստանց

Նա
„ՃԱՄԲԻՍ“ ՃԱՐՔԻՑ

Երբեք չպիտի մոռնա՝
ԲՆ չպիտի մոռնա՝

Որքան անգամ ասելով
Գրեմք և՛ իմ և՛ Ձեր անունը
Բոլոր անգամները միտքով
Պատվով և սիրով անցնենք

1.

Գիշերն իջավ լայն թեմերով,
կախվեց, մընաց աներեր.
կանո՛ւխ, կանո՛ւխ հոծ սեմերով
Ծածկըվեցին լուռ սարեր:

Մութ ե. ճամբա չի յերեւում,
Բուն ե լալիս սոսկալի...
Ահա հնչեց իմ յետեւում
Կանչը սոված չախկալի...

Յես չը գիտեմ՝ շա՞տ պիտ գընամ,
Ո՞ւշ պիտ հասնեմ, թե կանո՛ւխ.
Արդյոք ճամբիս վո՞ղջ պիտ մընամ,
Թե՞ պիտ կորչեմ ինչպես ծուխ:

Յես չըգիտեմ. բայց քաջարի
Գընում եմ յես միշտ առաջ,
Իսկ յետեւից ժըպիլն չարի
Ախն եմ լըսում ու հառաչ...

Ճամբաս — անվե՛րջ, լի փշերով.
 Գընում եմ յեա գլխակախ,
 Գընում եմ յեա սեւ գիշերով,
 Ամեն ըռպե փշաքաղ:

Քարը լեռնից՝ թավալազուր
 Ընկավ, կորավ խավարում.
 Լուռ ե նորից շուրջս բոլոր,
 Մահ ե այստեղ թափառում:

Ա՛հ, մութ հեռուն չունի՛ հրապույր,
 Հոգիս չ'ունի՛ խինդ, ծիծաղ.
 Մութն ե յերկինքն ու անհամբույր,
 Սար ե ու ձոր աջ ու ձախ:

Արդյոք յերկա՞ր պիտի տեւի
 Գիշերն անլո՛ւյս, խավարչտի՛ն,
 Պիտի հասնե՞մ յեա արեւի
 Առավոտյան ջերմ ժրպտին:

Քար լռություն շուրջս բոլոր.—
 Մահասարսուռ, ժանդ ուղի:
 Գընում եմ յեա քայլամուր,
 Լցված թույնով յերկյուղի...

...Յեւ կես գիշերին՝ մըթում խարխափած՝
 Մի լեռան փեշին յես դադար առի.
 Անհողմությունից քաղցրաճաշ արբած՝
 Լըռել եր վրասմ խմբերգն անտառի:

Պինդ սեղմըվեցի մայր հողի կրծքին,
 Յերկա՛ր, անհագուրդ, ջե՛րմ համբուրեցի.
 Յեւ ամբողջ գիշեր ականջ դրեցի
 Գաղթող խմբերի վշտոտ շշուկին:

Սեւ, զարհուրելի մղձավանջի պես՝
 Գաղթին ամբողջ գիշեր չարչարեց հոգիս.
 Ու ճընշվե՛ց ցավից սիրտըս վշտակեզ,
 Ու սո՛ւգը լացի մայրենի հողիս...

Յեւ արշալուսին, յերբ այգը շողաց,
 Անցաւ մխացող ավերակներից.
 Բայց հրդեհվելով այն կըրակներից՝
 Սըգապատ հոգիս այրվեց ու մխաց...

Յես տեսա շարքեր ամբարձ լեռների,
 Վորոնց վրայով պանդուխտ ամպերի
 Շղթան եր չվում համբ ու անշշուկ.
 Յեվ վայրը ամբողջ լու՛ռ եր,
 վեհաշուք...

Քարքարոտ ճամբան ինձ շա՛տ եր
 հյուժում,
 Բայց լա՛վ եր հոգուս այն վայրի
 ծոցում.

Վայրը՝ հանազատ վոգուս մտորուն՝
 Նայում եր վրաս սիրո՛ւ մոգորուն:

Մինչ՝ դժգունադեմ հորիզոնի մոտ՝
 Արեւի վերջին ճաճանչներն աղոտ
 Կուլ ելին գնում իջնող մութի մեջ.
 Ու շոյո՛ւմ եր ինձ հովը թարմ ու գեջ...

Իսկ յերբ համասփյուռ գիշերը բազմեց
 Յեվ առկայծեցին աստղեր փոքր ու մեծ,
 Մնջած անդորրում յես ականջ դրի
 Խորին լըռությանն անցնող ամպերի:

Յեվ ճամբա ընկա այն վեհ գիշերին,
 Ցուպս զարնելով հատաքարերին.
 Յեվ իմ յետեւում դանդաղ չքացավ
 Վայրը յերջանիկ՝ անմարդ ու անցավ...

Զքնաղ լեռներով անցնում եր ճամբաս...
 Գարնան քնքշալի իրիկնաժամին՝
 Խնձ թվում եր վայրն ասես պերճ յերազ
 Յեւ զըվարթ գաղտնիք պատմում զով քամին:

Յեւ ինձ՝ բազմերանգ, սիրուն ծաղիկներ
 Վողջունում եյին գլուխ ճոճելով.
 Նրանց քաղելիս՝ վճիտ ցողիկներ
 Ոժում եյին ինձ՝ ձեռքս թրջելով:

Յեւ անմեկնելի, նորոգիչ մի ույժ
 Ըզգացին իմ խոնջ մարմինն ու հոգին,
 Յեւ դեպի անտառն ուղղվեցի աշխույժ,
 Գիշերն անցնելու նրա լուռ գրկին:

Յեւ սաղարթախիտ, հսկա ծառի տակ
 Դրի պարկ ու ցուպ, վառեցի խարույկ.
 Յեւ մի ցընծություն՝ անծայր ու հստակ՝
 Դարձնում եր վոգիս հզոր յեւ առույգ...

Յեւ թռչունների փառաբանությամբ՝
Անճա՛ռ թուլքի մեջ ծագում եր արփին,
Պայծա՛ռ եր իմ շուրջն, ու հոգիս՝ անա՛մպ.
Յերա՛զ եր ասես բոլորն իմ ճամբին:

Հսկա ծառերի կատարներն ամբարձ
Վոռկեզոծեցին, վառվեցին գունեղ.
Զարթեց լեռան հովն, ու շարժե՛ց հանկարծ
Վառ սաղարթների զա՛րդը փառահեղ:

Յեւ մի վոսկի շող՝ ծառերի միջից
Հասավ, վողջույնով խաղաց իմ դեմքին,
Յեւ սիրտս բացվե՛ց ցնծության ճրջից,
Ու թեթեւացա՛վ իմ ճամբան կրկի՛ն:

Միշտ դեպի առա՛ջ՝ դեպի նո՛ր հեռու
Գընում եյի յես թավուտ անտառով,
Յեւ ամե՛ն աղբյուր, ամե՛ն մի առու
Խոսում եր ինձ հետ կույսի՛ բարբառով...

Հաժեւում վիթխարի, յերկնամբարձ լեռների
 Դժվարանց, ահաւոր կիրճերում,
 Քեզ, արծիւ, սիրեցի, յեւ յերկա՛ր դիտեցի
 Քո ճախրելն անսահման յեթերում:

Ո՛ր, արծիւ, յերնե՛կ քեզ, վոր կիրճում արեւկեզ
 Ինձ նըման չես գնում զորաւոյժ.
 Դու՞նանդի՛ստ ու ազա՛տ, վորպէս սեգ պայազատ,
 Լոկ գիտես քո գահույքն անմատույց:

Սաւառներ, սաւառներ. թող հոգիս ույժ առնե՛
 Նայելով քո հզոր թռիչքին.
 Յեւ յեղիւր ուղեկից, քանի դեռ արգելքից
 Չես յելել թափառող իմ հոգին...

...Յեւ վախճանի յերկա՛ր թափառած՝
 Մի խաղաղ դաշտում ընկա ցանի մոտ.
 Յերեկոն, պայծառ աստղիկներ վառած՝
 Թագցնում եր դաշտի անդերն ու արոտ...

Յես ամբողջ գիշեր անհագ ծծեցի
 Բաւրմունքը անծայր, կանաչ ուկյանի.
 Հովը խաղալիս՝ դյուլթված լսեցի
 Հոգիս փայփայող շրշունը ցանի:

Դաշտի աշխույժից ցնծա՛ց իմ վոգին,
 Ըզգաց մի կորով, վոր վաղո՛ւց չունեւ.
 Յեւ ճամբա ընկա յես լուսածագին
 Դեպի նորանոր, անհայտ հեռուներ...

Անցավ զեփրուն արշալուսին
 Դաշտի կանաչ թավիշով,
 Ուշաթափվեց դժգուն լուսին,
 Որը զարթեց թարմ ույժով:

Ու ցողապատ արտ ու արոտ
 Արեւի տակ վառվեցին,
 Բոլորն այնպես անուշահոտ,
 Կնդրուկի՛ պես խընկեցին:

Որը յեկավ շողուն հանդերձ
 Լուռ շրջակայքն ըզգեցավ,
 Սարը հըսկա ու բարձրաբերձ
 Հեռվում ժպտաց, թարմացավ:

Որը յերգեց այնպես հընչո՛ւն —
 Առավոտյա՛ն աշխույժով,
 Իսկ յես նորից ընկա իմ չուն,
 Լցված նըրա թարմ ույժով:

Յերանավետ, մեղմ անդորրում
 Մեռավ քնքույշ յերեկոն.
 Հեռաստանի լուռ բացերում
 Նըսեմացավ հորիզոն:

Մեղմիկ զեփյուռն անցավ ըզգո՛ւշ
 Արտին գաղտնիք հաղորդեց.
 Արտի շնչած բուրմունքն անույշ
 Սիրտըս, հոգիս կախարդեց:

Անծայր դաշտում յես կանգնեցի,
 Ակունջ դրրի անդորրին.
 Յես հոգեթով ըսպասեցի
 Հառաջացող գիշերին:

Յեւ յերբ բազմեց նա վեհափառ,
 Դալուկ ժպտաց լուսընկան,
 Ճամբա ընկա նորի՛ց թափառ
 Դեպի հեռուն դյուլթական...

Իսպառ հղփացած ցամաքի կյանքից՝
 Ծովի կարոտով յես ճամփա ընկա.
 Յես ծովը տեսա լեռան բարձունքից,
 Իջա հիացած ու յեղերք յեկա:

Հանգչել եր թղեն հըրաշեկ աբխին.
 Ուշ վերջալուսի վարդն եր դժգունում,
 Յեվ ըստվերներով թափանցիկ, նրբին՝
 Խոր անդորրի մեջ գիշերն եր իջնում...

Յեվ մենակ ընկած մութ քարայրի մեջ՝
 Յես ամբողջ գիշեր մընացի անքուն.
 Հեռվի կայմերի լապտերներն անշեջ
 Ինձ լուռ հածումով գերեցին թաքուն:

Ազդանշաններ՝ զմբուխտ ու սուտակ՝
 Ինձ հրապուրեցին դեպի հեռու ծով,
 Ուր ժայռոտ կղզու կուռ ավերի տակ
 Հույժ տարրն ե ծրփում մեղմ փափուցով:

Յեվ պապըղալով աստղերի ցլքից՝
 Ծովը հեք սրտիս պատմեց անընդհատ,—
 Վորպես իր թոռան՝ տատը սրտակից,—
 Մի չընաշխարհիկ, յերազուն հեքյաթ...

Խաղաղ ամիս մոտ ալյակն ե յերգում
Իր հավերժական, թովիչ յերգերից.
Յես մենակ ընկած ավազի գըրկում
Լըսում եմ, բուժվում սրտիս վերքերից...

Ահ, սիրտըս դալուկ, սիրտըս վիրավոր
Վաղճեց եր տենչում ծովը հրաշամիտ,
Վաղճեց եր ըղձում անսահման անդորր,
Վոր ծովը միայն նրան սկսեց ե տար:

Անծայր ապատի ամեն անկյունում
Յուզմո՛ւղք, ցա՛վ, շրվիթ, ատամի կրճո՛ց.
Քա՛ր սիրտն ե այնտեղ յերկավ դիմանում.
Ծո՛վ, քեզ մոտ բերի սիրաս վիրախոց:

Յերգի՛ր, ծո՛վ, յերգի՛ր. ձայնի՛դ եմ կարոտ,
Քաղցրանույշ ձայնի՛դ՝ լի, թարմ աշխույժով.
Յերգի՛ր, վոր բուժվի իմ սիրտը յարոտ,
Յեվ ճամբա ընկնեմ նորոգված ույժով...

ՅՈՂ ԾԱԾԻ ԱՅՐԷ

Գտնված էր արքայի Սեյ Ծափ անկի
ձիարի վրա և Կալան Կալան,
Ենթա արեմանք, այդ Կալան արեման
Կալան Կալան արեման արեման

ԽՐԻՄԻ ՈՒՐՎԱԳԾԵՐ

Ծալան արեման արեման Կալան
Կալան արեման Կալան արեման

Արեման Կալան... Կալան արեման...
Արեման... Կալան արեման Կալան...
Կալան արեման... Կալան արեման...
Այս արեման Կալան Կալան արեման

Երգանք անկի ինչ աշխարհի և զարգանք
 Եր Կարգանքան, Բարձր յերգանք
 Անձ ինչանք յանձն անկանք անկանք
 Կարգանք ան, Կարգանք անկանք անկանք...

Ան, անկանք անկանք անկանք անկանք
 Կարգանք անկանք անկանք անկանք
 Կարգանք անկանք անկանք անկանք
 Կարգանք անկանք անկանք անկանք...

Կարգանք անկանք անկանք անկանք
 Կարգանք անկանք անկանք անկանք
 Կարգանք անկանք անկանք անկանք
 Կարգանք անկանք անկանք անկանք...

Կարգանք անկանք անկանք անկանք
 Կարգանք անկանք անկանք անկանք
 Կարգանք անկանք անկանք անկանք
 Կարգանք անկանք անկանք անկանք...

ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԻՆ

Պառկած եմ տըխուր Սեվ ծովի ափին՝
Ավազի վըրա և նայում հեռուն,
Դեպի արեւմուտք, ուր հոգնած թրփին
Մոտ ե հասնելու ալիքին խաղուն:

Թեթեւ, զովաշունչ, քամի ե մնցնում
Յեւ մեղմիվ շոյում յերեսը ծովի.
Անհոգ ալիքներ գալիս են գընում
Յեր խաղում վերջին շողքովն արեւի...

Արեւը մըտավ... Քամին դադարեց...
Մըթնեց... Ծովն արդեն նիրհում ե մնդորր...
Իմ հոգնած, տանջված հոգին ել թմրեց,
Այս լուռության մեջ՝ վեհ, խորհրդավոր...

Անշեն, լայնաբձակ ու անծայրածիր դաշտով եմ
անցնում...

Հոռւընկա գիշեր՝ վեհ, գեղատեսիլ, անդորր ու
խաղաղ.

Արուսիկներին ճռռոցն է միայն ականջիս հասնում
Անբաժան ճռռոց՝ անմեկին, անդուլ և միապաղա՛ղ:

Ահա առաջիս աղի ծովակի ջրերն են խաղում.
Ի՞նչ հրաշագեղ տեսարան է այն ներքեվում
փռված.

«Կլոր» լիճն է այդ. անջուր տեղերից աղն է
պսպրդում...

Անցնում եմ յեզրով: Բայց ահա դարձյալ մի
լիճ երեվաց:

Անցնում եմ կաթգով «Կարմիր», «Կիսատյան»
լճերի մոտով,

Բլրից մոտենում վես, արծաթաշաղ «Կերլեվում»
լճին...

Սահմա՛ն... ե՛լ հեռուն — դաշտեր, սիվաշներ՝
ծծումբի հոտով...

Ո՛ր, քիչուն լճեր: Այս լայնածավալ դաշտերի
միջին,

Պայծառ որերին կամ գիշերներին դո՛ւք եք,
դո՛ւք մենակ,

Վոր ուղեվորիս սթափվել եք տալիս գեթ առ-
ժամանակ...

ԱՐՄՅԱՆՍԿԸ

Մեղմացավ արդեն ծովիցը փչող ցերեկվա քամին.

Միայն մի յերկու հողմադացների թերեր են
շարժվում.

Թաթար ու խուբբես, բարձրը յերգելով իրիկնա-
ժամին

Փռչոտ փողոցով դեպի հողաշեն տներն են ուղ-
ղվում:

Մոտիկ ճամիյի մինարեյի վրա յերեկաց մուլան

Յեվ ողբ հանկարծ լցվեց հատուկի կլկլոցներով.

Այլ մըզկիթներից միացան ձայներ՝ թախծոտ,
կլկլւլւան.

Ջերմեռանդ ծերեր մեճիտ են գնում ըշտապ
քայլերով...

Մութը տարածվեց, բայց թրեվյելքից ահա հան-
դարտիկ

Սահեց լուսընկտն և թրծաթ շողեր ցիր ու ցան
արեց:

Խեղդուկ տներից փողոց դուրս յեկան
խոնջացած մարդիկ:

Դաշտից՝ կալ հակող թաթարի սրնգի ձայնը
դադարեց,

Յեվ վերջին անգամ հանեց հողմադացն
ընդհատված ճռինչ...

Արուսիկների սուլումից ի գատ լռեց ամեն ինչ...

ՀԱՐԱՎԻ ԳԻՇԵՐՆԵՐԻՑ

Լող ե տալիս լուսընկան աստղի ովկյանում
Յեվ լայաց հետ շողերով խաղեր ե անում.
Իսկ ծառնոցի վիթխարի նոճերը հանդարտ
Ափին ծփող ալիքին նայում են անթարթ:

Ո՛ր, հարավի լուսընկա գեթանի գիշեր.
Յես քեզ նրման լուսառատ գիշեր չեմ տեսել:
Դու հարուցիր անցյալիս քաղցրալի հուշեր,
Յեվ չորս կողմից, ուր լուսնի շողերն են հոսել,
Արծաթ շողով փողոցվել ծով, լեռ ու ծրմակ,
Տեսնում եմ յես փոփոփող ցընորք ու շրվաք...

Լա՛վ ե այստեղ՝ ծովափին, նոճիների քով.
Խաղուն ծովին նայելով ցընորվում եմ յես
Յեվ անմեկին յերկիրներ սրլանում մրտքով,
Ուր սեր կա, սեր անսահման՝ այս վեհ ծովի պես...

ՊԵՐԵԿՈՊԻ ՊԱՐԱՆՈՑԻ ՎՐԱ

Միջորեյի տապից կիզված դժգույն յերկնում
Մի ա՛մալ չը կա: Սայտաճամուկ ու բծավոր
Մողեսն ու իժն արեւի տակ սահուկ անցնում,
Կամ թե անշարժ՝ չոր, տապախարշ — հրատոչոր

Ողն են շնչում քնքշանալով... Լո՛ւռ ե, հանդա՛րտ...
Ահա այնտեղ՝ նեղ շրվաքում, մաճառի տակ
Զգվեց թաթարն. ուղտերն իր մոտ, վես ու հպարտ,
Վորոճալով, շուրջն են նայում աննպատակ:

Արեւելքում մոտիկ ե ծովն. այն ափերից
Հովիկն իր հետ բերում ե մերթ նեխվածքի հոտ:
Բայց դեպի ձախ աչք ածելով՝ յես լեթերից

Ծովը ջրկել չեմ կարենում: Ափերի մոտ,
Այնտեղ՝ հեռվում յերգում ե նա, ծփանք տալիս
Յեվ վեհ, ազատ յետ ու առաջ գնում-գալիս...

ԴԵՊԻ ՀԻՆ—ԽՐԻՄ

(«Իչքի՛» կայարանի կողմից)

Ահա Ուշ-Քույին իր կանաչավետ, պերճ պարիսպ-
ներով.

Շոգից՝ ջրային միրաժն ե դողում ալյակ-
ների պես.

Հարավակողմում— կապուտակ սարեր՝ անընդ-
հատ պարով,

Վորոնց լանջերին շողեր ե սփռել արփին հըրա-
կեզ:

Սոսկալի՜ խորշակ. այնպես ե թրվում հեռվից
ինձ համար,

Թե ծանրը հեվքով հազի՛վ եմ շնչում յերկնահուպ
սարեր.

Նրանց վրա շոգին մըշո՛ւշ ե ցանում մեղմ ու կի-
սամար:

Գեթ ա՛մպը լողար և իր ըստվերով զովություն
բերեր:

Սալը ճոճվելով անցնում է ըստեղ խաղաղ
գյուղերից,
Արտերի միջով ընթանում է նա հեռի ու հեռի,
Մոտ, ավելի մոտ գրնում սարերին, վորոնց կողերից
Շուտով մեղմ քամին կը բերե իր հետ ողն ան-
տառներին...
Կարոտն ինձ տանջե՛ց... Բայց հոգ չե. արդեն
մոտ եմ քաղաքին. —
Ինչպե՛ս պիտ ցնծա, յերբ նրան տեսնեմ, իմ
անձկոտ հոգին...

ՓՈԹՈՐԻԿ ՍԵՎ ԾՈՎԻ ՎՐԱ

Ալեկոծ ծովի մութ հեռուներից՝
Նոթերը կիտած ամպեր են սողում,
Ծանրը կախվելով մըռայլ յեթերից՝
Թանձրը, թեք շերտով տարափ են հեղում:

Փայլակն ե շողում, և դողդողագին
Յելնում են մութից ամպերի կույտեր.
Ակընթա՛րթ միայն... և ահա կրկին՝
Խոժոռ ու ճնշիչ՝ կախված ե յեթեր:

Ահեղ շանթերի բոցը կապուտակ
Բըռնկվում ե մերթ սաստիկ ճայթոցով:
Կոհակն ե գալիս—և ժայռերի տակ
Ջարդ ու փշուր լինում սոսկալի կոծով.—

Իսկ հոծ քառսից նորերն են յելնում,
Անզուսպ յերախով թափում փրփուրներ,
Բայց ափ չը հասած հեվիհեվ ընկնում,
Թողնում են սպիտակ, սահող շղարշներ...

«ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԺԱՅՌԻ» ՎՐԱ

Ծովափի մամուտ, սեզ ժայռի գլխից,
Ուր ծովիը հասնել իզո՛ւր եր ուզում,
Դողով համակված և ծանրաթախիժ՝
Յեա ալիքների յերգն եյին լըսում:

Վեհ, հանդիսավոր յերգն ալիքների՝
Վոր գալիս եյն փրփրադեզ շարքով,
Հնչում եր ուժգին, հպա՛րտ ու արի,
Լի՛ ազատության դյութիչ հրմայքով:

Անհուն Ազատի վորդվոց ախոյան
Ժեռուտ ափերն ե՛լ՝ ալեկոծ, խոժոռ՝
Ունկընդիր եյին այն խմբերգության
Յե՛վ ըսքանչելի, և՛ խորհրդավոր...

ԱԼՈՒՊԿԱՅՈՒՄ

Հովիկն անցավ... և շնչա՛ց
թարմ սոսին... .

Խորշո՛ւմ պատեց անդորր ծովի
Յերեսին... .

Լուսնի ճամբան այնպես թովի՛չ
Շողշողաց... .

Բյուրեղ ալիքն ավին գգվեց—
Յետ լողաց... .

Ա՛խ, հարավի չքնաղ գիշեր,
Բուժիչ ող,

Հեք քուրիկիս հիվա՛նդ բերի
Յես ձեզ մոտ... .

Կանաչավուն, անտառապատ
Հաղթ լեռներ,

Բուժե՛ք նրան ձեր շնչերով
Կենսաբեր... .

ՍԻՄԵԻՋԻ ԾՈՎԱՓԻՆ

Տապը կեսորին սաստիկ է կիզում
Շոգի՛ ե ըղխում թմրած ժայռերից,
Ալիքներն՝ ուրախ՝ ափերն են լիզում,
Դյուզված շրջակա չքնաղ վայրերից:

«Հըրաշք» ժայռն իմ դեմ համառ ու
անթարթ
Նայում է ծովի պայծառ հայելուն,
Իսկ շուրջն ամեն ինչ լուռ է ու հան-
դարտ,
Ամեն ինչ՝ հմայիչ, հոգեթո՛վ—փայլուն:

Յես ջուրն եմ մտնում: Կոկ ճալաքարեր
Փռված են ծովի վրճիտ հատակին
Յեվ այնտեղ պահված անհամար դարեր՝
Դողում են սիրտն ու կախարդագի՛ն:

Ինձ փաղաքշանքով ալիքն է լիզում,
Դյուզված՝ յեղերքի չքնաղ վայրերից,
Իսկ տապը այնպես սաստիկ է կիզում—
Վերջին հյուսիս առնում սրմբած ժայ-
ռերից...

ԾՈՎԱՓԻՆ՝ ՅԵՎՊԱՏՈՐԻԱՅԻ ՄՈՏԵՐԸ

Հարթ ավազն, ինչպես դեղնավուն դիպակ,
կապույտ Պոնտոսի ափն է յեզերում:
Տոթ է: Ծովը մեղմ քնքշանք է բերում:
Նստած եմ ափին ծարավ ու պապակ:

Հորիզոնի մոտ՝ կապույտին տալով
Խրրիմի գրավիչ լեռներն են կանգնած:
Ծովն, արեգակի գգվանքից հոգնած,
Ծփում է, յերգում՝ նազուկ խայտալով:

Հեզիկ հնչյունով ալիքներն ափին
Զրգում են անփույթ մարգարիտ, գոհար.
Յեվ ժիր խաղերի անվերջ սիրահար՝
Կայծեր է վառում նրանց մեջ արփին:

Փարթամ Խրրիմի այս համեստ ծոցում
Արբեցնում է ինձ հեղեղը լույսի,
Իսկ ծովի յերգած որորն ատլասի՝
Քուն ներշնչելով՝ աչքըս է գոցում...

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԳՈՒՐԶՈՒՖԻ ՄՈՏ

Գիշերվա քնքույշ, վոլորուն շուքեր
Դժգնեցին, մեռան այգի ժամերին:
Յեվ սոխակների հոգեզմայլ յերգեր
Զարթեցրին ավի ցողավետ մերին:

Ահա՛ պարզագիծ՝ մութից դուրս յեկան
Հեռավոր ավեր, Այուդադ, պուրակ...
Կարմիր ու փայլուն գոտիներ հագան
Յեվ ցիր-ցան յեղան ամպիկներն արագ...

Ալյակներն աշխույժ, գընում են, գալիս,
Ախորժ հըպումով ավերը պաշում,
Կամ հանկարծ՝ հընչուն ծըփանք են տալիս
Յեվ ազատ ծովի բացերը փախչում...

Այգն արեվյելքում արդեն բաց արավ
Մի հըսկայական, բազմերանգ հովհար,
Յեվ փայլի ծովի զարդարանք դառավ
Աստղի՛կը միայն՝ ինչպես հուր- գոհար...

Յեվ ամբողջ չքնաղ յեգերքը զուքվեց
Վառ արշալույսի փարթամ պերճանքով,
Լույսի թըմրեցնող հեղեղում սուզվեց՝
Լուռ անըջելու բուռն տենչանքով...

Ս Ե Վ Ծ Ո Վ Ը

Մանիշակագույն շղթան լեռների՝
Զգված Եվքսինյան ծովի յեզերքին՝
Անսում ե անհագ՝ հրաշափառ տարրի
Հավե՛րժ սիրելի հոգեթով յերգին։

Բուքն ե, թափ առած, անցնում սարերով,
Կայծակն ե ճաթում ամառվա տապին, —
Անհողողող Յայլան կուսակա՛ն սիրով
Ծովի՛ն ե լսում, լուռ կանգնած ափին։

Յեվ տարրը հըզոր յերգում ե, յերգում
Իր շքեղափառ անյեղծ յերգերից՝
Ալիքներն ափի ժայռերն են գրկում,
Շաղ տալիս գոհար ու փախչում նորի՛ց...

ՅԱԼԹԱՅԻ ՄՈՏԵՐՔԸ

Յեզերքը քիչ-քիչ կորչում ե հեռվում...

Փարոսի կարմիր կըրակն ե վառվում...

Մուխ Այուդ-դադի թիկունքի վըրա

Շուտով՝ անմեկին լույսը կ'երերա:

Անծայր, անսահման Եվքսինն, իմ դիմաց,

Իր յերգն ե դարձյալ հնչեցնում կամաց,

Կենդանացնելով հուշե՛ր անցյալի

Տարորեն ախորժ թախիժներով լի:

Յե՛վ՝ ընկերակցած թարմաշունչ հովին՝

Որոր ե ասում մահիկը ծովին.

Ծրփանքն ել ափին պաշեր ե բաշխում,

Ճերմակ փրփուրով յեզերքը նախշում...

Յե՛ս՝ մենակ նստած անդորր յեզերքին՝

Կ'անսամ Պոնտոսի հրաշափառ յերգին,

Մինչե՛վ յերազուն հանգստին հասնի

Կանաչին տըվող մանգաղը լուսնի...

Ս Ե Վ Ծ Ո Վ Ի Ն

Դու թավշյա կապույտով ժպտացիր հոգեթով
Բայդարյան բարձունքին իմ դիմաց.

Անտառով քաղցրաբույր քեզ հասա, սքանչաթնւյր,
Յերբ արփին թագնւոյեց շիկամած:

Վողջ գիշեր յեզերքիդ ուշ դըրի քո յերգիդ,
Յեւ հալվե՛ց շընչիդ մեջ իմ հոգին.

Խնձ անտես թեւերով սըլացրիր յեթերով
Ու հասցրիր հըմայքիդ բարձունքին:

Իսկ այգի լուռ ժամի, յերբ շնչեց զով քամին,
Ավազիդ ջերմ համբույր տըլեցի

Յեւ կայտա՛ռ ու արի՛, անդորրո՛վ լեռների
Դեպի նոր հեռուներ շըլեցի...

Յ Ա Լ Թ Ա Յ Ո Ի Մ

Խաղաղ յեզերք. լուռ յերեկո.

Կիսաշուք.

Այլակն ասիին սեր ե պատմում

Կամացուկ.

Ցուք են թափում վերից աստղեր

Ու լուսին,

Լույսեր վառում ծովի կնճռոտ

Յերեսին...

Քամին գարթեց... Ամբողջ գիշեր

Ծոցի մեջ

Կը կատարեն նավեր անկամ

Յել եւ եջ.

Մինչ, ու զգիշեր սարալանջին

Ծաղկազարդ

Յես կը հաժեմ հոգով ուրախ

Ու զըվարթ...

* * *

Ուր՝ ցատկման պատրաստ այծյամի նըման՝
Դեպի ծովն ե մըղվել Քիյիք-Աթլաման*,
Ուր ավերն ունեն ուրոյն մի հըմայք
Յեւ վեհ են թովքով վերջալույսն ու այգ, —

Ջըգտում եմ հիմա կամքիս վողջ թափով,
Փափագում ապրել, դյուլթված՝ պե՛րճ ափով,
Յեւ հյո՛ւղ ունենալ ծովից վո՛չ հեռի
Յեւ անհա՛գ լըսել յերգն ալիքների:

Բայց իղձըս միայն լոկ իղձ ե մընում,
Որերս՝ մըռայլ՝ գալիս են, գընում,
Յեւ պայքարի մեջ՝ դա՛ռն ու սի՛րտ մաշող՝
Ամբողջ տարիներ անցնում են անշող...

Բայց հոգիս՝ խորքի՛ց, խո՛ւ թափով, կրկին
Ջըգտում ե հիմա հեռու յեզերքին,
Ուր՝ ցատկման պատրաստ այծյամի նըման՝
Դեպ ծովն ե մըղվել Քիյիք-Աթլաման...

*) Քիյիք-Աթլաման հրվանդան ե Սեւ ծովում թեո-
դոսիայի յեւ Քոքթերեյի մեջտեղ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԵՐ

Կյանքն աշխատանքով է կենդանի:
Քաղ աշխատանքով իրենց կենդանի:
Սերը քեզ համար չէ՝ թե՛ անհամար,
Այլ՝ միտքով քեզ համար՝ աշխատանքով:

Ո՛ր ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԵՐ

Ես հաճեցի քեզ, ես հաճեցի քեզ չէ՛ քեզ:
Աշխատանքով քեզ համար՝ աշխատանքով:
Դուքն էլ քեզ համար՝ աշխատանքով:

Քաղ միտքով իմ թե՛ քեզ համար չէ՛ քեզ:
Կարճա՛յն աշխատանքով քեզ համար՝ աշխատանքով:
Սերով քեզ համար՝ աշխատանքով չէ՛ քեզ:
Դուքն էլ քեզ համար՝ աշխատանքով:

Կյանքն աշխատանքով է կենդանի,
Կարճա՛յն աշխատանքով է կենդանի:
Սերով քեզ համար՝ աշխատանքով չէ՛ քեզ:
Կյանքն աշխատանքով է կենդանի:

Այս քաղաքին պատկանող ամեն ինչը
Քանի որ քաղաքի Գործընկերները
Այս քաղաքին պատկանող ամեն ինչը
Քանի որ քաղաքի Գործընկերները

Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները

ՔԱՆԻ ՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԵՆԿԵՐՆԵՐԸ

Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները

Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները

Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները
Քանի որ քաղաքի Գործընկերները

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ը

Կյանքն աշխատանքո՛վ պիտ աճարանա:
Թող այս խոսքերի խորհո՛ւրդը վըճիտ,
Յերբե՛ք քեզ համար չը թըվի անխնա՛,
Այլ՝ մինչեւ գու Կա՛ս՝ հընչե ականջիդ:

Ով պահից լըքված՝ կյանքն ե վերլուծում,
Նա կու՛յր ե, նա կյանքն իսկի չը գիտե.
Աշխատանքից դուրս՝ նա զո՛ւր ե փորձում
Գըտնել վայելքի պալա՛տ գրանիտե:

Թող վիճակը մերթ լինի դա՛ռն ու խի՛ստ,
Հարված աշխատանքն ըսպառե ույժեր,—
Որհնի՛ր դաւ նըրան. կը գա յեւ հանգիստ,
Գործոն ցերեկին կը փոխե գիշեր:

Կյանքն աշխատանքո՛վ առաջ ե քայլում,
Նըրանո՛վ միայն մարդն ե յերջանիկ.
Ուր աշխատանքի հանճարն ե փայլում,
Կյանքն ունի այնտեղ վեհությա՛ն կընիք...

ՋԿՆՈՐՍՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Ալիքն անցավ. որը մըթնեց.

Դեպի քո՛ւն:

Առավոտյան նորի՛ց կ'ելնենք

Աննըկուն.

Ծով դուրս գալով՝ մենք կը բանանք

Առագաստ,

Ծովի հեռվում կը թափառենք

Լուրջ, ըզգաստ.

Մեր յերգերով՝ ձըկնորսության

Ուղեկից,

Մենք չենք ըզգա տա՛պն ել՝ կիզող

Յերկրնքից,

Յեւ՛ լոկ տարված աշխատանքի

Թըրթիռով,

Խոչ ու տրնքում կ'արդարացնենք

Անխըրով...

* * *

Գործարանի աշխատանքում
Ըսպառվեցի՛ն իմ ույթեր:
Անպե՛տք եմ յես հիմա կյանքում.
Որքս որ չե՛, այլ՝ գիշե՛ր:

Յեվ տըրորվա՛ծ ու հաշմանդամ՝
Քարշ եմ տալիս գոյություն.
«Ինչո՞ւ, — հարցնում, — կյանքս փարթամ
Անցավ տխո՛ւր, ապարդյո՛ւն»:

Աշխատանքի վարձով՝ միթե՞
Վո՛ղջը գընվեց իմ անձի, —
Առողջությո՛ւնն իմ յերկաթե
Քաջ անդամե՛րն առնացի:

Ո՞վ ե արդյոք կարգ սահմանել՝
Հյո՛ւթը ծըծել սաստարի,
Հետո՞ ազատ՝ փողոց վանել,
Վոր մուրալու թափառի:

Արդարությո՛ւն, խա՛չ հանվեցիր,
Բայց չե՛ս պարտված, իրավո՛ւնք:
Սատա՛ր, յերբե՛ք մի կասկածիր.
Պիտի ռըրվի՛ մեր արցունք...

ԱԾԽԱՀԱՆՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Մենք գետնի սըրտում,
Անթափանց մըթում,
Պոկում ենք շերտեր սե՛վ քարածուխի.
Ծանրը ողի մեջ՝
Լապտե՛րն ե անշեջ
Մեզ գործի, խուսման ցույց տալիս ուղի:

Աշխատանք—դաժա՛ն,
Շահը—անընշա՛ն,
Վշտանգներ—ցընցո՛ղ, մահ—ահաբեկի՛չ.
Բայց կամքը բախտի
Վորի՞ն չի հաղթի,—
Յեվ... այստե՛ղ ենք մենք,— գեհենի բնակիչ:

Մենք լոկ վերեվո՛ւմ
Ազատ ենք հեվում,
Ըզգում մի բոպե, թե մե՛նք ել ենք մարդ.
Այնտե՛ղ ել, սակայն,
Մենք հյո՛ւր ենք միայն,
Յեվ մեր կյանքն՝ իրոք՝ կյանք չե, այլ՝ թակա՛րդ...

ԴԱՐԲՆԻ ՅԵՐԳԸ

Ինչպես շիկնած յերկաթն ե միշտ կըռանին հըլո՛ւ,
Այդպես՝ կյանքի զարկերի տակ յե՛ս եմ լըռելու.
Թող յես կազմով լինեմ ամո՛ւր, պի՛նդ՝ ինչպես յերկաթ.
Աշխարհային սալի վըրա շո՛ւղ եմ աննըկատ:

Բայց յես վորքան չընչին լինեմ, — կա՛մք ունեմ հըզոր,
Տե՛նչ, վոր դարձնեմ վաղըս՝ պայծա՛ռ՝ վո՛չ ինչպես այսոր.
Իմ քուրայից դուրս պիտի դա՛ս այնպիսի՝ գործիք,
Վորի առաջ պիտ խոնարհվի՝ մարդկային կեղծիք:

Իմ կըռանի ամե՛ն մի զարկն ի՛նձ յեվ ամենքի՛ն
Միշտ, քա՛յլ առ քա՛յլ պիտ մոտեցնենո՛ր կյանքի շեմքին.
Իմ գո՛ռ յերգին ծընունդ տըվեց իմ բորբո՛ք քուրան,
Վորը մի նո՛ր պաշտամունքի պիտ դառնա խորա՛ն...

ԴԵՐՁԱԿՈՒՀԻՆ

Ուստիանե Համալյանին
Խեղճ ես, վիճակն այնպես անգոհթ սեղմել ե
քեզ իր ճիրանում,
Վնր՝ կարիքից ինչպե՛ս դուրս գաս—ինքըդ ել
չե՛ս իմանում.
Միայն՝ լարվա՛ծ ույժ ես տալիս միակ գեներիդ՝
ասեղի՛ն,
Յեվ աշխույժի լոկ ստվե՛րն ունի դեմքըդ
գունա՛տ ու դեղի՛ն։

Տարիների շարքն ե անցնում, — քեզ համար չե՛ն
խի՛նդ, ծիծա՛ղ.
Գիտե՛ս, վոր կյանքն ամեն մարդու շնորհ չե
տըվել աջ ու ձախ.
Յեվ լոկ սըրտիդ սիրածի հետ ըզգում ես քեզ
յերջանիկ,
Յերբ նա կըրժքին քեզ սեղմելով կրկնում ե ջերմ.
«Ի՛մ ջանիկ»։

Բայց նա քեզ շա՛տ դուր ե գալիս ա՛յն պահերին
մանավանդ,
Յերբ սատարի հասու խելքով բաց ե անում
վեհ ավանդ,
Յերբ՝ ավելի՛ հավատալով աշխատանքի
հաղթության,
Տենչում ես դու, վոր նա իշխե՛ արդարությամբ՝
հավիտյա՛ն...

ՀԱՉՎՈՐՆԵՐԸ

Մանգաղն արտում՝ շողերի տակ՝
Յելից մինչ մուտն արեգակի՝
Զիմանալով իսկի վաստակ՝
Գո՛վքն ե յերգում աշխատանքի:

Յեվ շարքն աշխույժ հընձվորների՝
Լուռ՝ չափածո շարժումներով
Անց ե կենում առա՛ջ, հեռի՛,
Յերգո՛վ, վորում թա՛փ կա, կորո՛վ:

Յեվ այս ժամին դաշտը վռակի
Կարծես լինի հեքյաթ—թովում,
Վըսեմ մեհյա՛ն աշխատանքի,
Ուր գերագույն զոհ ե բերվում:

Յեվ՝ մըտովի՝ ամե՛ն հնձող
Փա՛ռք ե տալիս աշխատանքին,--
Որհնում գետնի ույժերն ու ցող,
Մարդու թափած քի՛րտըն անգին...

Սիրտ սրտին լույս հաղթի
Եւ սրտին լույս ի լույս
Վարձակացանքս առնուի
Վարձակ խորան լույս լույս

Եւ զարգաթիւ զիւր լույս
Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս

Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս

ՍԻՐՈ ՊԱՐԸ

Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս

Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս
Եւ լույս խորան լույս լույս

* * *

Սերը սրտիս՝ լուռ գիշերին
Յեւ սլացա լեռն ի վեր,
Վստահացած վառ աստղերին,
Պարզած հոգուս լայն թեւեր:

Յեւ գագաթին՝ դիվախնդում
Մի ձայն հասավ ականջիս—
Ու մի փերի խոր անդնդում
Կանգնած տեսա առաջիս:

Կանչում ե՛ նա, դյուրթում վարից.
Դըքըչն ասեւ—զանգի ձայն.
Օսկ՝ սրբատարփ՝ յես կասուրբը
Օած եմ նետվում լուսյայս:

Ո՛, չերս սրբո խրզա՛րս զօրո...

Ո՛, անմոռա՛ց ակնթարթ...

Փերի, զորե՛ղ, սուր քրքջիւր—
Թող զարհուրե՛ն վիշտն ու դարդ:

Թող անդնդում, գետեղերքին,
Նո՛ր արշալույս մեց ժպտա,
Յեւ դու՝ սեղմած ինձ քո կրծքին՝
Արբիւր սիրուց ու խնդա՛...

ՍՊԱՍՈՒՄՆ

Վերըստին հոգիս՝ աշխույժով տարված՝
Անհուն ցնծության ծովումն ե լողում
Յեվ իմ հանդիման դեմքդ ե շողում,
Արեգակնային վեհ փայլով վառված:

Դու գիտե՞ս արդյոք, ինչպես սրտատրոփ
Ըսպասում եմ յես քեզ հանդիպելու,
Յեվ պատահելիս՝ վորքա՞ն խորասփոփ
Բերկրանք ե տիրում թախծապատ հոգուս

Ավա՛ղ, չը գիտե՛ս... Ո՛ր, թե ըզգայիր,
Վոր դո՛ւ յես պաշտած իմ աստվածունին.
Ո՛ր, թե սրտիդ մեջ ապաստան տայիր
Ջերմ ըզգացմունքիս հախուռըն գրոհին:

Դեռ վարագուրված մշուշոտ քողով
Գաղտնիք ե մընում հոգիդ ինձ համար.
Բայց յես քո խոսքին կը սպասեմ համառ՝
Ջերմացած հույսի լուսասփիռ շողով...

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Քո ցամառներից ահա առի,
Փախա մոտերքն անտառի.

Ահա առի

Ու փախա,

Ինչպես սրտոտ մի տղա:

— Ասա՛, անտա՛ռ, դու գիտե՛ս.

Ո՞վ ե իրավ՝ նա՞, թե յես.

Դու գիտես

Յերկուսիս.

Այստե՛ղ փարեց նա վզիս...

Հովը սուրաց դեպի ձախ,

Բերեց հնչուն մի ծիծաղ.

— Դեպի ձախ

Մի՛ նայիր.

Ո՛ր, ների՛ր ինձ, խընայի՛ր:

Միթե իրո՞ք բարկացա, —

Քո համբույրից խենթացա.

Բարկացա

Հանաքո՛վ.

Նստենք դարձյալ՝ քովեքով...

* * *

Կը գամ, կամաց կը բաղխեմ
Լուսամուտիդ ապակին...

Քո շրթերից կը քաղեմ
Սիրո համբույր տապազին:

Դժգունադեմ, հեզ լուսինն
Ամբողջ գիշեր կը թափե
Քո կաթնագույն յերեսին
Ցուքերն անբիծ սատափե:

Ամբողջ գիշեր իրար հետ
Կը զրուցենք խոսքընդհատ,
Մինչեւ լուսինն ուշավետ
Թեքվի դալուկ ու վհատ:

Ու կը տիրե լուսաբաց...
Դու սիրահեղց կը նիրհես.
Յես դուրս կը գամ սիրաբբած՝
Հրաժեշտ—համբույր տալով քեզ...

ԼՈՒՍԱՎՈՐ ՊԱՀԸ

Լի յե խինդով սիրտըս անհեծ,—
Իսկի չունեմ դարդ ու ցավ.
Սիրո ալիքն ուժգին գրոհեց,—
Կյանքըս նորի՛ց լուսացավ:

Կորավ լքման հույլը տրտուր,
Ձը կա թախիժ ծանրաթեվ,—
Ասես մըրրիկ ահաաբառու
Անցավ, մընաց իմ յետեվ...

Լուսավոր պահ, վե՛հ ես հավետ.
Դու իմ հոգին հարուցիր,
Սըրտիս մըռայլն իսկույն յեվ եթ
Արիր իսպառ ցան ու ցիր...

* * *

Ամե՛ն առավոտ յես հիշում եմ քե՛զ,
Յերբ ծիրանափառ մի ծո՛ւլ անսահման
Խնձ ցույց ե տալիս այգը հրաշատես, —
Այնքա՛ն՝ իր գեղով՝ նա քե՛զ ե նրման:

Ամե՛ն կեսորի միտըս ես գալիս,
Յերբ ամրան արփին հախուռըն թափով
Յերկրին կենարար իր տաքն ե տալիս, —
Այքա՛ն ե նրման նա քեզ իր տապով:

Ամե՛ն երեկո յես քե՛զ եմ հիշում,
Յերբ մեղմ վերջալույսն՝ աննրմանու վես
Մարում ե խաղաղ քնքույշ մշուշում, —
Այնքա՛ն՝ մարումով նրմանում ե քե՛զ...

*
* *

Ես՝ լրիվ լուսնյակն ամբան— ծո՛ղն անխըռով
Շաղո՛տ ծաղկին,
Պերճ ափերով:

Մեղմ զեփյուռին,
ռազում պաղ աղբյուրին — ծա՛ռն արմավի՜,
Մի՛շտ ծարավի:

Կարոտակեզ,
Կյանքն ըզգում՝ այդ սիրո մեջ՝ լի՛ իմաստով,
Խո՛ր հոգեթով:

Յե՛ղ մի՛նչե՛ղ մա՛հ
եմ սիրո՞ւմ և պիտ սիրե՛մ, իմ խո՛ր հրճվանք,
Հմա՛յիչ իմ կյանք...

* * *

Դու — համակ թո՛վք, հրաշալի՛ք,
Յեթերային մի եյակ.

Յես — քեզ համար խաղալի՛կ,
Անհոգության մի կատակ:

Անտես բոցում այրվեցի՛,
Յեվ քա՛ղցր ե ինձ այդ բոցում.

Մի՛շտ պիտի գամ քեզ այցի՛
Մոխրանալու քո խցում:

Պիտի խրմցնեմ քեզ նեկտար,
Մինչեվ ց՛հա՛գ դու արբես.

Իսկ դու խաղա՛ անդադար

Ինձ հետ՝ անհոգ թռչնի պես:

Թող այս ներկան դանդաղի՛,

Ծանոթ վախճանն ուշանա՛.

Դու՝ անձնատուր հո՛ւր — խաղի՛

Վարվիր ինձ հետ անխընա՛...

*
* *

Այսոր յեկար հրաշափայլ՝
Այգի շաղով սրբակրված,
Ինձ մոտեցար շտապաբայլ, —
Յեւ մենք նստանք գրկըրված:

Ձը խոսեցի՛նք համարյա,
Բայց ժամն անցավ աննրկառ.
Խուլ՝ դեպի հոգսն առորյա՝
Համբուրվեցինք խանդակաթ:

Համբուրվեցինք մերթ հեղի՛վ,
Մերթ մոլեգին ու հախո՛ւռն.
Համբուրվեցինք անհաշի՛վ,
Սիրո՛վ անզուսպ, կրքո՛վ բուռն...

Այլ թրուա՛վ քո դեմքից.
Ուշքի յեկար հաղիվ հա՛գ:
Դու հեռացար իմ շեմքից,
Վոր իրիկունն ելի՛ գա՛ս...

*
*
*

Չքնաղ կրծքիդ խոնարհված՝
Խնչպես ախրո աղբյուրի,
Ծծում եմ յես՝ վողջ լարված՝
Թուվքը մարմնիդ նեկտարի:

Տապ շրթերիս հպումից՝
Արբած գըլուխդ ընկավ յե՛տ.
Յեվ խիղախված ըմպումից՝
Չուվե՛լ կ'ուզեմ յես քեզ հետ...

Հանկարծ թափով պարզում թեվ,
Գրկում ես ինձ կատաղի
Յեվ համբուրում հեվիհեվ
Մազերն այրվո՛ղ իմ գլխի:

— Ե՛լ չե՛մ իշխի հուր կրքիս, —
Հազիվ եմ յես մըմնջում,
Սեղմում ամուր քեզ կրծքիս,
Չուվում քեզ հետ... և մնջում...

* * *

Յես քեզ այրեցի ծովի յեզերքի՛ն,
Սրտիս կրակո՛ւմ յես քեզ այրե՛ցի.
Խո՛ւմ մընացիր դու ծփոնքի յերգին,
Յերբ գերեցի յես սե՛րդ կանացի:

Յես քեզ այրեցի այնպիսի՛ բոցով,
Վոր պիտի հուզե քեզ հոգուդ խորի՛ց.
Դու պիտի ապրես արտամուխ խոցով
Յեվ տանջվես անուշ ու տանջվես անորից:

Ուր ծովն եր յերգում այնպես փռահե՛ղ,
Յես քեզ այրեցի գերազո՛ր բոցով.
Հիմա ի՛մն ես դու, ինձ հետ—մե՛ն տե՛ղ,
Թեկուզ և փախչե՛ս, անցնես ծովե ծո՛ւլ...

* * *

Յես հիշում եմ անկողինդ,
Խնձ գրկելիդ հերարձակ.
Յես հիշում եմ տաք մարմինդ
Յեվ վրճիռդ համարձակ:

Յես հիշում եմ վառ անցյալը
Այն յերազը անմոռաց,
Իմ մեկնումը, հեռանալը
Յեվ ապրելը՝ կես—մեռած:

Յես հիշում եմ, պարզ տեսնում եմ
Պատկերները անցյալիս,
Յեվ լալիս եմ, և հարցնում եմ. —
—Ո՞ւր ես այժմ, անձկալիս...

*
* *

Դու հեռացար վա՛տ աչքերով.
Ինչո՛ւ համար, — չը հասկացա:
Յեկա քեզ մոտ՝ թախծոտ, խռով,
Նստա շեմքիդ և լուռ կացա:

Զուր փորձեցի խոսել քեզ հետ. —
«Թող ինձ մենակ» — մըմնջացիր:
Յե՛վ լողջ ջարդված՝ դարձա յես հետ,
Յե՛վ ինձ ճնշե՛ց թախիժն անծիր:

Շա՛տ խորհեցի՝ ինչո՞ւ արդյոք
Այդ յերեկո՞ տար ինձ «վո՛չ».
Յե՛վ հասկացա, յեղա անհոգ,
Վոր դա միայն խաղ ե կնոջ...

*
* *

Դուրսը քամին թո՛ղ վռռնա,—
Այսոր վայելք ըզգանք մենք.
Մեր սերն այսոր պիտ խորնա՛.—
Վերցրո՛ւ գինին. դե՛հ, խըմենք:

Ա՛հ, չարածճի սիրասուն,
Ինչպե՛ս դու շուտ գինովցար.
Բացվեց անուշ քո լեզուն,
Դեմքըդ փթթեց ալ—պայծառ:

Դու վեր կացար, բազմոցի
Վրա ընկար՝ կուրծքդ բաց.
Թըռա քեզ մոտ, գրկեցի,
Համբուրեցի սիրարբած...

Ծա՛նր ես արդեն դու հեվում.
Ի՞նչ եմ անում,—չը գիտեմ.
Վարագույրի յետեվում
Դու իմ կամքին չե՛ս ընդդեմ...

* * *

Խոնարհվի՛ր վերաս
Խորհրդով գաղտնի.
Ինչպես վառ յերազ՝
Թող գիշերն անցնի:

Յես ըղձում եմ՝ թափ
Սիրո փոթորկի,
Այրող-մրկող տապ
Գերագույն կրքի:

Վայելքն եմ տենչում
Ըզգալ խորապես.
Քե՛զ եմ շնչում,
Վոր ազատ լինես:

Վերաս խոնարհվի՛ր,—
Փարեմ քո վզին.
Այրի՛ր ինձ, այրվի՛ր
Ինձ հետ միասին...

*
*
*

Յեկա քեզ մոտ. դո՛ւ պայծառ՝
Նստած ես գով սենյակում.
«Ինչո՞ւ այսքան ուշացար»—
Կարդում եմ քո հայացքում:

Վաղո՛ւց եմ քեզ կարոտել.
Բայց յես դիտմամբ ուշ յեկա...
Կարողացա՛ յես հաղթել
Քո պաղուծյունն անըզգա:

Լա՛վ ե հիմա ինձ ու քեզ.
Խինդ ե փայլում յերեսիդ.
Այսօր անհո՛ւն թովք ունես.
Կուզեմ փարե՛լ բաց վզիդ:

Գիտե՛մ ինձ հեշտ թույլ չես տա,
Բայց այդ չա՛րած չե՛մ մեկնի.
Այսօր վրաս չե՛ս խնդա,
Այսօր մի բան կը լինի՛...

* * *

Քո լուսավառ սենյակում
Զքնա՛ղ ես դու — անմեկի՛ն.
Պագնո՛ւմ ես ինձ ու գրկում,
Ներս չե՛ս թողնում վո՛չ մեկին:

Դրռան կամա՛ց մոտեցար
Ու մա՛ն բերի՛ր բանալին. —
Ինձ հետ կիսե՛լ կամեցար
Ազատ սիրո ավելի՛ն:

Թեթեվագեց՝ դու նստար,
Թեվով վզի՛ս փառեցիր,
Համբույրներո՛վ անդադար
Կիրքս սաստի՛կ վառեցիր...

Շա՛տ շարություն արինք մենք,
Ինչպե՛ս յերկու յերեխա:
Պետք է, սակայն, վրկայենք —
Այսօր համե՛ստ յես յեղա...

* * *

Դժգույն՝ յեկար, ասիր տրտում,
Վոր չե՛մ բնավ իրավացի,
Վոր զո՛ւր եմ յես չարասրտում՝
Քեզ մատնելով մռայլ թախծի:

Քո համոզիչ մեղմ խոսքերից՝
Սիրտս յեղավ կտո՛ր—կտո՛ր.
Բայց լո՛ւռ կացա, —յեվ դու նորից
Քեզ մոտ դարձար դանդաղ, անդորր:

Դու չե՛ս կարող տանջվել գաղտնի.
Տես՝ չը թագցնես յեվ հիացմո՛ւնք,
Յերբ յես այսոր՝ հենց մութն ընկնի՝
Գամ, քեզանից խնդրեմ շրթունք...

ՍԻՍՎՈԼՆԵՐԻ ԳՐԹԻՑ

* * *

Աշնան թախիծի տաճարը մըտա
Յե՛վ բազկաւորած ծունր շոգեցի,
Քեզ բազմութեան մեջ իսկո՛ւյն ջոկեցի,
Քեզ իսկո՛ւյն գըտա:

Ու գորշ վարագույլն անլույս տաճարի
Հանկարծ վար ընկավ՝ յերկու կես եղած,
Յե՛վ գարնան փայլի հեղեղը տեղաց—
Կայտա՛ռ ու արի՛...

Յե՛վ եկատազի մեջ վոգիս մենուճար
Բազմած ե հիմա վըսեմ գագաթին
Ու տեսնում ե նա շղարշ ծիր կաթին,
Վորով դու իջա՛ր:

Յե՛վ ըզգում ե նա շունչդ վարդաբույր,
Յե՛վ աղերսագին խնդրում ե խոսել.
Մենակ որբերի գետե՛ր են հոսել.—
Ո՛ր, տո՛ւր ինձ համբույր:

Տուր ինձ մի համբույր, և դուրս գանք իսկույն
Այս բազմութունից, վոր պրկել ե մեզ:
Սիրո նեկտարից շա՛տ պետք ե խըմես,—
Դու շա՛տ ես դժգույն...

Կը թողնեմ տաճարն աշնան թախիծի
Յե՛վ քեզ հետ սիրո հովիտը կ'երթամ
Ու կը նըվիրեմ քեզ հոգիս փարթա՛մ,
Առա՛նց մի բծի...

* * *

Յեա լաց յեղա հոնգուր—հոնգուր,
Յեա վողբացի սրգազգեց.
Սիրտըս նորից մընաց թափուր,
Նորից յեղա գահընկեց:

Յեվ յերբ որվա շողքը մեռավ,
Ջարթեց աշխարհն յերազի,
Ինձ ցընորմունք իր գիրկն առավ,
Յեվ՝ որորված՝ յեա ասի,—

Աղջամղջի վեհ խորանին,
Սիրտ իմ, խոնարհ գլուխ տուր.
Հսկի՛ր՝ երբեք չըջիջանին
Քո կերոններ բոցահուր.

Մռայլի դեմ ծաղրդ նետիր,
Խաղա՛ղ մընա—անսահման,
Ու կաց արթուն յեվ ուշադիր
Համբ Անհայտի հանդիման...

*
* *

Վոսկի շողեր յերազների,
Ծիրանեգույն անըրջի
Լուռ մարեցին. հոգիս՝ գերի,
Հիմա մուլար պիտ շըրջի:

Ո՞վ եր արդյոք այն մեկն անտես,
Վոր ինձ յեղավ ուղեցույց,
Բերեց հեքիս թախծի պարտեզ —
Սեպ սարերով անմատույց:

Անդնդախոր ըստորոտում
Ամպն ե կախվել սեվացած.
Ամպն ե այնտեղ խուլ վորոտում,
Լողում ըզգույշ ու կամաց:

Յեկ ո՞վ գիտե՝ յե՛րբ կը հառնե
Քայլն առաջվա հըմայքի
Ու սըրտիս մեջ յե՛րբ կը զարնե
Զանգը նորո՛գ վառ այգի...

ԴԱՐՔԻՆԻՆ

Կըռան խըփիր շեկ յերկաթին՝
Թող նա կայծեր արձակե.
Դիր մեխ վրան, զա՛րկ գագաթին. —
Ի՛նչ ե յերկաթն. ա՛ռ, ծակե՛:

Գաղտնիք շա՛տ կա յերկրի վերա, —
Հո՛ւրն ե պակաս լուծելու:
Առանց հըրի ի՞նչ կը յեռա.
Մարդն ի՞նչ անե՛ խեղճ, հըլո՛ւ:

Մոլա՛ր, շըվա՛ր՝ փընդըում ե նա
Գաղտնիքների բանալին,
Յե՛վ՝ ո՛վ գիտե՛ յե՛րբ կը դառնա
Գըլուխ տալու քո սալին:

Սար ու ձորեր կը թափառե,
Խոր կընճիւններ լի՛ դեմքին. —
Կը գա, քեզ ձեռք կը կարկառե
Նըվիրական քո շեմքին:

Կըռանագեն հուժկու դարբին,
Մի որ, ընտրյա՛լ կը դառնաս.
Քեզ կ'ողջունե նորոգ արփին
Իր շողերով հեղանագ...

* * *

Ահա մեռավ լույսն աննըկատ,
Զով յերեկոն մեղմ հեվաց:
Դու ինձ պատմիր վոսկի՝ հեքյաթ՝
Սիրո՛ւմ, կըրքո՛ւմ տողորված:

Կանչիր՝ թող գան ասպետն ու կույս,
Անցնեն գոտին ծիրանի,
Արեւի դեմ՝ անհող, անյուզ՝
Իրար գրկեն գեղանի:

Յեւ մինչեւ այգ արբե՛ն իսպառ
Սիրո անուշ հեկտարից,
Ազա արփին՝ հանդիսաւիառ
Ժպտա սարի կտտաւրից:

Վոսկի շողքից նրանք զարթե՛ն,
Ըզգան անճա՛ռ հիյացում,
Սիրո տապից շմա՛ծ արդեն՝
Քայլեն դեպի հագեցում...

*
*
*

Պալատը, վորտեղ կյանքի մեղրածոր
Խի՛նդն ես վայելել դու մինչեւ հագուրդ,
Ճեղքե՛ր ե տալիս, փրկում որեցոր,
Անցորդի վրա հեվում մահվան ցուրտ:

Տաճա՛րը, վորտեղ այնպես ջերմեռա՜նդ
Աղոթում եյիր և հառնում կրկին,
Դարձել ե հիմա խապառ քարուքանդ
Յեւ հանգչում ե լուռ մոռացման գրկին:

Քեզ համար աշխարհն անծայր—անապատ:
Գնա՛, պալատի շե՛մքը համբուրիր,
Յեւ՛ անհո՛ւյս սիրով, ջե՛րմ ու խանդակաթ՝
Ավեր տաճարի քարերի փարիր...

* *


Կանգնած եմ դըռանդ, ինչպես մուրացիկ,
Յեւ վողորմություն գերագո՛ւյն հայցում.
Քո դո՛ւռը ինձ բա՛ց, ժըպտա՛ գեղեցիկ,
Տուր տենչող սրտիս պայծառ գոհացում:

Կյանքի ճամբաներն ինձ քեզ մոտ բերին...
Յես թափառեցի, տանջվեցի յերկա՛ր.
Յես կարկրտաբե՛ր, շանթո՛տ ամպերին
Այնքա՛ն տոկացի՝ հոգնա՛ծ ու տրկա՛ր:

Յեւ հիմա իմ մեջ աշխույժ ջի՛ղ չը կա,
Վոր նախկին թափով հաղորդվեմ կյանքին.
Նայի՛ր՝ ի՞նչ եմ յես.—մի անգոր հըսկա՛
Դա՛ռն վողբացող կորուստըս անգին...

Կանգնած եմ դըռանդ, ինչպես մուրացիկ,
Յեւ վողորմություն գերագո՛ւյն հայցում.
Քո դո՛ւռը ինձ բա՛ց, ժըպտա՛ գեղեցիկ,
Տուր տենչող սրտիս պայծառ գոհացում...

ՎԻՇՏ, ՑՆՐՈՔ, ՅԵՐԱԶ,



ԵԼԵԳԻԱ

Մութ ու մըռայլ որ. յեւ հողմի հեծծյուն.
Անձրեւի ե գալիս, վիշտն ավելանում:
Հանկարծ անձրեւիին հաջորդում ե ձյո՛ւն.
Բայց թացը նըրան շուտով կըլանում,

Ծածկում ե աչքիցս... Անցնում են ժամեր...
Յեւ տեսնում եմ յես մի ուրիշ պատկեր.
Յերկինքը դարձյալ մութ, վառագուրված,
Իսկ գետնի վրա քնքույշ ձյուն փռված:

Այս խավարամած, մըռայլ որվա պես
Ցավատանջ հոգիս միշտ մութ ե, անլույս,
Յեւ իմ սրտի մեջ՝ թախծո՛ւտ, վշտակե՛զ՝
Վաղո՛ւց չե փայլում շողշողուն մի հույս...

—Ո՛ր, սի՛րտ իմ, տոկա՛ և մի՛ վհատիր.
Չե՞ վոր մշուշոտ որերից հետո
Գարուն ե գալիս, նորոգվում յերկիր՝
Պայծառ, կենսատու արեւի ներքո...

ՄԵՌՅԱԼ ԾՓԱՆՔԸ

Իմ թախծալի, մըռայլ հոգին
Կյանքի կըրովում վաստակած՝
Հուզվեց, ինչպես ծովն աշունքին,
Անշափ լացեց ու սրգաց:

Սակայն ինչպես մեռյալ ծրփանք, —
Հավետ թաքսւն աչքերից —
Վոր՝ աննըշմար՝ լո՛ւռ ու անկյա՜նք
Ծովն ե հոգում խորքերի՛ց, —

Հոգիս յեռաց, բայց չը բացեց
Իր անհատնում, վիշտն ու ցավ,
Յեվ ով նրան խո՛ր թափանցեց,
Լոկ նա՛ իմ վիշտ իմացավ...

Այդպես՝ հանկարծ ազատ ծովում,
Ուժգին մեռյալ ծրփանքից,
Ահեղորեն նա՛վն ե ճոճվում՝
Մեկնած խաղաղ յեզերքից...

* * *

Մըթում հեվացին խոժոռ ամին ու ծով,
Սիրտըս պարուրվեց անմեկին թախծով,
Յեվ յես սըգացի, վոր մըռայլ հեռվում
Ե՛լ մեկնած նավից հետք չեր յերեվում:

Այժմ անհայտ ամին մեն-մենակ ընկած՝
Յես զո՛ւր եմ ճըգնում փարատել կասկած.
Վո՛չ. ե՛լ ինձ համար չի՛ լինի սփոփանք
Յեվ ինձ այգն իր հետ չի՛ բերի նոր կյանք:

Մինչդեռ ծրփանքի ձայնը՝ յեղերքին
Միշտ ե՛լ ավելի հընչում ե ուժգին,
Յեվ՝ դըժնյա ու սեվ դիշերի նըման՝
Ճընշում ե հոգիս սուգը անսահման...

*
* *

Յերկա՞ր պիտ հաժեմ
Աշխարհիս վըրա...
Մինչեւ յե՞րբ արդյոք
Սիրտս պիտ թրթռա...

Ա՛խ, թե վախճանի
Ժամը գիտենայի,
Յես խիղա՛խ թեվեր
Կամքիս կը տայի...

ՄԵՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Յեա կյանքում խոտոր շավղով եմ անցնում,
Անոք ու մենակ գոյություն տանում.
Խուլ եմ յեա մարդկանց ոտալ աղմուկին,
Ոտար ե նրանց իմ գոցված հոգին...

Խինդով, հառաչով թող կյանքը յեռա.
Իմ առանձնության բարձունքի վերա
Յեա մի հարկ ունեմ ըզգացմունքների—
Անդորր ապավեն՝ շրփոթից հեռի.—

Այնտե՛ղ ե ապրում մեկուսի հոգիս՝
Անանջատ ընկերն ըմբո՛ստ, խե՛ռ մըտքիս,—
Յերազանքների լուռ յեթերի մեջ,
Վոր ցոլքե՛ր ունի՝ քնքույշ և անշեջ...

Մենա՛կ եմ անցնում շավիղըս կյանքի՛,
Ուր փառքն ու մետաղ տիրող են մտքի,
Ուր վառ ե փայլում կենսասփիռ աբխին,
Բայց շատե՛րն են ստրուկ մահվան մըրափին...

* * *

Ուշ գիշերվա մըռայլ ժամին

Մեկն է լալիս փողոցում:

— Ո՞վ է այդտեղ... — «Անտուն քամի՞ն»:

— Ի՞նչ ես, քամի, դու կոծում:

— «Ո՛ր, չե՛մ կարող քեզ չը պատմել

Սուգն ու շիվան հարկերի,

Վորոնց ներքեվ մա՛հն է բազմել

Դարձրել մարդկանց հեք գերի:

«Յես լըսեցի այնքան անհույս

Աղերսանքներ փրկության,

Ձայներ՝ հայցող մի շո՛ղ, մի լո՛ւյս

Մըղձավանջում զրկության»:

— Լո՛ւռ կաց, քամի. մարդը մարդուն

Գա՛յլ է այսօր վոխերիմ.

Ձը կա՛ նըրան կյանք զըվարթուն,

Կա լոկ չարիք ու շիրիմ...

* * *

Մի՛շտ դեպի վեր գընում ես սե՛պ իմ ուղին,
Զե՛ն դադարում գոռալ ամպերն իմ գըլխին,
Հո՛ղմն ե ջանում ինձ տապալել խո՛ղ թափով,
Քայլըս կըտրում անձրեմն՝ ահե՛ղ տարափով:

Բայց՝ կըռվելով խոչերի դեմ անդադար՝
Դարձյա՛լ—լարված—գընո՛ւմ եմ յես՝ ե՛լ վերեւ,
Զըգտում անդուսալ դեպի տենչած լո՛ւյս կատար,
Ամպերից վե՛ր, ուր չե մըթնում վառ արեւ:

Կյանքն ինձ այնտեղ պիտի հայտնե վե՛հ խորհուրդ,
Յեւ պիտ ըզգա փընդըող հոգիս լի՛ հագուրդ.
Իմ ջանքերին վարձ գերագո՛ւյն պիտ լինի,—
Յես պիտ դառնամ ի՛նքըս մի մասն Անհունի...

ԿՅԱՆՔԻ ՊԱՐԸ

Նայում եմ կյանքի այլանդակ պարին,—
Տեսնում եմ դեմքեր՝ փոշու մեջ կորած,
Յեւ ունայնության լայն ճանապարհին
Վողջն՝ իր ողակով ցամփն ե բոլորած:

Ու խուլ հանդիսում հյուսված են իրար,
Յեւ յերգը անհոգ, յեւ լացը անհույս,
Յեւ՝ վողջի վրա՝ մտքով վշտարար՝
Բախտն ե տավառնում՝ դիտելով անհույզ:

Բայց ըզգում եմ յես՝ կանգնած մեկուսի՝
Վոր ինձ չորս կողմից այդ պարն ե պատում,
Յեւ՝ միշտ բաժանված ներհակ յերկուսի՝
Նա քըննող հոգուս թափն ե աղճատում:

Յեւ կյանքի պարին նայում եմ մոլար,
Յեւ ըզգում եմ ինձ, թեյեւ չե՛մ ուղում,
Վոր ինքս ել եմ ես պարում միալար
Մերթ մի և մերթ մյուս նրա խեթն կիսում...

* * *

Յեղնում են մեկ-մեկ հուշերըս պայծառ

Յեւ հին որերից խոսում են անուշ.

— «Դու այսքան տարի մեզ չը մոռացա՛ր

Յեւ կանչում ես դեռ՝ թեպետ հե՛ք, անճշտ...

— Ահ, յես ձեզ ինչպե՛ս, ինչպե՛ս մոռանամ,

Յերբ կյանքիս իմաստն ել խոր ե ձեզնում,

Յեւ լարված մտքով քանի՛ ձեզ բանամ,

Այնքան խո՛ր հրմայք ձեր մեջն եմ տեսնում:

Ձեր մեջ ե, ձեր մեջ վողջ լավը կյանքիս.

Ինձ չե մընացել ել վոչինչ, վոչինչ.

Յեւ ձեզ ե միայն ճանաչում հոգիս

Մըխիթարության իր աղբյուրը ջինջ...

Իմ վողջ մանկությունն ունեք դուք

ձեր մեջ, —

Այգն իմ գոյության, յերբ կյանքն եր--

յերանգ.

Ահ, դուք մընացի՛ք միշտ անմար, անշեջ...

Յեւ պայծառ լույսով շողացիք վրաս...

* * *

Նորից ասիերին զարնում ե ասեղ
Յելած Գոնտոսի ծփանքը ըմբոստ
Յեմլ հորինելով խմբերգ փառահեղ՝
Իրար են անցնում ալիքներն ընդոստ:

Իսկ ինձ՝ այդ պարին արդեն սովորիս՝
Ծոփն, ինչպես առաջ, չի մեկնում խորհուրդ,
Յեմլ ասա կրկին դառնում անդորրիս,
Ու շրջում եմ յես անտարբեր ու ցուրտ:

Բայց ել ավելի խորն եմ յես ձրգում
Հայացքս՝ կյանքի, առեղծվածի մեջ
Յեմլ անճար կերպով լարված խո՛ւլ ճիգում՝
Ըսկըսում լուծել նրա հուրն անշեջ...

* * *

Հեյ դու, կյանքի ծով, ինձ որոր ասա...
Յես շատ հոգնեցի,—քընել եմ ուզում:
Հերի՛ք ե, վորքան տոկացի՛, տեսա՛,
Յեվ վերապըեցի խորացո՛ւնց հուզում:

Վոչ համբերություն, վոչ ել ուժ մընաց,
Վողջը ջլատվեց կըռվում ցերեկի.
Յեվ յես՝ հուսախար, յեվ ես՝ վըշտագնած՝
Գիշերն եմ մըտնում ե՛լ առանց դեկի:

Այնքան թափ, կորով սպառվեցին ունայն,—
Տենչած սահմանիս, ավաղ չը հասա:
Խոր նիրհ եմ հիմա յես ըղձում միայն.—
Դո՛ւ ինձ, կյանքի ծով, ել որոր ասա...

* * *

Կյանքիս հեռվի մեջ
Շատ կա պայծառ եջ,—
Բախտի շատ բարիք յեղավ իմ ձեռքին,
Ապրեցի վայելք,
Ըզգացի վերելք,
Պրտղավետ կյանքի լույս ճամբաներին:

Թեյել ակամա,
Բայց խեղճ եմ հիմա
Յեվ թըշվառ գլխիս չեմ գըտնում մի ճար,
Յեվ ջանք եմ անում,
Սեվ միտքս վանում,
Գոյության կըռիվ մըղում չարաչար:

Յեվ իմ նեղ ուրին,
Լի՛ցավով խորին,
Յերբ՝ յերեւո՛ր, շըվար՝ զո՛ւր եմ դեգերում,
Հե՛յ վախ, հենց հացի՛
Կարոտ մընացի
Դաժան վիճակիս պի՛րկ մագիլներում...

* * *

Վոռնում եր աշնան սըգավոր քամին,
Յերկինքն՝ անըստի՜ն թափում արտասուք.
Յեւ խուլ, մթամած իրիկվա ժամին
Ինձ այցի յեկան իմ դարդն ու իմ սուգ:

Յեկան դեպ անկյունն իմ ցուրտ սենյակի,
Ուր յես՝ մոռացված՝ կուչ եյի յեկել,
Նայեցին վրաս համա՛ռ, շեշտակի՛,—
Ասես մտադիր ինձ ահաբեկել:

Նստեցին կողքիս ու զրույց բացին.
«Վաղո՛ւց ե, վաղո՛ւց չենք յեղել քեզ մոտ...
Վերջ լինելու չե այս թոն ու թացին.
Յերկինքը հավետ պիտ մնա թխպոտ»...

Սիրտս՝ ճմլված՝ նվվո՛ւմ եր սաստիկ
Նըրանց ահարկու մըտքերի ցայտքից:
Այն յերեկոյան՝ խո՛ւլ, չարաբաստի՛կ՝
Դուռս չեր բացում վո՛չ մի կարեկից:

Տեվում եր խավարն անվերջ ու անծայր.
Գրկում եյին ինձ իմ դարդն ու իմ սուգ.
Գլուխը՝ խոնջած՝ հա՛ թեքվում եր վայր
Յեւ յես չ՛ուեյի լալու արտասուք...

* * *

Գիշերներ դաժան՝ գիշերներ անքուն,
Անվերջ սպասումով լույսի վորոշման.
Տանջալի ժամեր՝ բարդված իմ հոգուն
Յեւ մի'տքս հուզված—կոշմարի՛ նրման:

Խեղճ միտք, անհատում հոգսերով տարված,
Դո՛ւ, հոգնած մարմին,—յերե՛ր, ուժաս-

պա՛ռ,—
Ո՛ր, ի՜նչ ծաղր. անդորր ձեզ չը կա՛ իսպառ:

Ձեզ սեւ յերախով գիշերն ե սպասում,
Յեւ այսոր, — վաղն — անդուլ, անվախճա՛ն,
Ուր արբա՛ծ պարով՝ որհասն անկասում
Ձեր կատարածի սարքել ե խրախճան...

Ա Կ Կ Ո Ր Դ Ն Ե Ր

Յերբեմըն հոգիս ըղգում ե մեկին,
Վոր մի տեղ թախծոտ եղանն ե հընչում,
Վոր մեկը մի տեղ՝ փողելով ուժգին՝
Դեպի մե՛ծ հանդես մաքդկանց ե կանչում.—

Վոր մի տեղ՝ մամռոտ ժայռերի ներքեւ,—
Գալով վաղեւադ ու մըռնչալով,—
Կոհակն ե խըփում ցասկոտ, հեւլի հեւ
Յեւ յետ նահանջում փրփուր շաղ տալով.—

Վոր մի տեղ ծառերն անանց անտառի
Դեպի ծով սահող ամպերն են դիտում,
Վորոնք, քերելով ժայռերն ավերի,
Աստիճանաբար նոթերն են կիտում.—

Վոր ամպերից վեր սարերի վըսեմ
Արծիվն ե ճախրում ազա՛տ ու հըպա՛րտ.
Վոր մեկն՝ ըղգալով ապագան նըսեմ՝
Դեպի մայրամուտ քայլում ե անդարդ...

* * *

Ինչպես լերեխա, ձգված՝ փողոցում,
Քամին աղեխարշ լալիս եր, կոծում,
Յեւ մութը՝ դաժան վրհուկի դեմքով՝
Ուրունքը անցնում իմ ձյունոտ շեմքով:

Բուքն եր թափ առնում... Տարափը ձյունի
Խառնում եր ստվերներ մըռայլ ու դժնի,
Յեւ հողմը՝ մերթ խոլ ու վորոտադմուկ՝
Ցնցում եր անեղ հյուղըս վողորմուկ:

Յեւ հակադրելով շրջապատ կյանքին՝
Հոգիս—անցյալի հուշերըս անգին,
Տրտմում եր, ճընշվում բուքի հեվքի տակ,
Սուգով վերապրում պայծառ հիշատակ:

Յեւ ճնշման ներքո հուսահատական՝
Զո՛ւր եյի ճըգնում լուսացնել ներկան,
Յեւ ստվերներն ոթիս յերեւ խառնարում
Հույսերիս մարման պարն եյին պարում...

Ո Ր Ո Ր Ս Ր Տ Ի Ս

Ո, սիրտ եմ, հիմա քո՛ւն յեղիւ խաղա՛ղ.
Քո՛ւն յեղիւ, իմ սիրտ՝ խոնջած, չարչարվա՛ծ:
Կյանքը՝ բրտագո՛ւն յեւ միապաղա՛ղ՝
Հոգնեցա՛վ արդեն քեզ հասցնել հարված:

Քո անցած ուղին փոշի յեր մոխիր,
Թափը՝ խոլ կըռիւ ընդդեմ նենգ խոշի.—
Սիրտ իմ, դու հիմա խաղա՛ղ քո՛ւն յեղիւ,
Մի՛ տար արձագանք եւ վո՛չ մի կոշի:

Թող քեզ մեծ Անդորրն անե հովանի,
Յեւ մի՛ հաւցնիր դու. «սա կյա՛նք ե,
Թե՛ մա՞հ».

Վոչ վո՛ք քեզ արդար չի՛ պատասխանի:—
Դո՛ւ, սիրտ իմ, խաղա՛ղ քո՛ւն յեղիւ հիմա...

Adagio

Մըթին, ճընշի՛չ գիշեր.
Խոհեր՝ անհո՛ւյս, մաշո՛ղ.
Չը կա՛ անմահ մի շող,
Վոր ինձ դարձնե՛ ույժեր:

Գիշեր՝ սպանի՛չ, յերկա՛ր.
Հանգչում յերեր լույսի.
Լռումն անգոր հույզի.
Հոգիս՝ լքա՛լ, անկա՛ր:

Գիշեր՝ անվե՛րջ, կայո՛ւն.
Մարում արտիս դարկի.
Ղողանջ մահվա՛ն զանգի.
Հավե՛րժ խաղաղություն...

ՄԱՀԻ ՇԵՄՔԻՆ

Ըզգում ե հոգիս սլարզ ու բացահայտ,
Վոր շուտով կը տամ աշխարհին հրաժեշտ...
Հընչի՛ր դու, իմ յերգ, հընչի՛ր հըրացա՛յտ,
Դարձի՛ր ողջովին հուսախա՛բ մի շեշտ...

Կյանքը՝ մի սլատրանք, մարդը՝ մի ըստվեր,
Աշխարհը՝ մի խուլ յեւ հեղձուցիչ բա՛նտ.—
Յես այս աշխարհում տեսա շա՛տ սեւեր,
Յես գո՛ց բանտի մեջ մընացի կաշկանդ...

Իմ բոլոր իղձերն ուրիշ բան չեյին,
Բայց միայն—յերա՛ղ՝ անկատա՛ր, սլատի՛ր.
Իմ կյանքն այլ բան չեր, բայց լոկ տենդային,
Մըշտապե՛ս լարված սըրտաճաճ թըրթիռ...

Յեւ այսոր՝ կանգնած որհասի դըռան՝
Ծաղրո՛ւմ եմ յես կյանքն ու նըրա թափեր,
Յեւ՛ հեգնող ժըպիտ երեսիս վըրան՝
Դեպ՛ անեյացում քայլում անտարբեր...

Ի Մ Թ Ա Ղ Ո Ի Մ Ը

Յ ե ր ա զ

... Յեւ իմ անշունչ դին՝ ամփոփած անգարդ,
անշուք դագաղում
Տանում եյին լուռ, դանդաղ քայլերով, դեպի
գերեզման.
Արեւի շողերն իմ դալուկ դեմքին զո՛ւր եյին
խաղում,
Ինձ զո՛ւր եր ուղում դյուլթել յեթերի կա-
պույտն անսահման:

Ինձ հավերժական թըմբիւրն եր տիրել:
Վոչ վո՛ք չեր լալիս,
Վոչ վո՛ք չեր հուզում անդորրս վրսե՛մ ու
յերանալի՛:
Հովասուն, կայտառ գեփյունն եր խայտում,
ինձ համբույր տալիս,
Մըրմընջում վըրաս տաղեր հիասքա՛նչ ու
զըմայլելի՛:

Յեւ ծովը հեռվից՝ իր ալիքների թավշե խըմ-
բերգով
Իմ ուրախությունն, իմ անհուն խորին հըրճ-
վանքն եր հայտնում,
Վոր չեյի մեռել մենակ թաղվելու սրտախոց
վերքով,
Վոր իմ կարոտած, անգին քույրիկի կողքն եյի
գընում...

* * *

Հիվանդ եյի յես յեւ ապրում՝ անհուշ՝
Մղձավանջների դիվային պարում.—
Մերթ թըվում եր ինձ, թե իղձո՛ւ անուշ՝
Զեռքով՝ յերկնքի աստղերն եմ մարում:

Մերթ ընկնում եյի ցած՝ դեպի ուկիտն՝
Յեւ կա՛յմը գրկում խորտակվո՛ղ նավի.
Զո՛ւր եյի փնդրում ափը փրկության
Կոհակների մեջ,—քաղցած, ծարավի՛...

Մերթ վողջը հանկարծ վառվում եր լույսո՛ւ
Յեւ ամբան բոցեղ տո՛թն եր ինձ տանջում,
Յեւ պարտեզներից՝ քաղցրաբո՛ւյր ու զո՛ւ
Ուրա՛խ վըհուկներ ի՛նձ եյին կանչում...

Մերթ անապատի թաթառո՛ւ տարված՝
Գի՛րկն եյի ընկնում հասարակածի՛,
Յեւ գլխիս վերեւ շանթերը վառված
Թըվում եյին ինձ մի-մի հրեղեն ձի՛...

Յեւ յերբ դիվային պարը վերջացա՛ւ
Ու նորի՛ց մըտա աշխարհն իրական,
Քա՛ղցր եր ինձ ըզգալ, որ չ՛ունեմ ել ցաւ,
Բայց ոտա՛ր թըվաց իմ հանգիստ ներկան...

Doloroso

Գիշեր ե, գիշեր. մնջել են վաղուց
Հեվիհեվ կյանքի աղմուկն ու ժխոր.
Մտել ե հանգիստն ամեն տուն ու խուց,
Բերել ե թմբիր՝ ըղձալի՛ յեվ խո՛ր...

Այս աշխարհապատ անդորրի գրկին
Ի՞նձ համար միայն չըկա մոռացում.
Հոգիս՝ սգազգեց՝ հաժում ե կրկին
Մեռած իղձերիս գերեզմանոցում:

Յեվ միտքս նորի՛ց կանգնած ե հիմա
Նույն անոստնելի անդունդի յեզրին.
Արդյոք վո՞րն ընտրել. նույն կյանքը, թե՛ մա՞հ.—
Յեվ մութ ոթիս մեջ լալիս եմ լուին...

ՎԱՌԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Յերեկոն բազմեց... Լուռ ե իմ ոթում:
Վառարանիս մեջ վառվում ե կրակ:
Ֆշշում են փայտերն ու խիստ ճարճատում:
Ի՛նչ լաւ ե. նստե՛մ. չըվառե՛մ ճրագ:

Գզվասեր փիսոս ինձ մոտ ե գալիս,
Ցատկում ե, նստում կրակի դիմաց:
Յես իմ մտքերի՛ն թռիչք եմ տալիս,
Իսկ կատուս վրաս մըռռում ե կամաց...

Մոռացման թեվերն ինձ վեր են բառնում,
Յեթերի ծովով սլացնում հեռո՛ւ,
Ուր յերազների հույլն ե սավառնում
Յեվ ուր մուտք չունի բախտը քինառու...

Արթուն ժամացույցն ուժգի՛ն զարկերով
Հանկարծ մտքերիս ընթացքն ե խըզում.—
Յեվ ահա նորի՛ց՝ մըռռո՛ցն անխըռով
Յեվ վառվող փայտի շշուկն եմ լըսում:

Ե Լ Ե Գ Ի Ա.

Վարդան Բաքիյանին

Այգն այսոր ունի
Փարթամ ծիրանի
Յեւ որին կյանքի թրթիռն ե բերում.—
Իմ այգը իսկի՛
Չունեցաւ վոսկի
Յեւ կանուխ մարեց թխպոտ յեթերում...

Արփին կը լողա,—
Որը կը շողա,
Որը կը կանգնի հոյակա՛ւ—պայծառ.—
Դո՛ւ, իմ կյանքի որ,
Մընացիր պղտո՛ր,
Յեւ ամպրոպներո՛վ գլխովըս անցար...

Կիջնե մեղմ գիշեր,
Յեւ հոգնած ույժեր
Խաղաղ կը ննջեն մինչեւ արշալույս.—
Յես քո՛ւն եմ փնդրում
Կյանքիս գիշերում,
Բայց ինձ վո՛չ քուն կա, վո՛չ զարթելու
հույս...

* * *

Դանդա՛ղ, ձանձրալի՛՜ որն է ընթանում,
Ձե՛ բերում մի հույզ—դա՛որն կամ անու՛յշ:
Դժգո՛ւյն է այսոր իմ ոթե՛վանում,
Յե՛վ զու՛ր է հոգիս փափագում աշխույժ:

Լոկ՝ տաղտկության մեջ՝ ճոճանակն արթուն
Չափում է անխոնջ պահերի շղթան,
Իսկ շուրջն ամեն ինչ ապրում է կեռքուն,
Պահելով որի անդորրն անկենդան:

Մերթ՝ հանկարծ՝ գոցվող աչքերիս դիմաց
Ընկնում է առ պահ մի ծանոթ ըստվեր
Յե՛վ ձայնն ականջիս ասում է կամաց.—
«Ձե՛ս թափահարի դու այսոր թե՛վեր»...

Աչքերըս անկամ բացվում են, փակվում:
Կաղում են ժամերն առա՛նց մի հուզման:
Արե՛վը դեպի հանգիստն է հակվում,
Անպտուղ որին հրում գերեզման...

Յեա յերա՛ղ տեսա, — թե վաղո՛ւց մեռած՝
Սառը հողի մեջ հանգիստ եմ առնում,
Իսկ շիրմիս վերեւ հողմը՝ թափ առած՝
Լիզում ե իմ քարն ու ահեղ վռնում:

Իսպառ հագեցած անպտուղ ննջից,
Լի՛ թողած յերկրիս կիզի՛չ կարոտով, —
Ճգնում եմ դու՛րս գալ նեղ փոսի միջից
Յեւ կյանքի թրթիռն ըզգալ հոգեթո՛վ:

Նո՛ր միայն կյանքի արժեքն իմացած,
Ըղձում եմ կրկի՛ն դառնալ նրա մոտ
Յեւ մարդկանց առջեւ վո՛ղջ սիրտս բացած՝
Հասկացնել սարսա՛փն — ինձ արդեն ծանոթ:

Մարդ ու անասուն, գաղան, հավ յեւ բույս
Տենչում եմ սիրել մի նորո՛գ սիրով,
Որհնել ողն ու կյանք, արեգակն ու լույս
Յեւ ապրել նորից — հա՛շտ յեւ անխռո՛վ:

Յեւ փորձում եմ յես շարժվե՛լ դադաղում,
Ուժեղ ձեռքերով ծածկոցը հըրե՛լ, —
Բայց պրկե՛լ են ինձ խավարչաին հողում
Յեւ դրսից վրա՞ մե՛ծ քար են դըրել:

Յեւ սաստի՛կ կարոտ մեծ պարգեւ — կյանքին,
Յես՝ թակարդն ընկած գաղանի նման՝
Վայրենի ձայնով կանչում եմ ուժգին. —
Յեւ կռճա՛րն իսկույն հանգում ե լուծման...

* * *

Յերեկն իր հոգնած աչքերն ե փակում,
Մարում ե դանդաղ. նա կա՛ յեվ չըկա՛:
Լո՛ւռ ե ու խաղա՛ղ մըթնած սենյակում.
Գրկում ե թըմբիրն ամե՛ն առարկա:

Յեվ ամեն ըռպե՛ թանձրացող մութի
Նոր հոռանքի տակ ել խո՛ր ե դառնում
Ու ցընորայի՛ն՝ անդորրն իմ ոթի,
Յեվ ամեն մի իր ա՛յլ ձեվ ե առնում:

Նայեվ իմ մըտքե՛րն այլ են այս պահին.—
Նըրանք չեն ջոկում իսկություն, ցընորք.
Մերթ՝ անսում եմ յես պահերի սահին,
Մերթ՝ լըսում միայն մի անուշ որորք...

ԱՌԱՆՁԻՆ ԵԶԵՐ

Ե. ՄԱՀՏԵՍՅԱՆԻ ՆԿԱՐԻ ԱՌԱՋ

Սե՛վ, մըռա՛յլ ամպեր յերկինքն են գոցել.
Յեռու՛մ ե Պոնտոսն, ամենի ձայնո՛ւմ.
Ծանըր կոհակներ սարե՛ր են դարձել,
Ահե՛ղ պարի մեջ՝ իրար են անցնում:

Կռծում են նըրանք ժայռը յեզերքի,
Փըրփուրով ծածկում դեմքը տարերքի.
Մըռայլ ե իջնում վո՛ղջ ծովի վըրա
Յեվ թափ ե առնում շտորմը աշկարա՛...

Ա Շ Ո Ի Ղ Ը

Սարալանջին կսկած գյուղի
Մի բաց բակից ծուռ ու մուռ
Սազն եր հնչում հայ աշուղի—
Մելամաղձո՛տ ու տխուր:

Բունեղ կաղնու տակին նստած՝
Յերգ եր ասում մի աշուղ.
Ամբոխը՝ լուռ, շուրջը պատած՝
Լսում նըվագ սրտաբուխ:

Սազն եր խոսում, սազը լալիս,
Աշուղն երգում ցավ ու դարդ.
Հընչում արժան գուլք անելիս
Կորովաձայն ու հըպարտ:

Յեվ այն երգում ամեն մի ձայն
Քաղցր եր, քնքու՛յշ, հոգեսփոփ.
Խումբն՝ ակնապիշ ու լռելյայն՝
Ուշ եր դընում սրտատրոփ:

Աշուղն, անկարծ՝ յերգը փոխեց,
Հնչեց մի շեշտ վըշտահեղ,—
Թե ձորն ինչպես արյուն կոխեց,
Հուրը լափեց տուն ու տեղ՝

Ինչպես լեռներն ալ կապեցին.
Հանուր սուգով վիթխարի
Հոնգուր—հոնգուր արտասվեցին
Լուռ կամարներն այրերի:

Ու նըվագում, յերգում եր նա
Սրտի խորքից ցավագին,
Այնպես, Վոր սիրտ չէր դիմանա
Նրա հեծծուն նըվագին:

Ամբոխի հետ ինքն ել՝ զսպած՝
Լալիս եր նա կամացուկ
Յեւ լարերին խփում հուզված,
Յերգում տըխո՛ւր, սրտանձո՛ւկ...

Յ Ե Ր Ա Ձ Ա Ն Ք

Միրելի քրոջս յիշատակին

Նորից կը տիրե հրաշագեղ գարուն,
կը ժլպտան զվարթ ծաղիկ ու արոտ,
Անուշակ կ'երգե քչքչան առուն,—
Յեւ յես քեզ կը գամ՝ քո շիրմի՛ն կարոտ:

Յես քեզ ձայն կը տամ լուսնյակ գիշերին.
Դու իբրեւ ըստվեր դուրս կը գաս թըմբից,
Թալկադեմ ինձ մոտ կը նստես լըռին,
Իբրեւ Գերահարս—անմեղ ու անբիծ:

Դու դժգոհությամբ ինձ կը կշտամբես,
Որ քեզ մոռացա, մե՛ն—մենակ թողի.
Կ'ասես. «Յե՛կ ինձ մոտ. ա՛խ, յե՛կ վերջապես,
Որ այնպես չը դգամ ճշշումը հողի»:

Հետո կը պատմես մինչեւ ուշ գիշեր՝
Ինչպե՛ս ապրեցինք այս պերճ յեղերքին.
Յեւ անցյալի մե՛ղմ թանկագին հուշեր
Իմ աղոտ մտքում կը հառնեն կրկին:

Իսկ յերբ զենիթից կ'անցնի լուսընկառ,
Յեւ լուսաբերի ծագումի ժամին
Սըրինգի ձայնէր հեռվից մեզ կը գան
Ու հե՛զ կը շնչե այգի դով քամին,—

Դու հրաժեշտ կը տաս: Ստվերըդ աննըշմար
կը լուծվի դժգնող կիսախավարում:
Յեւ մենա՛կ եմ յես. դարձյա՛լ ինձ համար
Չը կա ըստիմանք այս ցավ—աշխարհում...

ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԻՆ

Անքուն գիշերներ, վշտից գալարված,
Մենք չարչարվեցինք կսկիծ—ցավերից.
Սարսափ տիրեց մեզ—չորս կողմից լարված՝
Սե՛վ փորձաքով լի՝ ցնցող դավերից:

Անքուն գիշերներ խաչի բեռան տակ
Կորո՛վ ըղձացինք չ՛ընկնելու համար.
Անցանք փորձության վրհերն անհատակ,
Բայց մեր հո՛ւր—վոգին շողշողաց անմար:

Անքուն գիշերներ մահե՛ր սգացինք—
Յե՛վ նըսեմացավ աստղը մեր հույսի...
Ո՛ր, դա՛ռն վիճակ. հերի՛ք տոկացինք.
Դե՛հ, վառի՛ր պայծառ բոցն արշալույսի...

ԽԱՎԱՐԻ ՄԵՋ

Գիշեր ե, խավա՛ր: Ըզգու՛յշ կաց, ընկեր.
Թանձր զանգվածով մըշուշն ե լողում.
Սուլում ե քամին անալի երգեր:
Ըզգու՛յշ. վոսոխի դավերն են սողում:

Մեր շուրջն — արհավիրք: Ըզգա՛ստ, անձանձի՛ր
Հսկիր, վոր հանկարծ չոստնե չար վոգին.
Հանգչող խարույկի թույլ բոցն արծարծի՛ր —
Թող յետ — յետ քաշվի մութն անեղագին:

Յեւ թող կաղկանձեն գայլերն արյունռուշտ՝
Սուր ժանիքների խիստ կըրճըտոցով. —
Ծաւով ե նըրանց վորովայնն անկուշտ
Մեր սրտի հյութին՝ լի կյանքի բոցով:

Խնչպես հի՛վանդի տագնապի ցնորք՝
Ձի՛ տեւի յերկար այդ խավարն անհույս:
Թող քամին յերգե մեզ մահվա՛ն որորք —
Մենք կը դիմանա՛նք մինչեւ արշալույս:

Բայց ըզգո՛ւյշ, ընկեր: Դեռ մու՛թ ե, խավա՛ր. }
Մահե՛րգ — վոռնում դիվահար քամին.
Ըզգու՛յշ, վոր հանկարծ չ՝առնե՛ մեզ ավար
Մեր արյունաբբու՛ վոսո՛խ թըշնամին...

ԱՍՏԵՂԱԹԱՓ

Այն գիշերը... Ո՛ւհ... Լի զարհուրանքով՝
Հայացքն ամենքի յերկինք սեվեովեց.
Պոկվեցին սրտերն անտես կապանքով
Յեվ սոսկումի մեջ ձայն, շշուկ լռեց:

Այնտեղ՝ կամարում՝ յեռաշերտ ամպեր
Կե՛ս եյին լինում, ծերպեր բաց անում,
Աստղե՛ր ցույց տալիս, վորոնք ահաբեր՝
Գծե՛ր թողնելով՝ վայր եյին ընկնում:

Յեվ սոսկումի մեջ՝ աղի՛ արցունքով
Լա՛ց եյին լինում բյուրավոր մարդիկ,
Ուշերով տարված ցնցո՛ղ բարձունքով,
Ահաբեկվելով ել ավել սաստիկ:

Յեվ քանի՛ սրտեր պայթեցին ցավից,
Անգոր տոկալու լարված տրոփյունի:
Քանի՛ մարդ ցնդեց, յերբ մուլթ հարավից
Թուխպերը բացին յերկինքն արյունի...

Սեվ զարհուրանքի կուռ կապանքներում
Զուր փափագեցին մարդիկ արշալույս.
Վառ աստղերն ընկա՛ն... Մթնե՛ց յեթերում...
Խավա՛րը բազմեց — մահացու՛, անհույ՛ս...

Զ Ա Ն Գ Ը

Լեզվակի ուժգին, հըզոր հարվածով
Թընդում եր անդուլ դողանջը զանգի,
Ըզգայուն արտեր տոչորում լացով,
Աչքի դեմ ցցում վոգին վտանգի:

Զընդում եր նա ձայնով համասփյուն՝
Վըշտի և արյան ծովերի յերկրից.
Լըռում եր վըտակ, նըվաղում զեփյուն
Նրա դառնագին վորոտ--յերգերից:

Այն նըվագներում կուտակ առ կուտակ
Հոսա՛նքն եր լողում տառապանքների,
Լուծի, բոնության հավերժ ճնշման տակ
Հորդացած, փրփրած արտասունքների:

Յեվ կանչում եր նա դեպի ահեղ մարտ.—
«Կովի՛ր արնածուծ, նենգ, վաստի դեմ.
Հաղթի՛ր, կամ ընկիր ըմբո՛տ ու հըպա՛րտ,—
Հերոսի՛ նըման՝ անհա՛շտ, խրոխտադեմ»...

Մերթ հեծկտալով, մերթ վորոտալով,
Այն զանգն եր հընչում մըշուշում անշող,
Հարվա՛ծ հարվածի յետեվից տալով,—
Դողանջով ահե՛ղ, սե՛վ վըտանգ գուժող...

* * *

Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, անվեհե՛ր գինվոր
Հովհ. Հովհաննիսյան

Յեթե դու լեռն ի վե՛ր վորոշեցիր բարձրանալ,
Ձը փոխե՛ս քո ճամբան հառա՛ջ գնա անյերկմի՛ս
Յեվ յեթե բարձունքում մեզն ըսկաե թանձրանալ,
Ձը դողա՛ս. քեզ ի՛նչ փուլթ—ցածո՛ւմ մնաց
թշնամիդ:

Ու յետեվ չը նայե՛ս, թե չե սորսափն անդուդի
Թիկունքիդ կը զգացնե գահավիժող սե՛վ թեվեր:
Յե՛վ նայիր, հզոր կաց, հե՛յ, պանծալի քաջորդի,
Անլըքում մագլցիր դեպի կատար՝ դեպի վեր:

Յեվ հոգ չե՛, թե այնտեղ ընկնես անդոր,
ուժաքամ.—

Կուսական բարձունքի թարմ, կենսաբեր շնչերից
Անտահման ույժ կ'առնես, յեվ կը նայե՛ս
մի անգամ

Միգապաա աշխարհին՝ ճնշված կյանքի խաչերից:

Յեվ այնտեղ՝ դագաթին՝ ուրախալի հանգստում
Աշխարհի վարակիչ, թունոտ հեվքից հեռացած՝
Դու կը զգաս հոգուդ մեջ հրճվանք ու խինդ
անպատում

Յեվ յերբե՛ք չես իջնի պայծառ հոգով դեպի
ցած...

* * *

Դու այս գիշեր քուն չը լինե՛ս.
Գուցե հանկարծ վազե՛վազ
Հասնի գուժկան, կանչե՛ յե՛վ քե՛զ—
Ու ոգնութ՛յա՛ն դու գընա՛ս:

Մի՛ մոռանար, վոր մեզ վաղո՛ւց
Ձե լուսանում շողուն ո՛ր.—
Մենք՝ տանելով կյանք ծանրալուծ՝
Վոչ տե՛ղ ռենք, վոչ անդո՛րր...

Արթո՛ւն մնա. դո՛ւրս յեկ, շըջե՛.
Գուցե՛ վերքից ուժաքամ՝
Անդոր ձայնով մեկը կանչե.
«Փրկի՛ր, ընկե՛ր, բարեկա՛մ»:

Պատրաստ յեղիր ամե՛ն ճամբի—
Դժվա՛ր, խավա՛ր ու զաղի՛ր.
Թռի՛ր՝ ինչպես ըստվերն ամպի
Հենց կոչ լսես. «ո՛, հասի՛ր»:

* * *

Յերբ վհատության քայքայիչ վոգին
Մեր սրտերի մեջ բույն դնե ըզգուշ,
Շնորհի՛ր մեզ, ո՛ր բաղդ, այնպիսի՛ մի ուշ,
Վոր կարողանանք ներհակ հոսանքին
Դիմադրել ուժգին։

Յերբ մրրիկների պարը վորոտա,
Յերկինքը ծածկվի սրգաթույր քողով, —
Մեր աստղը վառի՛ր հուսափա՛յլ շողով,
Վոր դեպի սուրբ գործ ամեն մարդ յերթա
Ազատ, անշղթա։


Ու յերբ զոհ գնանք վեհ ուխտի սիրուն,
Մեր հետնորդների քաջ սրտերի մեջ,
Դու պայծա՛ռ վառի՛ր այն կըրակն անշեջ,
Վոր մեր գոյության վոգին աննըկուն
Պահպանեց տոկո՛ւն...

* * *

Ընկե՛ր իմ, յեղբայր, լոկ դո՛ւ՝ սըրտացա՛վ՝
Ինձ դա՛ռն որերիս ոգնության հասար,
Քեզնի՛ց իմ վոգին մերթ թափ ըստացավ
Կյանքի կըռվի մեջ՝ խո՛ւ, անհավասա՛ր:

Սավարում՝ մինչ այժմ՝ մերթ ձայնով հընչուն
Կանչում եիր ինձ յեւ ձեռք կարկառում, —
Յեւ լի՛ տանջանքով, անխուսափ իմ չուն՝
Գեթ մի պահ՝ այնքան չե՛ր ինձ չարչարում:

Յեւ այսոր՝ նորի՛ց քեզնից ույժ առած,
Շնորհակալ սրտիս խինդ եմ քեզ ձոնում,
Յեւ դարձեալ՝ վոգուս ույժերը լարած՝
Տեսնում եմ շողեր մութ հորիզոնում...



Կըրակն այս գիշեր վա՛ռ պահենք, ընկեր.
Սեւ արհավիրքի յեւ խորունկ ահի
Շունչով ե հեւում հողմը ամենի
Ու վռնում թաղման սրգալի յերգեր:

Մեր դուռը, գուցե, այսո՛ր ել խփեն,
Նվաղած ձայնով աղերսեն հանգիստ:
Խավարը դրսում շա՛տ ե խորանիստ.
Շատե՛րն այս գիշեր պիտի խարխաւին...

Կա՛ց. հեռվից վտարի ձայներ են գալիս...
Լսո՞ւմ ես՝ հնչեց զսպած հեկեկանք,
Սրտի խորքերից թռավ հառաչանք.
Յեւ հողմը մեկտեղ վռնում ե, լալիս...

Խավարի առաջ դուռն ենք բաց անում
Ու կանչում շեմքից.—հե՛րս մըտիր, յեղբայր.
Արի՛՝ ամոքենք քո վիշտը անծայր.
Թող պնդվի վոգիդ մեր ոթեւանում...

Հ Տ Պ Ի Տ Ի Ն

Յես գիտե՛մ քո հոգին, ո՛ր հտալիտ...
Խնդացրո՛ւ տոնորյա ամբոխին.
Յերեսիդ միշտ ծիծաղ ու ժպիտ՝
Դու ասա՝ ինչ վոր գա քո գլխին:

Խեղճ հտալիտ. ձեվացի՛ր ու կեղծի՛ր:
Թող ամբոխն՝ անսալով քո խոսքին՝
Ծիծաղե, քեզ դիտե անձանձիր
Յեվ թափե քո առաջ իր վոսկին:

Թող հոգիդ ցա՛վ, կսկի՛ծ միշտ կրե
Ու՝ ջարդված՝ գթությո՛ւն մրմնջա, —
Խլացրո՛ւ դու նրան. թող լռե՛. —
Ծիծաղի՛ր, խեղճ հտալիտ, քրքջա՛:

Հարազատ եյակներ դու թաղիր.
Բախտն անգութ թող իսպա՛ռ քեզ քանդե,
Բայց դարձյալ խնդացրո՛ւ, ծիծաղի՛ր,
Քրքիջո՛վ խեղճ հոգիդ ավանդե...

ԱՐԾՎԻ ՄԱՀԸ

Վըսեմ այցելուն հավերժ լեռների—
Արծի՛փն եր ճախրում յեթերում լազվարթ
Յեւ բարձունքների սեգ ու վիթխարի
Հըմայիչ փառքով բազմո՞ւմ եր հըպարտ:

Բայց նենգ վորոտի գնդակն անըզգա
Վերջ դրեց հանկարծ նըրա ճախրանքին—
Վորպես տապալիած հոյակապ հըսկա՝
Նա հավե՛տ թողեց բարձունքը անգին:

Յեւ ջարդված թեւով, արյունաշաղաղ,
Մի ժայռի վըրա ընկավ կիսաշունչ:
Աչքն ուղղեց դեպի յերկինքը խաղաղ
Ու յերկա՛ր, յերկա՛ր նայեց լուռ ու մունջ:

Յեւ մղձավանջոտ վերջին տաճնապում,
Վողբա՛ց իր ազատ կյանքը բարձունքի,
Իսկ արփին թմրիչ շողք եր թոթափում
Յերբ ժայռն եր թըջում կաթիլն արցունքի...

* * *

Vae infelicibus

Գրնա՛, նի՛ստ ափին ու՛ վշտակալած՝
Կույր բախտիդ վըրա տնըսփո՛ւի դու լա՛ց.
Փրփուր—ջրի հետ արցո՛ւնքդ խառնիր
Յեւ վզո՛վք կարդա աշխարհին նանիր:

Յե՛լ սարի գագաթն ու ազատ քամուն
Շանթ—խոսքով պատմիր կըսկիծըդ անհուն,—
Լուրը կը թռչի աշխարհի՛ց աշխարհ,
Բայց վիշտդ դարձյա՛լ կը մընա վիթխար:

Ձոր անապատի սմբած ժայռերին
Ցույց տուր հեք սրտիդ խոցերը խորին:—
Լեզո՛ւ կը ստանան յեւ չե՛ն դիմանա.
Նրանք կը կանչեն—մե՛կը չ'իմանա:

Յեւ աշուհեւեւ մի՛ խորհիր յերկար.
Դիմացդ միայն մոխիր ե յեւ քար.
Թե կ'ուզես ապրե՛լ—տոկա՛, մարտընչի՛ր,
Թե մեռնե՛լ կ'ուզես—ժա՛մ առաջ կորչի՛ր...

Ե. ՄԱՀՏԵՍՅԱՆԻ ՆԿԱՐԻ ԱՌԱՋ

Սե'վ, մըռա'յլ ամպեր յերկինքն են գոցել.
Յեռու'մ ե Պոնտոսն, ամենի ձայնո'ւմ.
Ծանըր կոհակներ սարե'ր են դարձել,
Ահե'ղ պարի մեջ՝ իրար են անցնում:

Կռծում են նըրանք ժայռը յեզերքի,
Փըրփուրով ծածկում դեմքը տարերքի.
Մըռայլ ե իջնում վո'ղջ ծովի վըրա
Յեվ թափ ե առնում շտորմը աշկարա'...

Ա Շ Ո Ւ Ղ Ը

Սարալանջին կպած գլուղի
Մի բաց բակից ծուռ ու մուռ
Սազն եր հնչում հայ աշուղի—
Մելամաղձո՛ւ ու տխու՛ր:

Բունեղ կաղնու տակին նստած՝
Յերգ եր ասում մի աշուղ.
Ամբոխը՝ լուռ, շուրջը պատած՝
Լսում նըվազ սրտաբուխ:

Սազն եր խոսում, սազը լալիս,
Աշուղն երգում ցավ ու դարդ.
Հընչում արժան գովք անելիս
Կորովաձայն ու հըպարտ:

Յեվ այն երգում ամեն մի ձայն
Քա՛ղցր եր, քնքու՛յշ, հոգեպո՛ւփ.
Խումբն՝ ակնապիշ ու լռելյայն՝
Ուշ եր դընում սրտատրոփ:

Աշուղն, անկարծ՝ յերգը փոխեց,
Հնչեց մի շեշտ վըշտահեղ,—
Թե ձորն ինչպես արյուն կոխեց,
Հուրը լալից տուն ու տեղ՝

Ինչպես լեռներն ալ կապեցին.
Հանուր սուգով վիթխարի
Հոնգուր—հոնգուր արտասվեցին
Լուռ կամարներն այրերի:

Ու նըվագում, յերգում եր նա
Սրտի խորքից ցավագին,
Այնպես, Վոր սիրտ չեր դիմանա
Նրա հեծծուն նըվագին:

Ամբոխի հետ ինքն ել՝ զապած՝
Լալիս եր նա կամացուկ
Յեվ լարերին խփում հուզված,
Յերգում տըխո՛ւր, սրտանձո՛ւկ...

Յ Ե Ր Ա Ձ Ա Ն Ք

Միրելի բրոջս յիշատակին

Նորից կը տիրե հրաշագեղ գարուն,
կը ժըպտան զվարթ ծաղիկ ու արոտ,
Անուշակ կ'երգե քչքչան առուն,—
Յեվ յես քեզ կը գամ՝ քո շիրմի՛ն կարոտ:

Յես քեզ ձայն կը տամ լուսնյակ գիշերին.
Դու իբրեւ ըստվեր դուրս կը գաս թըմբից,
Թալկադեմ ինձ մոտ կը նստես լըռին,
Իբրեւ Գերահարս—անմեղ ու անբիծ:

Դու դժգոհությամբ ինձ կը կշտամբես,
Որ քեզ մոռացա, մե՛ն—մենակ թողի.
Կ'ասես. «Յե՛կ ինձ մոտ. ա՛խ, յե՛կ վերջապես,
Որ այնպես չը զգամ ճշումը հողի»:

Հետո կը պատմես մինչեւ ուշ գիշեր՝
Ինչպե՛ս ապրեցինք այս պերճ յեղերքին.
Յեւ անցյալի մե՛ղմ թանկագին հուշեր
Իմ աղոտ մտքում կը հառնեն կրկին:

Իսկ յերբ գենիթից կ'անցնի լուսընկան,
Յեւ լուսաբերի ծագումի ժամին
Սըրինգի ձայնը հեռվից մեզ կը գան
Ու հե՛զ կը շնչե այգի դով քամին,—

Դու հրաժեշտ կը տաս: Ստվերըդ աննըշմար
կը լուծվի դժգնող կիսախավարում:
Յեւ մենա՛կ եմ յես. դարձյա՛լ ինձ համար
Չը կա ըստփանք այս ցավ—աշխարհում...

ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԻՆ

Անքուն գիշերներ, վշտից գալարված,
Մենք չարչարվեցինք կսկիծ—ցավերից.
Սարսափ տիրեց մեզ—չորս կողմից լարված՝
Սե՛վ փորձանքով լի՝ ցնցող դավերից:

Անքուն գիշերներ խաչի բեռան տակ
Կորո՛վ ըղձացինք չ՛ընկնելու համար.
Անցանք փորձության վրհերն անհատակ,
Բայց մեր հո՛ւր—վոգին շողշողաց անմար:

Անքուն գիշերներ մահե՛ր սգացինք—
Յե՛վ նըսեմացավ աստղը մեր հույսի...
Ո՛ր, դա՛ռն վիճակ. հերի՛ք տոկացինք.
Դե՛հ, վառիւր պայծառ բոցն արշալույսի...

ԽԱՎԱՐԻ ՄԵՋ

Գիշեր ե, խավա՛ր: Ըզգու՛յշ կաց, ընկեր.
Թանձր զանգվածով մըշուշն ե լողում.
Սուլում ե քամին անալի երգեր:
Ըզգու՛յշ. վոսոխի դավերն են սողում:

Մեր շուրջն — արհավիրք: Ըզգա՛ստ, անձանձի՛ր
Հսկիր, վոր հանկարծ չոստենե չար վոգին.
Հանգչող խարույկի թույլ բոցն արծարծի՛ր —
Թող յետ — յետ քաշվի մութն անեղագին:

Յեվ թող կաղկանձեն դայլերն արյունուշտ՝
Սուր ժանիքների խիստ կըրճըտոցով. —
Ծանրավ ե նըրանց վորովայնն անկուշտ
Մեր սրտի հյութին՝ լի կյանքի բոցով:

Խնչպես հի՛վանդի տագնապի ցնորք՝
Չի՛ տեվի յերկար այդ խավարն անհույս:
Թող քամին յերգե մեզ մահվա՛ն որորք —
Մենք կը դիմանա՛նք մինչեվ արշալույս:

Բայց ըզգո՛ւյշ, ընկեր: Դեռ մու՛թ ե, խավա՛ր.]
Մահե՛րդ — վոռնում դիվահար քամին.
Ըզգու՛յշ, վոր հանկարծ չ՝առնե՛ մեզ ավար
Մեր արյունաբբու՛ վոսոխ թըշնամին...

ԱՍՏԵՂԱԹԱՓ

Այն գիշերը... Ո՛ւհ... Լի զարհուրանքով՝
Հայացքն ամենքի յերկինք սեվեովեց.
Պոկվեցին սրտերն անտես կապանքով
Յեւ սոսկումի մեջ ձայն, շշուկ լռեց:

Այնտեղ՝ կամարում՝ յեռաշերտ ամպեր
Կե՛ս եյին լինում, ծերպեր բաց անում,
Աստղեր ցույց տալիս, վորոնք հաբեր՝
Գծե՛ր թողնելով՝ վայր եյին ընկնում:

Յեւ սոսկումի մեջ՝ աղի՝ արցունքով
Լա՛ց եյին լինում բյուրավոր մարդիկ,
Ուշերով տարված ցնցո՛ղ բարձունքով,
Ահաբեկվելով ել ավել սաստիկ:

Յեւ քանի՛ սրտեր պայթեցին ցավից,
Անզոր տոկալու լարված տրոփյունի:
Քանի՛ մարդ ցնդեց, յերբ մութ հարավից
Թուխպերը բացին յերկինքն արյունի...

Սեւ զարհուրանքի կուռ կապանքներում
Զուր փափագեցին մարդիկ արշալույս.
Վառ աստղերն ընկա՛ն... Մթնե՛ց յեթերում...
Խավա՛րը բազմեց — մահացու՛, անհույ՛ս...

Զ Ա Ն Գ Ը

Լեզվակի ուժգին, հըզոր հարվածով
Թընդում եր անդուլ դողանջը զանգի,
Ըզգայուն արտեր տոչորում լացով,
Աչքի դեմ ցցում վոգին վտանգի:

Զրընգում եր նա ձայնով համասփյուռ՝
Վըշտի և արյան ծովերի յերկրից.
Լըռում եր վըտակ, նըվաղում զեփյուռ
Նրա դառնագին վորոտ--յերգերից:

Այն նըվագներում կուտակ առ կուտակ
Հոսանքն եր լողում տառապանքների,
Լուծի, բոնության հավերժ ճնշման տակ
Հորդացած, փրփրած արտասուկների:

Յեվ կանչում եր նա դեպի ահեղ մարտ.—
«Կուլի՛ր արնածուծ, նենգ, վաստի դեմ.
Հողթ՛իր, կամ ընկիր ըմբո՛ւտ ու հըպա՛րտ,—
Հերոսի՛ նըման՝ անհա՛շտ, խրոխտադե՛մ»...

Մերթ հեծկտալով, մերթ վորոտալով,
Այն զանգն եր հընչում մըշուշում անշող,
Հարվա՛ծ հաղվածի յետեվից տալով,—
Ղողանջով՝ ահե՛ղ, սե՛վ վըտանգ գուժող...

* * *

Դու այս գիշեր քուն չը լինե՛ս.
Գուցե հանկարծ վազե՛վազ
Հասնի գուժկան, կանչե՛ր յե՛վ քե՛զ—
Ու ոգնութ՛յա՛ն դու գընա՛ս:

Մի՛ մոռանար, վոր մեզ վաղո՛ւց
Ձե լուսանում շողուն ուր.—
Մենք՝ տանելով կյանք ծանրալուծ՝
Վոչ տե՛ղ ունենք, վոչ անդո՛րր...

Արթո՛ւն մնա. դո՛ւրս յեկ, շըջե՛.
Գուցե՛ վերքից ուժաքամ՝
Անդոր ձայնով մեկը կանչե.
«Փրկի՛ր, ընկե՛ր, բարեկա՛մ»:

Պատրաստ յեղիր ամե՛ն ճամբի—
Դժվա՛ր, խավա՛ր ու զաղի՛ր.
Թռի՛ր՝ ինչպես ըստվերն ամպի
Հենց կոչ լսես. «ո՛, հասի՛ր»:

* * *

Յերբ վհատության քայքայիչ վոգին
Մեր սրտերի մեջ բույն դնե ըզգույշ,
Շնորհի՛ր մեզ, ո՛ր բաղդ, այնպիսի՛ մի ույժ,
Վոր կարողանանք ներհակ հոսանքին
Դիմադրել ուժգին։

Յերբ մրրիկների պարը վորոտա,
Յերկինքը ծածկվի սրգաթույր քողով, —
Մեր աստղը վառի՛ր հուսափա՛յլ շողով,
Վոր դեպի սուրբ գործ ամեն մարդ յերթա
Ազատ, անշղթա։

Ու յերբ զոհ գնանք վեհ ուխտի սիրուն,
Մեր հետնորդների քաջ սրտերի մեջ,
Դու պայծա՛ռ վառի՛ր այն կըրակն անշեջ,
Վոր մեր գոյության վոգին աննըկուն
Պահպանեց տոկո՛ւն...

* * *

Ընկե՛ր իմ, յեղբայր, լոկ դո՛ւ՝ սըրտացա՛վ՝
Ինձ դա՛ռն որերիս ոգնության հասար,
Քեզնի՛ց իմ վոգին մերթ թափ ըստացաւ
Կյանքի կըռվի մեջ՝ խո՛ւ, անհավասա՛ր:

Խավարում՝ մինչ այժմ՝ մերթ ձայնով հընչուն
Կանչում եիր ինձ յեւ ձեռք կարկառում, —
Յեւ լի՛ տանջանքով, անխուսափ իմ չուն՝
Գեթ մի պահ՝ այնքան չե՛ր ինձ չարչարում:

Յեւ այսոր՝ նորի՛ց քեզնից ույժ առած,
Շնորհակալ սրտիս խինդ եմ քեզ ձոնում,
Յեւ դարձեալ՝ վոգուս ույժերը լարած՝
Տեսնում եմ շողեր մութ հորիզոնում...

* * *

Կըրակն այս գիշեր վա՛ռ պահենք, ընկեր.
Սեւ արհավիրքի յեւ խորունկ ահի
Շունչով ե հեւում հողմը ամենի
Ու վռնում թաղման սըգալի յերգեր:

Մեր դուռը, գուցե, այսո՛ր ել խփեն,
Նվաղած ձայնով աղերսեն հանգիստ:
Խավարը դրսում շա՛տ ե խորանիստ.
Շատե՛րն այս գիշեր պիտի խարխափեն...

Կա՛ց. հեռվից վտարի ձայներ են գալիս...
Լսո՞ւմ ես՝ հնչեց զսպած հեկեկանք,
Սրտի խորքերից թռավ հառաչանք.
Յեւ հողմը մեկտեղ վռնում ե, լալիս...

Խավարի առաջ դուռն ենք բաց անում
Ու կանչում շեմքից. — Նե՛րս մըտիւր, յեղբայր.
Արի՛՝ ամոքենք քո վիշտը անծայր.
Թող պնդվի վոգիդ մեր ոթեվանում...

Հ Տ Պ Ի Տ Ի Ն

Յես գիտե՛մ քո հոգին, ո՛հ հտալիտ...
Խնդացրո՛ւ տոնորյա ամբոխին.
Յերեսիդ միշտ ծիծաղ ու ժպիտ՝
Դու ասա՛ ինչ վոր դա քո գլխին:

Խեղճ հտալիտ. ձեվացի՛ր ու կեղծի՛ր:
Թող ամբոխն՝ անսալով քո խոսքին՝
Ծիծաղե, քեզ դիտե անձանձիւր
Յեւ թափե քո առաջ իր վոսկին:

Թող հոգիդ ցա՛վ, կսկի՛ծ միշտ կրե
Ու՛ ջարդված՝ գթությո՛ւն մըմնջա, —
Խլացրո՛ւ դու նրան. թող լռե՛. —
Ծիծաղի՛ր, խեղճ հտալիտ, քրքջա՛:

Հարազատ եյակներ դու թաղիր.
Բախտն անգութ թող իսպա՛ռ քեզ քանդե,
Բայց դարձյալ խնդացրո՛ւ, ծիծաղի՛ր,
Քրքիջո՛վ խեղճ հոգիդ ավանդե...

ԱՐԾՎԻ ՄԱՀԸ

Վըսեմ այցելուն հավերժ լեռների—
Արծի՛փն եր ճախրում յեթերում լազվարթ
Յեւ ըբարձունքների սեգ ու վիթխարի
Հըմայիչ փառքով բաղմում եր հըպարտ:

Բայց նենգ վորոտի գնդակն անըզգա
Վերջ դրեց հանկարծ նըրա ճախրանքին—
Վորպես տապալված հոյակապ հըսկա՝
Նա հավե՛տ թողեց բարձունքը անգին:

Յեւ ջարդված թեւով, արյունաշաղաղ,
Մի ժայռի վըրա ընկավ կիսաշունչ.
Աչքն ուղղեց դեպի յերկինքը խաղաղ
Ու յերկա՛ր, յերկա՛ր նայեց լուռ ու մունջ:

Յեւ մղձավանջոտ վերջին տագնապում,
Վողբա՛ց իր ազատ կյանքը բարձունքի,
Իսկ արփին թմրիչ շողք եր թոթափում
Յերբ ժայռն եր թրջում կաթին արցունքի...

* * *

Vae infelicibus

Գընա՛, նի՛ստ ափին ու՛ վշտակալած՝
Կույր բախտիդ վըրա տնըսփո՛ւի դու լա՛ց.
Փրփուր—ջրի հետ արցո՛ւնքդ խառնիր
Յեւ վզո՛վք կարդա աշխարհին նանիր:

Յե՛ւ սարի գագաթն ու ազատ քամուն
Շանթ—խոսքով պատմիր կըսկիծըդ անհուն,—
Լուրը կը թռչի աշխարհի՛ց աշխարհ,
Բայց վիշտդ դարձյա՛լ կը մընա վիթխար:

Չոր անապատի սմբած ժայռերին
Ցույց տուր հեք սրտիդ խոցերը խորին:—
Լեզո՛ւ կը ստանան յեւ չե՛ն դիմանա.
Նրանք կը կանչեն—մե՛կը չ՛իմանա:

Յեւ յնուհետեւ մի՛ խորհիր յերկար.
Դիմացդ միայն մոխիր ե յեւ քար.
Թե կ'ուզես ապրե՛լ—տուկա՛, մարտընչի՛ր,
Թե մեռնե՛լ կ'ուզես—ժա՛մ առաջ կորչի՛ր...

Ե. ՄԱՀՏԵՍՅԱՆԻ ՆԿԱՐԻ ԱՌԱՋ

Սե'վ, մըռա'յլ ամպեր յերկինքն են գոցել.
Յեռու'մ ե Պոնտոսն, ամեհի ձայնո'ւմ.
Ծանըր կոհակներ սարե'ր են դարձել,
Ահե'ղ պարի մեջ՝ իրար են անցնում:

Կոծում են նըրանք ժայռը յեզերքի,
Փըրփուրով ծածկում դեմքը տարերքի.
Մըռայլ ե իջնում վո'ղջ ծովի վըրա
Յեվ թափ ե առնում շտորմը աշկարա'...

Ա Շ Ո Ի Ղ Ը

Սարալանջին կպած գլուղի
Մի բաց բակից ծուռ ու մուռ
Սազն եր հնչում հայ աշուղի—
Մելամաղձո՛տ ու տխու՛ր:

Բունեղ կաղնու տակին նստած՝
Յերգ եր ասում մի աշուղ.
Ամբոխը՝ լուռ, շուրջը պատած՝
Լսում նըվագ սրտաբուխ:

Սազն եր խոսում, սազը լալիս,
Աշուղն երգում ցավ ու դարդ.
Հընչում արժան գուլք անելիս
Կորովաձայն ու հըպարտ:

Յեվ այն երգում ամեն մի ձայն
Քա՛ղցր եր, քնքու՛յշ, հոգեափո՛փ.
Խումբն՝ ակնապիշ ու լռելյայն՝
Ուշ եր դընում սրտատրոփ:

Աշուղն, անկարծ՝ յերգը փոխեց,
Հնչեց մի շեշտ վըշտահեղ,—
Թե ձորն ինչպես արյուն կոխեց,
Հուրը լափեց տուն ու տեղ՝

Ինչպես լեռներն ալ կապեցին,
Հանուր սուգով վիթխարի
Հոնգուր—հոնգուր արտասովեցին
Լուռ կամարներն այրերի:

Ու նըվագում, յերգում եր նա
Սրտի խորքից ցավագին,
Այնպես, Վոր սիրտ չեր դիմանա
Նրա հեծծուն նըվագին:

Ամբոխի հետ ինքն ել՝ զսպած՝
Լալիս եր նա կամացուկ
Յեւ լարերին խփում հուզված,
Յերգում տըխո՛ւր, սրտանձո՛ւկ...

Յ Ե Ր Ա Ջ Ա Ն Ք

Միրելի քրոջս յիշատակին

Նորից կը տիրե հրաշագեղ գարուն,
կը ժրպտան զվարթ ծաղիկ ու արոտ,
Անուշակ կ'երգե քչքչան առուն,—
Յեվ յես քեզ կը գամ՝ քո շիրմի՛ն կարոտ:

Յես քեզ ձայն կը տամ լուսնյակ գիշերին.
Դու իբրեւ ըստվեր դուրս կը գաս թըմբից,
Թալկադեմ ինձ մոտ կը նստես լըռին,
Իբրեւ Գերահարս—անմեղ ու անբիծ:

Դու դժգոհությամբ ինձ կը կշտամբես,
Որ քեզ մոռացա, մե՛ն—մենակ թողի.
Կ'ասես. «Յե՛կ ինձ մոտ. ա՛խ, յե՛կ վերջապես,
Որ այնպես չը զգամ ճշդումը հողի»:

Հետո կը պատմես մինչեւ ուշ գիշեր՝
Ինչպե՛ս ապրեցինք այս պերճ յեղերքին.
Յեւ անցյալի մե՛ղմ թանկագին հուշեր
Իմ աղոտ մտքում կը հառնեն կրկին:

Իսկ յերբ գենիթից կ'անցնի լուսընկա՛ն,
Յեւ լուսաբերի ծագումի ժամին
Սըրինգի ձայնը հեռվից մեզ կը գան
Ու հե՛զ կը շնչե այգի դով քամին,—

Դու հրաժեշտ կը տաս: Ստվերըդ աննըշմար
կը լուծվի դժգնող կիսախավարում:
Յեւ մենա՛կ եմ յես. դարձյա՛լ ինձ համար
Չը կա ըստիմանք այս ցավ—աշխարհում...

ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԻՆ

Անքուն գիշերներ, վշտից գալարված,
Մենք չարչարվեցինք կսկիծ—ցավերից.
Սարսափ տիրեց մեզ—չորս կողմից լարված,
Սե՛վ փորձանքով լի՝ ցնցող դավերից:

Անքուն գիշերներ խաչի բեռան տակ
Կորո՛վ ըղձացինք չ՛ընկնելու համար.
Անցանք փորձության վրհերն թնհատակ,
Բայց մեր հո՛ւր—վոգին շողշողաց անմար:

Անքուն գիշերներ մահե՛ր սգացինք—
Յե՛վ նըսեմացավ աստղը մեր հույսի...
Ո՛ր, դա՛ռն վիճակ. հերի՛ք տոկացինք.
Դե՛հ, վառիւր պայծառ բոցն արշալույսի...

ԽԱՎԱՐԻ ՄԵՋ

Գիշեր ե, խավար: Ըզգու՛յշ կաց, ընկեր.
Թանձր զանգվածով մըշուշն ե լողում.
Սուլում ե քամին ասալի երգեր:
Ըզգու՛յշ. վոսոխի դավերն են սողում:

Մեր շուրջն — արհավի՛րք: Ըզգա՛ստ, անձանձի՛ր
Հսկիր, վոր հանկարծ չոստնե չար վոգին.
Հանգչող խարույկի թույլ բոցն արծարծի՛ր —
Թող յետ — յետ քաշվի մութն անեղագին:

Յեվ թող կողկանձեն գայլերն արյունուշտ՝
Սուր ժանիքների խիստ կըրճըտոցով. —
Ծարավ ե նըրանց վորովայնն անկուշտ
Մեր սրտի հյութին՝ լի կյանքի բոցով:

Խնչպես հի՛վանդի տագնապի ցնորք՝
Ձի՛ տեվի յերկար այդ խավարն անհույս:
Թող քամին յերգե մեզ մահվա՛ն որորք —
Մենք կը դիմանա՛նք մինչեվ արշալույս:

Բայց ըզգու՛յշ, ընկեր: Դեռ մութ ե, խավար. }
Մահե՛րգ — վոռնում դիվահար քամին.
Ըզգու՛յշ, վոր հանկարծ չ՝առնե՛ մեզ ավար
Մեր արյունաբոլ՝ վոսո՛խ թըշնամին...

ԱՍՏԵՂԱԹԱՓ

Այն գիշերը... Ո՛ւհ... Լի զարհուրանքով՝
Հայացքն ամենքի յերկինք սեվեովեց.
Պոկվեցին սրտերն անտես կապանքով
Յեւ սոսկումի մեջ ձայն, շշուկ լռեց:

Այնտեղ՝ կամարում՝ յեռաշերտ ամպեր
Կե՛ս եյին լինում, ծերպեր բաց անում,
Աստղեր՝ ցույց տալիս, վորոնք ահաբեր՝
Գծե՛ր թողնելով՝ վայր եյին ընկնում:

Յեւ սոսկումի մեջ՝ աղի՝ արցունքով
Լա՛ց եյին լինում բյուրավոր մարդիկ,
Ուշերով տարված ցնցո՛ղ բարձունքով,
Ահաբեկվելով ել ավել սաստիկ:

Յեւ քանի՛ սրտեր պայթեցին ցավից,
Անգոր տոկալու լարված տրոփյունի:
Քանի՛ մարդ ցնդեց, յերբ մութ հարավից
Թուխպերը բացին յերկինքն արյունի...

Սեւ զարհուրանքի կուռ կապանքներում
Զուր փափագեցին մարդիկ արշալույս.
Վառ աստղերն ընկա՛ն... Մթնե՛ց յեթերում...
Խավա՛րը բազմեց — մահացու՛, անհույ՛ս...

Զ Ա Ն Գ Ը

Լեզվակի ուժգին, հըզոր հարվածով
Թընգում եր անդուլ դողանջը զանգի,
Ըզգայուն սրտեր տոչորում լացով,
Աչքի դեմ ցցում վոգին վտանգի:

Զըրնգում եր նա ձայնով համասփյուռ՝
Վըշտի և արյան ծովերի յերկրից.
Լըռում եր վըտակ, նըվաղում զեփյուռ
Նրա դառնագին վորոտ--յերգերից:

Այն նըվագներում կուտակ առ կուտակ
Հոսա՛նքն եր լողում տառապանքների,
Լուծի, բռնության հավերժ ճնշման տակ
Հորդացած, փրփրած տրտասունքների:

Յեվ կանչում եր նա դեպի ահեղ մարտ.—
«Կովի՛ր արնածուծ, նենգ, վաստխի դեմ.
Հողթ՛իր, կամ ընկիր ըմբո՛ստ ու հըպա՛րտ,—
Հերոսի՛ նըման՝ անհա՛շտ, խրոխտադե՛մ»...

Մերթ հեծկտալով, մերթ վորոտալով,
Այն զանգն եր հընչում մըշուշում անշող,
Հարվա՛ծ հաղվածի յետեվից տալով,—
Ղողանջով՝ ահե՛ղ, սե՛վ վըտանգ գուժող...

* * *

Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, անվեհե՛ր զինվոր
Հովն. Հովհաննիսյան

Յեթե դու լեռն ի վե՛ր վորոշեցիր բարձրանալ,
Զը փոխե՛ս քո ճամբան հառա՛ջ գնա անյերկմիս
Յե՛վ յեթե բարձունքում մեզն ըսկսե թանձրանալ,
Զը դողա՛ս. քեզ ի՛նչ փուլթ—ցածո՛ւմ մնաց
Թշնամիդ:

Ու յետե՛վ չը նայե՛ս, թե չե սարսափն անդուդի
Թիկունքիդ կը զգացնե գահավիժող սե՛վ թե՛վեր:
Յե՛վ նայիր, հզոր կաց, հե՛յ, պանծալի քաջորդի,
Անլըքում մագլցիր դեպի կատար՝ դեպի վեր:

Յե՛վ հոգ չե՛, թե այնտեղ ընկնես անզոր,
ուժաքամ.—
Կուսական բարձունքի թարմ, կենտաբեր շնչերից
Անտահման ույժ կ'առնես, յե՛վ կը նայես
մի անգամ
Միգապատ աշխարհին՝ ճնշված կյանքի խաչերից:

Յե՛վ այնտեղ՝ գագաթին՝ ուրախալի հանգստում
Աշխարհի վարակիչ, թունոտ հե՛վքից հեռացած՝
Դու կը զգաս հոգուդ մեջ հրճվանք ու խինդ
անպատում
Յե՛վ յերբե՛ք չես իջնի պայծառ հոգով դեպի
ցած...

* * *

Դու այս գիշեր քուն չը լինե՛ս.
Դուցե հանկարծ վազե՛վազ
Հասնի գուժկան, կանչե՛ յե՛վ քե՛զ—
Ու ոգնութե՛յա՛ն դու գընա՛ռ:

Մի՛ մոռանար, վոր մեզ վաղո՛ւց
Զե՛ լուսանում շողուն որ.—
Մենք՝ տանելով կյանք ծանրալուծ՝
Վոչ տե՛ղ ունենք, վոչ անդո՛րր...

Արթո՛ւն մնա. դո՛ւրս յեկ, շըջե՛.
Դուցե՛ վերքից ուժաքամ՝
Անդոր ձայնով մեկը կանչե.
«Փրկի՛ր, ընկե՛ր, բարեկա՛մ»:

Պատրաստ յեղիր ամե՛ն ճամբի—
Դժվա՛ր, խավա՛ր ու դադի՛ր.
Թուի՛ր՝ ինչպես ըստվերն ամպի
Հենց կոչ լսես. «ո՛, հասի՛ր»:

* * *

Յերբ վհատության քայքայիչ վոգին
Մեր սրտերի մեջ բույն դնե ըզգույշ,
Շնորհի՛ր մեզ, օ՛ բաղդ, այնպիսի՛ մի ույժ,
Վոր կարողանանք ներհակ հոսանքին
Դիմադրել ուժգին։

Յերբ մրրիկների պարը վորոտա,
Յերկինքը ծածկվի սրգաթույր քողով, —
Մեր աստղը վառի՛ր հուսափա՛յլ շողով,
Վոր դեպի սուրբ գործ ամեն մարդ յերթա
Ազատ, անշղթա։

Ու յերբ զոհ գնանք վեհ ուխտի սիրուն,
Մեր հետնորդների քաջ սրտերի մեջ,
Դու պայծա՛ռ վառի՛ր այն կըրակն անշեջ,
Վոր մեր գոյության վոգին աննըկուն
Պահպանեց տոկո՛ւն...

* * *

Ընկե՛ր իմ, յեղբայր, լոկ դո՛ւ՝ սրբապա՛մ
Ինձ դա՛ռն որերիս ոգնության հասար,
Քեզնի՛ց իմ վոգին մերթ թափ ըստացավ
Կյանքի կըռվի մեջ՝ խո՛ւ, անհավասա՛ր:

Խավարում՝ մինչ այժմ՝ մերթ ձայնով հընչուն
Կանչում եիր ինձ յեմ ձեռք կարկառում,—
Յեմ լի՛ տանջանքով, անխուսափ իմ չուն՝
Գեթ մի պահ՝ այնքան չե՛ր ինձ չարչարում:

Յեմ այսոր՝ նորի՛ց քեզնից ույժ առած,
Շնորհակալ սրտիս խինդ եմ քեզ ձոնում,
Յեմ դարձեալ՝ վոգուս ույժերը լաբած՝
Տեսնում եմ շողեր մութ հորիզոնում...

* * *

Կըրական այս գիշեր վա՛ռ պահենք, ընկեր.
Սեւ արհավիրքի յեւ խորունկ ահի
Շունչով ե հեվում հողմը ամենի
Ու վռնում թաղման սըգալի յերգեր:

Մեր դուռը, գուցե, այսո՛ր ել խփեն,
Նվաղած ձայնով աղերսեն հանգիստ:
Խավարը դրսում շա՛տ ե խորանիստ.
Շատե՛րն այս գիշեր պիտի խարխալեն...

Կա՛ց. հեռվից վոտքի ձայներ են գալիս...
Լսո՞ւմ ես՝ հնչեց զսպած հեկեկանք,
Սրտի խորքերից թռավ հառաչանք.
Յեւ հողմը մեկտեղ վռնում ե, լալիս...

Խավարի առաջ դուռն ենք բաց անում
Ու կանչում շեմքից. — Նե՛րս մըտիր, յեղբայր.
Արի՛ ամոքենք քո վիշտը անծայր.
Թող պնդվի վոգիդ մեր ոթեվանում...

Հ Տ Պ Ի Տ Ի Ն

Յես գիտե՛մ քո հոգին, ո՛հ հտալիտ...
Խնդացրո՛ւ տոնորյա ամբոխին.
Յերեսիդ միշտ ծիծաղ ու ժպիտ՝
Դու ասա՛ ինչ վոր դա քո գլխին:

Խեղճ հտալիտ. ձեւացի՛ր ու կեղծի՛ր:
Թող ամբոխն՝ անսալով քո խոսքին՝
Ծիծաղե, քեզ գիտե անձանձիր
Յեւ թափե քո առաջ իր վոսկին:

Թող հոգիդ ցա՛վ, կսկի՛ծ միշտ կրե
Ու՛ ջարդված՝ գթությո՛ւն մրմնջա,—
Խլացրո՛ւ դու նբան. թող լռե՛.—
Ծիծաղի՛ր, խեղճ հտալիտ, քրքջա՛:

Հարազատ եյակներ դու թաղիր.
Բախտն անգութ թող իսպա՛ռ քեզ քանդե,
Բայց դարձյալ խնդացրո՛ւ, ծիծաղի՛ր,
Քրքիջո՛վ խեղճ հոգիդ ավանդե...

ԱՐԾՎԻ ՄԱՀԸ

Վըսեմ այցելուն հավերժ լեռների—
Արծի՛փն եր ճախրում յեթերում լազվարթ
Յեւ ըարձունքների սեգ ու վիթխարի
Հըմայիչ փառքով բազմում եր հըպարտ:

Բայց նենգ վորոտի գնդակն անըզգա
Վերջ դրեց հանկարծ նըրա ճախրանքին—
Վորպես տապալված հոյակապ հըսկա՝
Նա հավե՛տ թողեց ըարձունքը անգին:

Յեւ ջարդված թեւով, արյունաշաղաղ,
Մի ժայռի վըրա ընկավ կիսաշունչ.
Աչքն ուղղեց դեպի յերկինքը խաղաղ
Ու յերկա՛ր, յերկա՛ր նայեց լուռ ու մունջ:

Յեւ մղձավանջոտ վերջին տագնապում,
Վողբա՛ց իր ազատ կյանքը ըարձունքի,
Իսկ արփին թմրիչ շողք եր թոթափում
Յերբ ժայռն եր թըջում կաթիլն արցունքի...

* * *

Vae infelicibus

Գընա՛, նի՛ստ ափին ու՛ վշտակալած՝
Կույր բախտիդ վըրա տնըսփո՛ւի դու լա՛ց.
Փըվուր—ջրի հետ արցո՛ւնքդ խառնիր
Յեւ վզո՛վք կարդա աշխարհին նանիր:

Յե՛լ սարի գագաթն ու ազատ քամուն
Շանթ—խոսքով պատմիր կըսկիծըդ անհուն,—
Լուրը կը թռչի աշխարհի՛ց աշխարհ,
Բայց վիշտդ դարձյա՛լ կը մընա վիթխար:

Չոր անապատի սմբած ժայռերին
Ցույց տուր հեք սրտիդ խոցերը խորին:—
Լեզո՛ւ կը ստանան յեւ չե՛ն դիմանա.
Նրանք կը կանչեն—մե՛կը չ՛իմանա:

Յեւ աշնունհետեւ մի՛ խորհիր յերկար.
Դիմացդ միայն մոխիր ե յեւ քար.
Թե կ'ուզես ապրե՛լ—տոկա՛, մարտընչի՛ր,
Թե մեռնե՛լ կ'ուզես—ժա՛մ առաջ կորչի՛ր...



ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԵԶ	ՏՈՂ	ՏՊՎԱՆ Ե	ՊԵՏԲ Ե ԼԻՆԻ
8	1 ներքեվից	անշշուղ	անշշուղ
10	3 վերեվից	մութ	մութն
11	6 ներք.	զահավիժեց	զահավիժվեց
12	1 վեր.	Տերվաթափ	Տերեվթափ
29	8 ներք.	անհաս-հասա՛կ — կապույտ	անհաս — հասա՛կ — կապույտ
34	2 վեր.	նայելով	նա յելով
»	2 ներք.	վորոտների	վորորների
38	7 ներք.	ողակի	ողակի
39	2 վեր.	հընչումով	հընչումով
45	4 ներք.	ձայներով	ձայներում
58	8 վեր.	Մահ և	Մահն և
59	7 ներք.	Գաղթին	Գաղթն
60	14 ներք.	հանազատ	հարազատ
68	6 ներք.	յերկավ	յերկար
73	6 վեր.	հատուի	յատուի
74	5 վեր.	զեքանի	զեղանի
76	1 վեր.	պարխպներով	պարտեզներով
85	5 ներք.	նախում	նախում
86	4 ներք.	ժամի,	ժամին,
87	6 ներք.	նավեր	նավերն
88	2 վեր.	դեպի	դեպ
92	2 ներք.	տընքում	տընքում
96	1 վեր.	իբ հիրանում	հիրանում
123	7 ներք.	սեվացած	սեվամած
»	3 ներք.	Քայլն	Փայլն
139	2 վեր.	անուշ	անուշ
142	3 վեր.	ձեռքին.	ձեռին.
144	4 վեր.	հուզված	հուզած
»	Բաց և Թողնված II տունի 3-դ տղը, վորն այսպես և. —		
»	Հանգչել ևք ուզում մեղմ նիրհով փախված. —		
»	3 ներք.	—վաղն—	յե՛վ վաղն—
166	3 ներք.	մահե՛րդ—	մահե՛րդ և
167	3 վեր.	Պոկվեցին	Պրկվեցին
175	3 վեր.	բարձունքների	բարձունքներին
»	5 վեր.	վորտի	վորտողի
189	4 վեր.	ստորերկյա	ստորերկրյա
»	3 ներք.	որահասկան	որհասական
190	8 ներք.	մարդիկը	մարտիկը
191	7 վեր.	նոր՛ց	նորի՛ց
»	2 ներք.	Ձեզ	Յեզ

MEMORANDUM

TO : THE SECRETARY OF THE ARMY

FROM : THE CHIEF OF THE BUREAU OF MILITARY AFFAIRS

SUBJECT: PROPOSED REVISIONS TO THE ARMY REGULATION NO. 1

1. The following are the proposed revisions to the Army Regulation No. 1:

a. The title of the regulation shall be changed from "Army Regulation No. 1" to "Army Regulation No. 1, Revised."

b. The definition of "Army" shall be changed to include "United States Army."

c. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

d. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

e. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

f. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

g. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

h. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

i. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

j. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

k. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

l. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

m. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

n. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

o. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

p. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

q. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

r. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

s. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

t. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

u. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

v. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

w. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

x. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

y. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

z. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

aa. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

ab. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

ac. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

ad. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

ae. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

af. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

ag. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

ah. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

ai. The definition of "Regulation" shall be changed to include "Army Regulation."

ԳԱՍ Հիմնարար գիտ. գրադ.



220025242

[1 p.]

208 R.

9003

II
A 25242